15912

ՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## ԿԿԲ ՅԵՎ ՀՀ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 7-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ

355
2-22

ՅԵՐԵՎԱՆ
1929

2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ. ՄԻԱՑԵ՛Ք

355.23
Z-22

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## ԿԿԲ ՅԵՎ Հ. Հ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 7-ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ

12001

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ
1929
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиот...

23825.60
(11024-53)

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատեպգլխավոր 1811 ր. պատ. 2657 Տիրաժ. 500

# ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

№ 1

Քաղ. Թիֆլիս 19 հունվարի. 1929 թ.

Հայտարարվում են ղեկավարության համար Կովկասյան Կարմրադրոշ Բանակի կուսկազմակերպությունների 7-րդ կոնֆերանսի բանաձևերը.

1) ՀԱՄԿԿ(բ) Անդրկովկասյան Յերկրային Կոմիտեյի զեկուցման առթիվ,

2) ԲԳԿԲ Քաղաքական Վարչության զեկուցման առթիվ,

3) ԿԿԲ Քաղաքական Վարչության զեկուցման առթիվ,

4) ԿԿԲ հրամանատարության զեկուցման առթիվ:

5) ԿԿԲ կուսակցական հանձնաժողովի հաշվետվության առթիվ:

Նշում.—7-րդ կուսկոնֆերանսի կողմից ընտրված՝ ԿԿԲ կուսակցական հանձնաժողովի կազմը:

Բանակի Քաղվարչության պետ՝
ՎԱՍԻԼՅԵՎ.

# Բ Ա Ն Ա Ձ Ե Վ

## ՀԱՄԿ(Բ)Կ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Լսելով և քննելով ընկ. Ելիավայի զեկուցումը, ԿԿԲ 7-րդ կուսկոնֆերանսը Անդրյերկրկոմի քաղաքական գիծը գտնում է ճիշտ և լիովին հավանություն է տալիս նրա ղեկավար պրակտիկ գործունեյությանը:

Անդրյերկրկոմի ղեկավարության ներքո Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները, նրանց թվում նաև Կովկասյան Կարմրադրոշ Բանակինը միահամուռ կերպով պաշտպան կանգնեցին կուսակցության գլխավոր գծին և, չթուլացնելով բոլոր միջոցներով պայքարը տրոցկիզմի մնացորդների դեմ, վճռական պայքար են տարել՝ ներկա շրջանում կուսակցության համար գլխավոր վտանգը հանդիսացող—աջ թեքման և նրա նկատմամբ յեղած հաշտվողականության դեմ:

2. Կոնֆերանսն արձանագրում է ԱԽՍՖՀ ինդուստրացման և գյուղատնտեսության վերելքի բնագավառում ձեռք բերված նշանակալից նվաճումները, վորն ամուր բազա յե



ստեղծում Անդրկովկասյան հանրապետությունների աշխատավոր մասսաների տնտեսական ու կուլտուրական հետագա աճման համար: Այդ հաջողությունները ձեռք են բերված ազգամիջյան խաղաղության ավելի ու ավելի ամրացման և քաղաքի ու գյուղի լայն մասսաների մեջ Կոմկուսակցության ու Խորհրդային իշխանության ղեկավարության և ազդեցության անընդհատ ամրացման պարագայում:

3. Կոնֆերանսը գտնում է, վոր Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների հետագա աշխատանքների պրակտիկայում 15-րդ համագումարի և կուսակցության լենինյան Կենտկոմի պլենումների դիրեկտիվների ավելի լիակատար իրագործման նպատակով, Անդրյերկրկոմին անհրաժեշտ է ուշադրություն կենտրոնացնել հետևյալ հիմնական խնդիրների լուծման վրա.

ա) Պայքարի հետագա ուժեղացում՝ ընդդեմ աջ ոպորտյունիստական թեքման և նրա նկատմամբ յեղած հաշտվողականության բոլոր արտահայտությունների, նույնպես և ընդդեմ տրոցկիզմի և ազգայնական տրամադրությունները վերակենդանացնելու՝ նկատված փորձերի.

բ) Իդեոլոգիական պայքարի ամեն կերպ

ուժեղացում՝ կուլտուրական ճակատի բոլոր բնագավառներում, չթույլատրելով բուրժուական ազգայնական և կրոնական իդեոլոգիայի թափանցումը դպրոցները, դասագրքերը, գրականության մեջ, թատրոնը, կինոն և նպաստելով պրոլետարական ինտելիգենցիայի ավելի լայն կադրեր պատրաստելուն.

գ) ամեն կերպ աջակցելով գյուղատնտեսության ինտենսիֆիկացիային և սոցիալիստական վերակառուցմանը, միաժամանակ ապահովելով դասակարգային գծի կիրառումը գյուղում (բատրակության կազմակերպումն ու կուլտուրական սպասարկումը, սիստեմատիկ աշխատանք չքավորության մեջ, հարկային պրակտիկայի բարելավումը, վարկերի բաշխման սոցիալական ուղղությունը և այլն).

դ) նոր ձեռնարկությունների շինարարության հետ կապված հարցերի բազմակողմանի ուսումնասիրության ու ավելի ծրագրայնության, նույնպես և իրեն՝ շինարարության վրա վերահսկողության՝ ապահովումը.

ե) գոյություն ունեցող ձեռնարկությունների արտադրանքի վորակի հետագա լավացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը և ինքնարժեքի իջեցումը.



զ) պետական ապարատի վճռական մաքրումը՝ բոլոր անհարազատ ու այլասերված տարրերից.

է) ավելի եռանդուն պայքար՝ կուսակցական կազմակերպությունների ներսում եղած բոլոր հիվանդագին երևույթների—հարբեցողության, մասսայից կտրվածության, շովինիզմ հայտաբերելու դեմ և այլն, նկատի ունենալով կուսակցական կազմակերպությունների առաջիկա հիմնական գործը ծավալված կերպով պատրաստվելու անհրաժեշտությունը.

ը) պրոլետարական ինքնաքննադատության հետագա ծավալումը, նպատակ ունենալով արագորեն հայտաբերել և վերացնել պետական ապարատի, կուսակցական ու մասսայական հասարակական կազմակերպությունների աշխատանքներում եղած բյուրոկրատական խեղաթյուրումներն ու թերությունները:

4. Կոնֆերանսը նշում է քաղաքացիական կազմակերպությունների և ԿԿԲ զորամասերի կապի վորոշ ամրացում, վորը նպաստում է բանակի ամբողջ կազմի մարտիկների ինտերնացիոնալ գիտակցությանն ու միաձուլությանը, և անհրաժեշտ է գտնում այդ կապի հետագա բարելավումը՝ նրան ավելի ծրա-

գրային ու մասսայական բնույթ տալու ճանապարհով: Անհրաժեշտ է հասնել՝ Կարմիր բանակի հետ կապի հարցերի ամեն Անդրյերկրկոմի վորոշումների լիակատար իրագման:

5. Կոնֆերանսը բավականությամբ նշում է յերկրի պաշտպանության և բնակչության ռազմականացման գործնական հարցերի նրկատմամբ կուսակցական, խորհրդային և Անդրկովկասի աշխատավորության մասսայական կազմակերպությունների ուշադրության նշանակալից բարձրացումը, վորի մասին պարզ կերպով վկայում եյին հաջողությամբ անցկացված փորձնական զորահավաքը Թիֆլիսում, ոդային-քիմիական փորձնական հարձակումը Բաքվի վրա, նույնպես և մասսայական ռազմական [illegible] և կոմյերիտականների ու պրոֆմիությունների անդամների մասնակցությունը մանյովրաներին: Այդ դրական հիմունքների վրա անհրաժեշտ է՝ կուսակցական, խորհրդային և տնտեսական կազմակերպությունների գծով հասնել ԱԽՍՖՀ պաշտպանունակության հետագա ուժեղացումը ռեյալ կերպով ապահովող միջոցառումների ամբողջ սիստեմի ավելի արագ թափով ծավալմանը: Մասնավորապես անհրաժեշտ է հանրապետական և տե-



ղական կուսկազմակերպությունների կողմից ուժեղացնել ուշադրությունն ու հսկողությունը դեպի Պաշը-Ավիաքիմի աշխատանքները:

6. Ռազմական շինարարությանն աջակցելու բնագավառում Անդրյերկրկոմի առաջ կոնֆերանսն առաջադրում է հետևյալ խնդիրները.—

ա) ապահովել ԲԳԿԲ տասնամյակի հետ կապված ղեկավար որգանների հրատարակած վորոշումների կենսագործումը, հատկապես ԿԿԲ պետկազմի բնակարանային և առողջապահական պայմանների բարելավման բնագավառում.

բ) յերկրային զորամասերի համալրման շրջաններում ուժեղացնել քաղաքացիական կազմակերպությունների ուշադրությունը միջհավաքային աշխատանքների ամբողջ սիստեմի բարելավման, նույնպես և նախակոչային պատրաստության համար նյութական բարեկավ պայմաններ ստեղծելու նկատմամբ.

գ) ապահովել զորակոչային կոնտինգենտի դասակարգային խիստ ընտրությունը, չըթույլատրելով դասակարգայնորեն անհաթաս տարրերի թափանցում բանակի շարքերը: Դրա հետ միասին բարելավել

հաշվառման և թիկունքային աշխարհագրո-րայինների լիակատար տուրքագրման գործը.

դ) ԱԽՍՖՀ հանրապետությունների լուսժողկոմների լուրջ ուշադրությունը դարձնել՝ զորակոչային կոնտինգենտի մեջ բանվորա-գյուղացիական յերիտասարդության անգրագիտությունը լիովին վերացնելու անհրաժեշտության վրա.

յե) կուսակցական գծով սիստեմատիկ հսկողություն սահմանել տեղական խորհրդային օրգանների կողմից զինծառայողների, հատկապես նրանցից բատրակների և չքավորների ընտանիքների արտոնությունների և օգնության կենսագործման վրա:

7. Կոնֆերանսը Անդրյերկրկոմի ուշադրությունն է հրավիրում՝ Անդրկովկասյան հանրապետությունների կուսակցական, տնտեսական և կուլտուրական շինարարության հիմնական հարցերի մասին ԿԿԲ քաղմարմիններին և կուսակցական կազմակերպություններին տրվող ինֆորմացիայի բարելավման անհրաժեշտության վրա:



## ԲԱՆԱՁԵՎ

### ԲԳԿԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Լսելով և քննելով ընկ. Պետուխովի զեկուցումը, կոնֆերանսն ամբողջապես և լիովին հավանություն է տալիս ՊՈԽՌ–ի և ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի հաստատուն բոլշևիկյան քաղաքական և կազմակերպչական գծին, վորն անշեղորեն տարել և տանում է դեպի Կարմիր բանակի հետագա ամրացում և նրանում՝ բանվոր դասակարգի ու նրա կուսակցության դերի բարձրացում:

2. Կուսակցական կոնֆերանսն արձանագրում է ՀամԿԿ(բ) ղեկավար դերի ուժեղացումը ԲԳԿԲ–ում, ԲԳԿԲ մարտունակության բոլոր տարրերի աճումը և նրա լիովին կայուն, առողջ քաղ-բարոյական դրությունը: ԲԳԿԲ մարտունակության այդ աճումն առաջին հերթին իր արտահայտությունն է գտնում հետևյալում.—

ա) ԲԳԿԲ կուսկազմակերպության աճման, նրանում բանվորական մասի ավե-

լացման և նրա գաղափարական բոլշևիկյան կայունության ամրացման մեջ:

Կուսակցական կազմակերպությունների գաղափարական բոլշևիկյան կայունությունն ու աճումը ամբողջ վճռականությամբ հայտաբերվեցին ինչպես տրոցկիզմի դեմ մղած պայքարի ընթացքում, նույնպես և աջ թեքման և նրա նկատմամբ եղած հաշտվողական վերաբերմունքների, որոնք վճռական հակահարվածի հանդիպեցին ԲԳԿԲ բոլոր կուսակցական կազմակերպությունների կողմից:

Աճել է քաղմարմինների և կուսակցական կազմակերպությունների ազդեցությունը զորամասերի աշխատանքների ու կյանքի բոլոր կողմերի վրա, հատկապես մարտական պատրաստության բնագավառում:

բ) Հրամանատարական կազմի քաղաքական մակարդակի աճման մեջ, նրա շարքերում կուսակցական և բանվորական շերտի աճման մեջ և կարմիր բանակային մասսաների մեջ ամբողջ քաղաքական-դաստիարակչական աշխատանքները կազմակերպելում նրա ակտիվության և անմիջական մասնակցության ուժեղացման մեջ, որն իր հերթին նպաստել է կարմիր բանակային



մասսայի հետ ավելի սերտ կապ հաստատելուն.

գ) ԲԳԿԲ կոմսոմոլի՝ որպես քաղաքական ամբողջ աշխատանքներն ուժեղացնելու և կարմիր զորանոցների կյանքի ու կենցաղի բացասական յերևույթները վերացնելու աշխատանքներում կուսկազմակերպությունների ակտիվ օգնականի՝ ամրացման մեջ.

դ) կուսակցական կազմակերպությունների և անկուսակցական մասսաների կապի ամրացման և վերջիններիս կողմից դեպի ՀամԿԿ(բ) և խորհրդային իշխանության ունեցած անբաժանելի վստահության մեջ.

յե) ԲԳԿԲ զորամասերի ամբողջ վարժամարտական պատրաստության բարելավման մեջ, որն առաջին հերթին հաստատվում է ընթացիկ տարվա մանյովրաներով.

զ) ԲԳԿԲ նյութական-տեխնիկական բազայի ընդհանուր ամրացման մեջ:

3. Դրա հետ միասին, ԲԳԿԲ որպես պրոլետարական դիկտատուրայի զենքի, նշված նվաճումների և ընդհանուր ամրացման հետ միասին, վերջին ժամանակներս ավելի որոշակի կերպով հայտաբերվեցին մի շարք թերություններ և հիվանդագին յերևույթներ, որոնք արտացոլում են՝

մեր յերկրում սոցիալիզմի դիրքերի ուժեղացման և ընդհանուր աճմանն անխուսափելիորեն ուղեկցող հակասությունները: Այդ թերություններն ու հիվանդագին յերևույթները (բյուրոկրատական խեղաթյուրումները, կարգապահական անթույլատրելի ծովածքները, աչքակապության դեպքերը, հարբեցողություն և այլն) բավականաչափ վճռականությամբ մերկացված են բջիջների քարտուղարների խորհրդակցության, Հեղ. Ռազմ. Խորհրդի հունիսյան և ռազմական բջիջների մասին ՊՈՒՌ-ի զեկուցման առթիվ ՀամԿԿ(բ) Կենտկոմի վորոշումներում:

Ընդունելով՝ ԲԳԿԲ պետկազմի և կուսակցական կազմակերպությունների աշխատանքներում յեղած թերությունների և բացասական յերևույթների վերացման ու նրանց դեմ պայքարելու առթիվ Հեղ. Ռազմ. Խորհրդի և ՊՈՒՌ-ի վորոշումներում ու վճիռներում նշված բոլոր միջոցառումները միանգամայն ճիշտ, կոնֆերանսը կտրականապես դատապարտում է միանգամայն անճիշտ, քաղաքականապես վնասակար և ԲԳԿԲ հրամանատարական ու քաղաքական կադրերի միասնությունը հաստատելու խնդրին լիովին չհամապատասխանե-



լու շնորհիվ, հատկապես վնասակար՝ Բելոռուսական Ռազմական Շրջանի բարձր քաղկազմի մի մասի և Տոլմաչևի անվան Ռազմա-քաղաքական Ակադեմիայի կոլեկտիվի բանաձևերը:

4. Գոհունակությամբ նշելով ԲԳԿԲ ընդհանուր աճումը, նրա հրամանատարական և առանձնապես կուսակցական կազմի քաղաքական մակարդակի աճումը, ԲԳԿԲ-ում բանվոր դասակարգի և նրա կուսակցության դիրքերի ամրացումը չտեսնող խըճճված պանիկյորներին ու հոռետեսներին տված ՀՌԽ-ի, ՊՈՒՌ-ի և ԲԳԿԲ ամբողջ կուսակցական մասսայի բոլշևիկյան հակահարվածը, կոնֆերանսը դրա հետ միասին միանգամայն անհրաժեշտ է համարում վճռականապես սահման գծել և անվերապահորեն դատապարտել բոլոր նրանց, ովքեր այս կամ այն չափով կողմնակից են յեղել կամ պաշտպանել են ԲՌՇ և Տոլմաչևկայի բանաձևերում մեկնաբանված դիրքավորումներն ու տրամադրությունները: Կոնֆերանսը գտնում է նույնպես, վոր ԲՌՇ և ՏՌՔԱ նույն այդ բանաձևերում բացատրըված դիրքավորումների և տրամադրությունների այս կամ այն ձևով ու չափով պաշտպանելը հավասարապես նրա նկատ-

մամբ հաշտվողականությունն անհամատեղելի յեն ԲԳԿԲ-ում լինելու հետ, և մանավանդ այնտեղ ղեկավար աշխատանք վարելու հետ:

5. Հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ամբողջ ռազմական ապարատում տեղի ունեցող բյուրոկրատական խեղաթյուրումների, բացասական յերևույթների և ԲԳԿԲ պետկազմի և կուսակցական-քաղաքական կազմակերպությունների ամբողջ աշխատանքի թերությունների դեմ ԲԳԿԲ քաղմարմինների և կուսակցական կազմակերպությունների անողոք պայքարի վրա, կոնֆերանսն ընդունում է, վոր այդ թերությունների և յերևույթների դեմ հաջողությամբ պայքարելու վճռական պայմաններից մեկն է հանդիսանում ԲԳԿԲ հրամանատարական և քաղաքական կադրերի միասնությունն ու համերաշխ աշխատանքը: Ուստի, այդ կադրերի վորոշ մասի միջև յեղած տարաձայնությունները լիկվիդացիայի յենթարկելու և կանխելու խնդիրը, և ՀՈՒԽ ու Կենտկոմի հոկտեմբերյան և հունվարյան վորոշումների հիման վրա նըրանց մեջ լիակատար միասնություն հաստատելը պետք է կարմիր թելով անցնի ԲԳԿԲ քաղմարմինների և կուսակցական



կազմակերպությունների ամբողջ աշխատանքի միջով:

6. Կոնֆերանսն արձանագրում է, վոր ՊՈՒՕ-ը մեծ աշխատանք է կատարել կուսակցական մասսաների ակտիվությունը բարձրացնելու, ԲԳԿԲ ամբողջ կազմը ՀՈՒԽ և ՀամԿԿ(բ) վորոշումների շուրջ համախմբելու, ամբողջ կուսակցական քաղաքական աշխատանքների վորակը բարձրացնելու, Կարմիր բանակում ինքնաքննադատությունը զարգացնելու, և սեփական կուսակցական շարքերում կազյոնշչինայի, բյուրոկրատիզմի և այլասերման տարրերի դեմ պայքարելու համար:

Կոնֆերանսն ամբողջովին հավանություն տալով վերջին ժամանակներս հրատարակված՝ բջիջներին ուղղված հրահանգին, կոմիսարների մասին կանոնադրության և կոմսոմոլի աշխատանքների կանոնադրության, գտնում է, վոր նշված փաստաթղթերը լիովին ապահովում են կուսկազմակերպությունների ակտիվության հետագա զարգացումը, կուսակցական պետկազմի աճումը, ապահովում են նրա ակտիվ մասնակցությունը կուսակցական-քաղաքական [illegible] կուսկազմակերպությունների կյանքի ու գործունեյու-



Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Երևան
Публичная Библиотека

թյան մեջ և ապահովում են ՀամԿԿ(բ) ղեկավար դերի ընդհանուր ուժեղացումն ամբողջ ԲԳԿԲ-ում:

7. Կոնֆերանսը լիովին հավանություն է տալիս Հեղ. Ռազմ. Խորհրդի և ՊՈՒՌ-ի միջոցառումներին՝ ուժեղացնելու համար աշխատանքը ՎՈՒԶ-երում (Ռազմա-ուսումնական հիմնարկներում), վորոնք բացառիկ կարևոր նշանակություն ունեն ԲԳԿԲ պետկազմի նոր կադրեր պատրաստելու և նրանցում պրոլետարական կազմն ավելացնելու գործում:

8. Վորպես գործնական միջոցառումներ, ՊՈՒՌ-ին առաջարկելու համար, կոնֆերանսն առաջադրում է հետևյալները.—

1) ՊՈՒՌ-ին անհրաժեշտ է ամրացնել ներկուսակցական հարցերի վերաբերյալ քաղմարմիններին նյութեր մատակարարելու բնագավառում ունեցած նվաճումները և առաջիկայում ևս բարելավել քաղմարմինների, ռազմական կոմիսարների և կուսկազմակերպությունների ինֆորմացիան ներկուսակցական հարցերի առթիվ:

2) Արձանագրելով զորանոցային շինարարության բնագավառում Կովկասյան Կարմրադրոշ Բանակի առանձնապես սուր կարիքները, կոնֆերանսը ՊՈՒՌ-ի ուշադրու-



թյունն է հրավիրում ԿԿԲ զորանոցային շինարարության համար մեծ հատկացումների ստիպողական անհրաժեշտության վրա: Անհրաժեշտ է նույնպես արագացնել՝ ԿԿԲ զորամասերը հանքային տաքացման (քարածխային ու նավթային) անցնելու մասին ԿԿԲ Հեղ. Ռազմ. Խորհրդի վորոշման իրագործումը: Անհրաժեշտ է ավելացնել պետկազմի բնակարանային շինարարության համար բաց թողնվող միջոցները, քանի վոր այդ հարցը ևս ԱԽՍՖՀ-ում առանձնապես սուր է դրված:

3) ՊՈՒՌ-ին անհրաժեշտ է ՀամԿԿ(բ) Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության առաջ հարց դնել զորակոչային կոնտինգենտի անգրագիտության վերացման գործի անբարեհաջող դրության մասին, վորի շնորհիվ ԿԿԲ շարքերն ընդունվող անգրագետների տոկոսը վոչ միայն չի նվազում, այլ մինչև իսկ աճում է: Անհրաժեշտ է խնդրել այնպիսի միջոցառումների կիրառում, վորպիսիք իրոք կապահովեյին յերիտասարդության անգրագիտության վերացումը մինչև ԲԳԿԲ շարքերն ընդունվելը:

4) Կուսքաղապարատի և պետկազմի առաջ կանգնած՝ ռազմական ու քաղաքական դաստիարակության բնագավառում առա-

ջադրվող խնդիրների բարդությունն ու
ծավալը, ԲԳԿԲ ամբողջ աշխատանքների
որակի բարձրացման շահերը, առաջին
տեղն են դնում ռացիոնալիզացիայի և
ծանրաբեռնվածության նվազեցման հար-
ցերի մշակումը: Դրա հետ կապված է մար-
տական պատրաստության ընթացիկ աշ-
խատանքով զբաղված պետկազմի ամբողջ
մասսայի ռազմա-քաղաքական տեսաշրջանի
զարգացման հնարավորությունների ապա-
հովումը: Կոնֆերանսը հանձնարարում է
ՊՈՒՌ–ին ԲԳԿԲ Գլխ. Վարչության հետ
միասին մշակել պետկազմի ընթացիկ ծան-
րաբեռնվածության և վերապատրաստու-
թյան ամբողջ սիստեմի ռացիոնալացման
հարցերը.— ձմեռային և ամառային մար-
տական պատրաստության պլաններն իր
ժամանակին բաց թողնելը և նրանց կատա-
րելու կարելիությունն ըստ խնդիրների
գումարի. պետկազմի պատրաստության
զանազան տեսակի ծրագրերի ծավալը.
քաղկազմի հետագա պատրաստության առ-
թիվ միջոցառումները, մասնավորապես
բազմարժինների աշխատողների, (ռազմա-
կան պատրաստության լրացուցիչ կուրսերի
կազմակերպում, քաղաքական և ընդհանուր
կրթական մակարդակը բարձրացնելու հա-



մար միջոցներ տալու մասին կենտ-
կոմի վորոշման իրագործումը, բացակայս ու-
սուցում). պետկազմի ինքնակրթական աշ-
խատանքի համար հրամանի կարգով ժա-
մանակի սահմանում. զորամասերին ու
բազմարժիններին ղեկավար նյութերի հատ-
կապես կամպանիաների վերաբերյալ ծրա-
գրերի ու անհրաժեշտ դիրեկտիվների ա-
վելի ևս իր ժամանակին մատակարարումը.
ԲԳԿԲ կուսակցական–քաղաքական աշխա-
տանքի հարցերի մասին տեղեկատուների
հրատարակումը. ռազմական ժամանակի
կուսքաղաշխատանքի մասին յեղած գրա-
կանության համալրում (ստորին աշխա-
տողների համար գրականության հրատա-
րակում. հրատարակվող գրականության
մեջ քաղաքացիական կռիվների փորձի,
նույնպես և ռազմական խաղերի, դաշտա-
յին ռազմախաղերի և մանյովրաների աշ-
խատանքների փորձի ավելի արտացոլում.
մարտական պարագայի քաղաշխատանքի
խնդիրների մասին հավաքածուի հրատա-
րակում. մարտավարական պարապմունք-
ների ընթացքում տարվող աշխատանքների
մասին հատկապես մասսայական գրակա-
նության հրատարակում. այդ գրականու-

թյան ազգային լեզուներով թարգմանելու ապահովումը ՊՈԽՌ–ի կողմից։

5) ՊՈԽՌ–ին անհրաժեշտ է ուժեղացնել ազգային զորամասերի աշխատանքի առանձնահատկությունների ուսումնասիրությունը։

6) Միջոցներ կիրառել՝ ավելացնելու համար կուսակցական ու բանվորական շերտը շտաբներում աշխատողների կազմում։

7) Միջոցառումներ մշակել՝ պատրաստելու համար միջին և ավագ կուսակցական հրամկազմ (վաշտի, գնդի հրամանատարներ) վորպես միահրամանատարներ՝ իրագործելու համար կուսակցական–քաղաքական ղեկավարությունը։

8) Ազգային զորամասերի պետկազմի համար թեթևացնել հատուկ ուսումնական հիմնարկներում ընդունվելու պայմանները։

9) Հաշվի առնելով Անդրկովկասյան հետևակային դպրոցին կից ռազմա–քաղաքական դասընթացների հատուկ պայմանները, յերկարացնել այդ դասընթացներում սովորելու ժամանակամիջոցը, սկսած հաջորդ ուսումնական տարվանից։

10) Վերացնել նշանակումների և տեղափոխությունների հարցերի լուծման ու



ձևակերպման գործում ՊՈԽՌ–ի, նույնպես և ԲԳԿԲ Գլխ. Վարչության կողմից յերբեմն նկատվող չափազանց ուշացումները։

11) Հաշվի առնելով քաղօրգանների կենդանի ղեկավարության համար դրամական ապահովության ծանր կացությունը, ձըգտել ու հասնել կենդանի ղեկավարության կարիքների համար բաց թողնվող միջոցների ավելացման։

12) Բաթումում կազմակերպել Կարմիր բանակի ու Նավատորմի Տուն և ավելացնել ԿԿԲ ակումբներին հատկացվող միջոցները։ Զորանոցային շինարարության արվող հատկացումների կազմում հատկապես ամրացնել քաղլուսհիմնարկների (ԿԲՏ, ակումբներ, լենանկյուններ) համար գումարներ։

13) Ավելացնել առանձին վաշտերի ու հեծելավաշտերի քաղաքական–լուսավորական աշխատանքների համար հատկացվող միջոցները, քանի վոր վերջին ավելացումն ամենից քիչ նրանց է վերաբերել։

14) ՊՈԽՌ–ին անհրաժեշտ է ՀամԿԿ(բ) Կենտկոմի առաջ հարց դնել՝ զորացրվածների և կարմիր բանակայինների ընտանիքների տեղական մարմինների կողմից օգնությունն իրոք բարելավելու մասին։

15) Զգտել ու հանել՝ բանակում դասակարգայնորեն անհարազատ տարրերի լիովին անթույլատրելիության մասին յեղած ցուցումների ճշգրիտ կատարմանը, վորը դեռ տեղերում բավարար չափով չի կիրառվում:

16) Կիրառել ազգային դիվիզիաների համար ռազմաքաղաքական գրականության հրատարակմանը հատկացվող միջոցների հետագա ավելացում, մասնավորապես կրտսեր հրամկազմի և գնդային դպրոցների կուրսանտների համար ձեռնարկների հրատարակության համար:

17) Ազգային թերթերի նյութական ապահովությունը հասցնել այնպիսի չափերի, վորը հնարավորություն տա բոլորին լույս տեսնելու մինչև շաբաթը 3 անգամ:

18) Բնամատակարարման կարգով ապահովել կենտրոնից ձեռնարկների (քրեստոմատիաներ, այբբենարանների և այլն), ստացումը ուկրայներեն լեզվով: ՀամԿԿ(բ) կենտկոմի միջոցով ապահովել ուկրայներեն լեզվով գրականության ստացումը ուկրայնացի արձակուրդավորների համար:

19) Փոխել գոյություն ունեցող միանգամայն աննորմալ դրությունը կենսաթոշակների մասին (կենսաթոշակ ստանալու



համար հաշվի առնվողների զրկումը ծառայությունից արձակվելու համար նպաստ և ծառայած տարիների համար վարձատրություն ստանալուց) հոգուտ՝ աշխատունակությունը կորցրած լինելու պատճառով արձակվողներին դրամական բոլոր տեսակի բավարարումների, համահավասար այլ պատճառներով արձակվողների:

20) Ավելացնել կուսակցականների նախապատրաստական հավաքի ժամանակամիջոցը՝ յերկրային զորամասերի ընդհանուր հավաքներից առաջ 4-ից մինչև 7 օր:

# ԲԱՆԱՁԵՎ

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Լսելով և քննելով ԿԿԲ Քաղաքական վարչության պետ ընկ. Վասիլյեվի զեկուցումը, կոնֆերանսը գտնում է ԿԿԲՔՎ քաղաքական և կազմակերպչական գիծը ճիշտ և հավանություն է տալիս նրա գործնական աշխատանքներին:

Կոնֆերանսը նշում է, վոր ԿԿԲՔՎ և քաղմարմինների քաղաքական ու կազմակերպչական գիծը լիովին և ամբողջությամբ համապատասխանել են կուսակցության գծին և ուղղված է յեղել ամեն կերպ կիրառելու ՊՈՒՌ-ի և ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի դիրեկտիվները՝ ինչպես ընդհանուր քաղաքական, նույնպես և համաբանակային շինարարության հարցերի առթիվ:

2. Կոնֆերանսը նշում է ԿԿԲ կուսակցական կազմակերպությունների առողջ կացությունը, գաղափարական միաձուլությունը և բոլշևիկյան կայունությունը:



Անցած շրջանում կուսակցական կազմակերպությունը շարունակել է աճել, ամրանալ և բարելավել իր աշխատանքը 15-րդ կուսհամագումարի վորոշումների հիման վրա: Ամբողջ կուսակցության հետ միասին ջախջախելով տրոցկիստական ոպոզիցիային և շարունակելով պայքարը նրա մնացորդների դեմ, նա վճռական ու միահամուռ հակահարված տվեց աջ թեքմանը և նրա նկատմամբ յեղած հաշտվողականությանը:

3. Բանակային 6-րդ կուսակցական կոնֆերանսից հետո ընկած ժամանակաշրջանը բնութագրվում է ԿԿԲ մարտունակությունը կազմող բոլոր տարրերի հետագա ուժեղացումով, ինչպես քաղաքական, կուլտուրական բնագավառում, նույնպես և ամեն տեսակի մատակարարման պատրաստության բնագավառներում: Կոնֆերանսը լիակատար գոհունակությամբ արձանագրում է ազգային զորամասերի ձևավորման բազմակողմանի ամրացումը և Կովկասյան Կարմրադրոշ Բանակի բոլոր զորամասերի միաձուլությունը:

4. Կոնֆերանսը վճռականապես ժխտում և դատապարտում է Բելոռուսական Ռազմական Շրջանի և Տոլմաչևյան Ռազմա-

քաղաքական Ակադեմիայի բանաձևերում
արված հոռետեսական յեզրակացություն-
ներն ու գնահատականները, վորպես քա-
ղաքականապես վնասակար և իրականու-
թյանը միանգամայն չհամապատասխանող:
Կոնֆերանսը հատկապես նշում է այդ
բանաձևերի վտանգավոր դերը, վորոնք
խոչընդոտ են հանդիսանում հրամատա-
րական և քաղաքական կազմի աշխատանք-
ներում միասնություն սահմանելուն, և
ամբողջ կուսկազմակերպությանը կոչ է
անում միաձույլ ու համերաշխ աշխատան-
քի՝ կենսագործելու համար ՀամԿԿ(բ)
Կենտկոմի հոկտեմբերյան ու հունվարյան
վորոշումները, վորոնք ցույց են տալիս,
վոր «Կարմիր բանակի ամրացմանը, վորպես
բանվոր դասակարգի դիկտատուրայի զենք,
և ռազմական ապարատում ու պետկազմի աշ-
խատանքում յեղած բյուրոկրատական խե-
ղաթյուրումների արմատապես վերացմանը
կարելի յե հասնել միայն հրամատարական և
քաղաքական կազմի անդրդվելի միասնու-
թյան և ՀամԿԿ(բ) ղեկավար ազդեցության
անընդհատ աճման պայմաններում, վորը
պահանջում է առաջին հերթին բանակի կու-
սակցական-քաղաքական մարմիններից հը-
մուտ ղեկավարություն, կուսակցական կա-



յունություն և հեղինակություն», վորոնք
ԲԳԿԲ քաղմարմիններից ու կուսկազմակեր-
պություններից պահանջում են «կուսակցա-
կան կազմի բոլոր ծառայողական խմբերից
կուսակցական լիակատար միասնություն և
լենինյան հավանություն տալով ԿԿԲ բարձր
քաղկազմի դեկտեմբերյան (1928 թ.) խոր-
հրդակցության վորոշումներին, նշելով
ԿԿԲՔՎ, քաղմարմինների և ԿԿԲ կուսկազմա-
կերպությունների միանգամայն ճիշտ վերա-
բերմունքը Բելոռուսական Ռազմական Շըր-
ջանի քաղկազմի մի մասի և Տոլմաչևյան
Ռազմա-Քաղաքական Ակադեմիայի բանաձե-
վերի նկատմամբ, կոնֆերանսը դրա հետ
միասին քաղմարմինների և առաջին հերթին
ԿԿԲՔՎ սխալն է համարում այն, վոր այդ
բանաձևերի հիմնական սխալների մերկաց-
ման ու դատապարտման աշխատանքներն
այնքան էլ իր ժամանակին չեն տարվել:
Կոնֆերանսը գտնում է, վոր ԲՌՇ և ՏՌՔԱ
բանաձևերի հիմնական սխալների ավելի
լիակատար մերկացումն ու դատապարտումը
մեծ չափով կապահովեյին ԽՍՀՄ Հեղ.
Ռազմ. Խորհրդի վորոշումների կենսագործ-
ման համար ԿԿԲ բոլոր քաղմարմինների ու
կուսկազմակերպությունների գործնական

միջոցառումների անցկացման հաջողությունը: Դրա հետ կապված կոնֆերանսը գոհունակությամբ նշում է այն ընկերների կողմից իրենց սխալների բացահայտ ընդունումը, վորոնք մասնանշված բանաձևերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ կապված հարցերի առթիվ հայտաբերել էին տատանումներ:

5. Միահրամատարությունը գնահատելով վորպես կուսակցության հսկայական նվաճում բանակում, և արձանագրելով այդ ասպարեզում ԿԿԲ-ում գոյություն ունեցող էական հաջողությունները, կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում հետագայում ևս չթուլացվող ուշադրություն նվիրել միահրամատարների նոր կադրերի առաջ քաշման և այդ կադրերի պատրաստության աշխատանքին:

6. Կուսկազմակերպության անցած շրջանի պրակտիկ գործունեության մեջ կոնֆերանսը արձանագրում է ներկուսակցական կյանքի հետագա ընդհանուր աշխուժացում՝ կուսակցության անդամների ակտիվության աճման ներկուսակցական դեմոկրատիայի ճիշտ իրագործման հիմունքներով:

Ինքնաքննադատության լոզունգի իրագործման, բջիջի ազդեցությամբ զորամասի կյանքի բոլոր կողմերն ընդգրկելու գործում



և թերությունների ու բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ պայքարելում ձեռք են բերված առաջին իրական (բայց դեռ վոչ ամենուրեք և մի ամբողջ շարք դեպքերում պարզապես անբավականաչափ) հաջողություններ:

Նշվում է բջիջների հեղինակության և ազդեցության հետագա աճումը անկուսակցական կարմիր բանակային մասսայի մեջ, վորն իր համեմատաբար ավելի վորոշակի արտահայտությունն է գտնում կուսակցության մեջ մտնելու ձգտման մեծ աճմամբ (կուսակցության մեջ ընդունվելու համար հայտարարություններ են տվել՝ 1927 թվին—4704, 1928 թվի 9 ամսում—5336, կուսակցության մեջ ընդունված են՝ 1927 թվին—2441 հոգի, 1928 թվի 9 ամսում—2784):

Նշանակալից չափով բարելավվել է կուսակցության աճման կանոնավորումն ըստ սոցիալական կազմի (թեկնածու ընդունվածների մեջ բանվոր յեղել են՝ 1927 թվին—30,9%, 1928 թվի 9 ամսում—44,4%, կուսակցության անդամ անցնողների մեջ 1927 թվին—35,2%, 1928 թվի 9 ամսում—37,7%). ավելացել է շարքային կարմիր բանակային կուսաշերտի աճումը, մասնավորա-

պես ի հաշիվ առաջին տարվա ծառայության կարմիր բանակայինների:

Այդ բոլորի հետ միասին, ՊՈՒՌ-ի զեկուցման առթիվ ՀամԿԿ(բ) Կենտկոմի «ռազմական բջիջի մասին» կայացրած վորոշումում նշված թերությունների ու հիվանդագին յերևույթները տեղ ունեն նույնպես և ԿԿԲ կուսակցական կազմակերպությունների կացության մեջ:

Կուսակցական կազմակերպություններն իրենց հետագա աշխատանքը պետք է տանեն լիովին ՀամԿԿ(բ) Կենտկոմի և ՊՈՒՌ-ի հիմնական ղեկավարող փաստաթղթերին համապատասխան, վորոնք միանգամայն ճիշտ և պարզ ուղղություն են տալիս կուսակցական շինարարությանը Կարմիր բանակում (բջիջների քարտուղարների համբանակային 2-րդ խորհրդակցության վորոշումները, կոմիսարների մասին կանոնադրությունը, հրահանգ ՀամԿԿ(բ) Կարմիր բանակի բջիջներին): Կոնֆերանսը նշում է, վոր բջիջների քարտուղարների Համբանակային 2-րդ խորհրդակցության վորոշումների վերաբերմամբ մենք հասել ենք միայն առաջին հաջողությունների, և անհրաժեշտ է գտնում մոտագա իսկ ժամանակներում ծավալել այդ վորոշումների հետագա յեռանդուն կատա-



րումն: Կոնֆերանսը պարտավորեցնում է բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ առավելագույն յեռանդով ձեռնամուխ լինել կյանքում կիրառելու ՀամԿԿ(բ) Կենտկոմի վորոշումը «ռազմական բջիջի մասին»:

7. Կուսակցության խնդիրների բարդացումը՝ ծավալված սոցիալիստական շինարարության ներկա շրջանում, ԽՍՀՄ արտաքին դրության լարվածությունը կապիտալիստական շրջափակման պայմաններում և հակահեղափոխական պատերազմի սպառնալիքը ԽՍՀՄ դեմ, դասակարգային պայքարի սրումը մեր յերկրի ներսում և քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի կողմից կուսակցության վրա ճնշման փորձերի ուժեղացումը, կուսակցության առանձին ողակներում կուսակցության գլխավոր գծից դեպի աջ թեքման կողմը հայտաբերված տատանումները,—սրանք բոլորն առաջին հերթին անհրաժեշտություն են առաջացնում բացառիկ հոգացողություն ունենալու մեր կոմունիստական շարքերի միաձուլության և ներքին ամրացման մասին, վորպես կարևորագույն նախադրյալ մեր բոլոր հետագա հաջողությունների:

Յելնելով դրանից, կոնֆերանսն առաջար-

կում և ԿԿԲ բոլոր կուսակցական կազմակերպություններին, կուսակցության բոլոր անդամներին.—

ա) ամեն կերպ ձգտել ու հասնել կուսակցական կազմակերպությունների գաղափարական միաձուլության և ավելի ամրացման, կոլեկտիվների ու բջիջների ներկուսակցական կյանքի աշխուժացման և քաղաքական ակտիվության էլ ավելի վերելքի: Կենտրոնական խնդիր պետք է լինի ամբողջ կուսակցական մասսայի գաղափարական զինումը՝ պայքարելու համար—գլխավորապես գաղափարապես—ընդդեմ աջ թեքման, վորը գլխավոր վտանգն է ներկայացնում սոցիալիստական շինարարության տվյալ շրջանում, և ընդդեմ այդ թեքման նկատմամբ յեղած հաշտվողական վերաբերմունքի: Բանակային կուսկազմակերպության պայմաններում, բանակում «գյուղացիական տրամադրությունների» և կուսկազմակերպությունների ներսում վոչ պրոլետարական տարրերի զգալի մասի գոյության դեպքում, աջ թեքման դեմ պայքարելու խնդիրը ձեռք է բերում հատուկ կարևոր նշանակություն: Կուսկազմակերպությունները պետք է լիովին հաղթահարեն վորևէ տեղ հայտաբերվող աջ թեքումնավորական տրամադրությունները,



աջ տենդենցները և նրանց նկատմամբ յեղած հաշտվողական վերաբերմունքը մի քանի բջիջներում: Ըստ վորում կուսակցության գծից յեղած թեքումների ու սխալների լայն պարզաբանումն ու վորոշակի մերկացումը պետք է ընթանա կուսակցական—ընկերական այնպիսի պարագայում, վորտեղ կուսակցության յուրաքանչյուր անդամ միանգամայն բացահայտ կերպով կկարողանա արտահայտել իր բոլոր կասկածներն ու չհասկանալը:

Միևնույն ժամանակ չպետք է թուլացնել վճռական հակահարվածը տրոցկիստական տարրերի նկատմամբ, վորոնք փորձում են աշխատանք տանել բանակում:

բ) Ավելի համարձակ ու վճռական ծավալել ինքնաքննադատությունը «նկատի չառնելով անձնավորությունը», լիովին լիկվիդացիայի յենթարկել այնպիսի դեպքերը, յերբ կուսակցական ինքնաքննադատության խոչընդոտ է հանդիսանում քննադատողի և քննադատվողի պաշտոնեյական դրությունը:

գ) Ուժեղացնել կոմունիստի կուսակցական պատասխանատվությունն իր բջիջի առաջ՝ իր կատարած ամբողջ աշխատանքում կուսակցական—քաղաքական գծի ճշտության համար, առաջին հերթին այդ գծի և կուսակցության առանձին անդամների բարքի սխա-

տեմատիկ ու մանրազննին ստուգման ճանապարհով, ստորին բջիջի (այլ ոչ միայն կուսբյուրոյի) ավելի ակտիվ հականերգործումը բյուրոկրատական խեղաթյուրումների և քայքայվածության տարրերի նկատմամբ։ Այդ ուղղությամբ գործնական միջոցառումները պետք է լինեն—կուսակցության անդամների ու թեկնածուների անհատական հաշվետվությունների ավելի սիստեմատիկ դրումը բջիջներում, երբ բազմակողմանիորեն հայտաբերելով ու քննելով տվյալ կոմունիստի աշխատանքն ու բարքը, նրա կուսակցական կայունության, կարգապահության և ակտիվության տեսակետից. կուսբյուրոների և քաղմարմինների կողմից բջիջները հետազոտելիս բջիջի յուրաքանչյուր անդամի աշխատանքի ու բարքի ստուգումը, կուսակցական հանձնաժողովների աշխատանքի ուժեղացումը՝ առանձին կազմակերպությունների կազմն ստուգելու և անուղղելի ու կուսակցությանն անհարազատ տարրերից այդ կազմակերպությունները մաքրելու համար։

8. Զորամասի կյանքի բոլոր կողմերն իր ազդեցությամբ ընդգրկելու ուղղությամբ կուսակցական կազմակերպությունների աշ-



խատանքը բարելավելու նպատակով, կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում.—

ա) Բջիջների և կոլլեկտիվների բյուրոների աշխատանքի մեթոդներն ավելի լավ հարմարացնել՝ ռազմական շինարարության մեջ նրանց մասնակցության բնագավառում աճող պահանջներին ու բարդացած խնդիրներին։

Դրա համար անհրաժեշտ է,—հրաժարվել տեղական հարցերի մասին բջիջներում յերկար ու ընդհանուր զեկուցումներ դնելուց, առաջադրելով միանգամայն կոնկրետ, ավելի հասունացած որվա չարիքը կազմող հարցեր. ինչպես կանոն, անցնել բջիջի ժողովներում նախորոք մշակված գործնական առաջարկների հայտարարման սիստեմին, կարճ տեղեկություն տալով տվյալ հարցի մասին այն հաշվով, որ ապահովվի այդ առաջարկությունների գործնական կոլլեկտիվ մշակումը բջիջի անդամների կողմից, նույնպես և ապահովվի ժողովում ոչ թե մեկ, այլ յերկու կամ յերեք տեղական հարցեր դնելու հնարավորությունը։ Հարցերի պատրաստության այդպիսի ճանապարհով և զեկուցումները կրճատելով, կոլլեկտիվների բյուրոների աշխատանքում պետք է հասնել մեծ ճկունության։

բ) Կուսակցական կազմակերպություննե-

րի, ռազմական կոմիսարների և քաղորգանների ուշադրությունը հրավիրել ռազմական շինարարության տեղական հարցերի դրման վորակի վրա, բջիջի ղեկավարող ազդեցության և այդ բնագավառում, առանձնապես մարտական պատրաստության հարցերում պետկազմին օգնություն ցույց տալու վորակի վրա։ Ռազմական շինարարության հարցերը մշակելիս պետք է լավ դրված լինի կուսակցության անդամների կոլեկտիվ փորձի օգտագործման ճանապարհով ավելի վորակյալ կուսակցական-հրամատարների, տնտեսավարների և այլոց ներգրավումը՝ այդ հարցերի պատրաստության ու քննության մեջ։

9. Կոնֆերանսն արձանագրում է բանակի կոմյերիտական կազմակերպության զարգացման մեջ հետագա հաջողությունները, վորոնք իրենց արտահայտությունն են գտնում ինչպես նրա թվական աճման, նույնպես և իդեոլոգիական կայունության, կազմակերպչական ամրացման և կոմյերիտական մասսայի շահերին համապատասխանող աշխատանքի ավելի կենդանի մեթոդների գործադրման աստիճանաբար աճումով։

Ընդունելով գործամասերում կոմյերիտական աշխատանքի նկատմամբ կուսակցական ղեկավարության վորոշ չափով բարելա-



վումը, անհրաժեշտ է միաժամանակ նշել «կուսակցական քաղաքականության հիմնական խնդիրների հետ կապված կոմյերիտականների տրամադրությունների ավելի լիակատար ընդգրկման» մասին բանակային 6-րդ կուսկոնֆերանսի դիրեկտիվների միանգամայն անբավականաչափ կատարումը։ Յելնելով ներկուսակցական ժամանակակից դրությունից, յելնելով կոմյերիտ շարժման մեջ աջ վտանգը հաղթահարելու կարեվորագույն խնդրից, 7-րդ կուսկոնֆերանսը հատկապես ընդգծում է կուսակցական կազմակերպությունների կողմից կոմյերիտմիությանը գաղափարապես ղեկավարելու բնագավառում նշանակալից բարելավումների հասնելու անհրաժեշտությունը։

Բացի այդ, կոնֆերանսն առաջադրում է հետևյալ խնդիրները.—

ա) Կոմյերիտականներից բանվորներին (այդ թվում նաև գյուղատնտեսական բանվորներին ու չքավորներին) կուսակցության մեջ գրավելու և պատրաստելու աշխատանքների ուժեղացումը,

բ) ամեն կերպ, այլ և ըստ վորակի լավ ղեկավարումն ու աջակցումը՝ կոմյերիտական աշխատանքի նոր մեթոդներին՝ հետագա ավելի արագ ու վճռական անցմանը, մաս-

նավորապես կոմյերիտական կազմակերպությունների միջև փորձի փոխանակման ավելի լավ դրման ճանապարհով,

դ) կուսակցական ղեկավարության ուժեղացումը կոմյերիտմիության նկատմամբ յերկրային զորամասերում:

10. Կոնֆերանսը նշում է ԿԿԲ զորամասերի լիովին կայուն քաղ-բարոյական դրությունը:

Հացամթերման դժվարություններից և 1928 թվի գարնան արտակարգ միջոցառումներից առաջացած «գյուղացիական տրամադրությունների» սրումը արդեն 1904 թվի մարտիկների արձակման մոմենտին նշանակալից չափով վերացված եր շնորհիվ ՀամԿԿ(բ) Կենտկոմի հուլիսյան պլենումի վորոշումների հիման վրա կուսկազմակերպությունների և քաղապարատի տարած լարված աշխատանքի: Քաղաքական տրամադրությունները զորանոցում բնութագրվում են դեպի կուսակցության ու խորհրդային իշխանության քաղաքականության յեղած վստահության անվերապահ ամրացմամբ, սոցիալիստական շինարարության ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում ունեցած հեռանկարների նկատմամբ հետաքրքրության բարձրացմամբ:



Անցյալ տարվա աշնանն անցկացրած սոցիալապես անհարազատ տարրերի հեռացումը գոհունակությամբ ընդունվեց կարմիր բանակային մասսայի ճնշող մեծամասնության կողմից և դրական դեր խաղաց բանակի զորամասերի քաղբարոյական դրության ամրացման գործում:

Կուսակցության հիմնական վորոշումների շուրջ տարվող քաղաքական աշխատանքը, սոցիալիստական ինդուստրացման հետագա անցկացման բնագավառի գործնական խնդիրները, գյուղատնտեսության վերելքի համար միջոցառումները, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհն ու խնդիրները, վերջապես, անհատական չքավորական-միջակային տնտեսության վերաբերյալ կուսակցության քաղաքականությունը հավանությամբ են ընդունվում մարտիկների հիմնական մասսայի կողմից:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ամբողջ վորոշակիությամբ պարզել, վոր ներկա «գյուղացիական տրամադրությունները կունենան ավելի կամ պակաս տևական բընույթ, քանի վոր ներկայումս մենք մտել ենք մի այնպիսի շրջան, վորը բնութագրվում է գյուղում մանվոր-կապիտալիս-

տական տարրերի վրա մեր հարձակման ուժեղացումով (ճնշում կուլակի վրա, գյուղատնտեսական հարկի ավելացում և այլն), նրանց ավելի վճռական վտարումը յերկրի եկոնոմիկայից (գյուղացիական տնտեսությունների կոլլեկտիվացում, խորհրդային տնտեսություններ և այլն) և դրանց հետ կապված պրոլետարական դիկտատուրայի թշնամի դասակարգերի ու բնակչության վորոշ խմբերի ակտիվության բարձրացումը՝ ընթացիկ շրջանի անխուսափելի դժվարությունների պարագայում» (ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի հունիսյան վորոշումներից)։

11. Բոլոր նվաճումների հետ միասին, կարմիր բանակային մասսայի աճած քաղաքական ակտիվության պայմաններում ընթացած անցյալ տարվա փորձը, կուսկազմակերպությունների մասսայական աշխատանքում բաց արեց մի շարք լուրջ թերություններ։

Այդ թերություններից կոնֆերանսը հատկապես նշում է՝ կուսակցության դասակարգային գծի առանձին ծռվածքները— ա) գյուղի դասակարգային հակասությունների վերասվերումը, կուլակի, վորպես դասակարգային թշնամու՝ դեմքի վերասվերումը, բ) վոչ բավականաչափ յեռանդով ու վորոշակիորեն պարզաբանումը խորհրդային ու կոլլեկտիվ տնտեսությունների դերը, վորպես չքավորության ու միջակի հենակետեր ընդդեմ կուլակի, գ) յերկրի ինդուստրացման պրոպագանդի անբավականաչափ համոզվածություն, դ) պատերազմական վտանգի թերագնահատման հայտնաբերումներ, յե) բյուրոկրատիզմի դեմ պայքարելու և ինքնաքննադատության թերագնահատում՝ զինթղթակիցներին հետապնդելու և բանակում ինքնաքննադատություն ունենալու դեմ յեղած յելույթների առանձին դեպքերի գոյության պարագայում։

Յելնելով դրանից, կոնֆերանսը հիմնական խնդիր է համարում մասսայական աշխատանքի բոլոր տեսակներում կուսակցության դասակարգային գծի ավելի վորոշակի կիրառումը։

Անհրաժեշտ է սիստեմատիկ պրոպագանդ տանել այն խնդիրների համար, վորոնք կուսակցության կողմից նշվում են սոցիալիստական շինարարության հետագա ծավալման բնագավառում՝ ինչպես գյուղում, նույնպես և քաղաքում։ Լայնորեն մասսայականացնել գյուղատնտեսության բար-

ձրագրման առթիվ միջոցառումները (նոյեմբերյան պլենումի վորոշումները, ԽՍՀՄ Կենտգործկոմի 4-րդ նստաշրջանի, Խորհուրդների 5-րդ համագումարի վորոշումները):

Անհրաժեշտ է լայն չափով և համառորեն զարգացնել գյուղատնտեսության կոլեկտիվացման գաղափարի պրոպագանդը կարմիր բանակայինների մեջ:

Դրա համար քաղպարատն ու կուսակցության բոլոր անդամները պետք է չարունակաբար ուսումնասիրեն գյուղի կոլեկտիվ տնտեսությունների ծավալուն շինարարության վերաբերյալ կուսակցության և խորհրդային օրգանների վորոշումները:

Անհրաժեշտ է չարունակաբար ուսումնասիրել այդ գործում կուսակցության ունեցած գործնական հաջողությունները, վորպեսզի կոնկրետ օրինակների վրա (օրինակելի կոլտնտեսություններն ու խորհրդային տնտեսությունները, կոլտնտեսությունների միջոցով չքավորական խմբակների ազատվելը կուլակների ճորտությունից, կոնտրակտացիայի հաջողությունները, բերքատվության աճումը և այլն) ակներև կերպով մասսայականացնել գյուղի զարգացման սոցիալիստական ուղիները:



Անհրաժեշտ է նույնպես, ապահովել անհատական գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ կուսակցության գծի պարզ, վորոշակի պարզաբանումը՝ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշումների հիման վրա:

Մեծ պարզությամբ ու վճռականությամբ պետք է պարզաբանվեն յերկրում տեղի ունեցող դասակարգային պայքարի, ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում մասնավոր-կապիտալիստական տարրերի վերաբերյալ կուսակցության ու խորհրդային իշխանության վարած քաղաքականության հարցերը: Կուլակային տրամադրությունների արձագանքները զորանոցում պետք է միշտ հանդիպեն համերաշխ ու վճռական հակահարվածի: Չեզոքացնելով կուլակային ձայնակցումները, անհրաժեշտ է հասնել՝ մարտիկների ամբողջ մասսային՝ կուսկազմակերպությունների և պետկազմի շուրջ համախմբելուն:

12. Կոնֆերանսը կարևորագույն նշանակություն է տալիս Կենտկոմի նոյեմբերյան պլենումի կողմից ընդգծված՝ անկուսակցական մասսայի հետ սերտ կապն ամեն կերպ ամրացնելու խնդրին:

Նշելով ԿԿԲ կուսկազմակերպություննե-

րում մասսայի հետ բավականաչափ չկապված կուսակցական անդամների վորոշ խմբակների գոյությունը (հիմնարկային բջիջների անդամները, կուսակցական տընտեսվարների ու վարչական աշխատողների մի մասը և այլն), ելնելով նրանից, վոր մասսայական աշխատանքին մասնակցելը յուրաքանչյուր կոմունիստի պարտականությունն է, կոնֆերանսը վորոշում է կուսակցության այդ անդամներին ևս քաշել կարմիր բանակայինների մեջ մասսայական աշխատանքի (հատկացնելով դրան, համաձայն բջիջի հանձնարարության, ամիսը յերկու յերեկո):

13. Կոնֆերանսն ընդգծում է Կոմինտերնի 6-րդ կոնգրեսի հատուկ կարևոր նշանակություն ունեցող վորոշումները, վորոնք ամբողջ կուսակցության և բանվոր դասակարգի ուշադրությունն են գրավում պատերազմական վտանգի հարցի վրա: Մարտիկների ամբողջ մասսայի և պետկազմի կողմից այդ վորոշումների նշանակության ճիշտ ըմբռնման հետ միասին պետք է նշվի պետկազմի և մարտիկների վորոշ մասի մեջ «խաղաղ» տրամադրությունների գոյությունը, վորն արտահայտում է պատերազմի սպառնալիքի թերագնահատումը:



Կոնֆերանսը հանձնարարում է քաղմարմիններին և կուսկազմակերպություններին շարունակել Կոմինտերնի 6-րդ կոնգրեսի վորոշումների հիման վրա մարտիկների մեջ լայն ու համառ բացատրական աշխատանք տանել ԽՍՀՄ միջազգային դրության մասին, ուշադրությամբ հետևել միջազգային կյանքի ընթացիկ անցքերին, մարտիկներին ու պետկազմին շարունակաբար իրազեկ պահել այդ անցքերի նկատմամբ, ապահովելով դիտակից վերաբերմունքը դեպի ԽՍՀՄ մարտունակության բարձրացման, Կարմիր Բանակի մարտական հզորության ամրացման գործը, և դեպի բանակի զորամասերի մըշտական մարտական պատրաստության նվաճումները:

14. Կոնֆերանսն արձանագրում է պետկազմի լեվլին առողջ քաղաքական կացությունը, նրա հետագա քաղաքական ու ռազմականապես վորակավորման աճումը (ավելացել է բանվորական շերտն ու կուսակցական հագեցվածությունը, նշանակալից չափով բարձրացել է ռազմական կրթություն ստացած անձանց թիվը): Պետկազմի շրջանում բացասական յերևույթների վերացման, պետկազմի և կարմիր բանակայինների փոխհարաբերությունների, պետկազմի դեպի կար-

միր բանակայինների պահանջներն ու կարիքներն ունեցած նրբազգայության բարձրացման գործում ձեռք են բերված առաջին դրական արդյունքները:

Դրա հետ միասին կոնֆերանսը նշում է, վոր պետկազմի մի վորոշ մասը թույլ է ըմբռնում քաղաքական հիմնական հարցերը, առանձին դեպքերում հայտաբերելով քաղաքական պասիվություն, յենթարկվելով յերբեմն շրջապատող մանր-բուրժուական միջավայրի ազդեցության: Մի շարք դեպքերում, վոչ բավականաչափ նյութական-կենցաղային պայմանների, պետկազմի չափազանց ծանրաբեռնվածության հողի վրա նըշվում են անկման և զորացրման տրամադրությունների հայտաբերման առանձին դեպքեր:

15. Կոնֆերանսը գոհունակությամբ նշում է հրամանատարական ու քաղաքական կազմի համերաշխ միատեղ աշխատանքը և վճռականապես դատապարտում է Կարմիր բանակի պայմաններում յուրահատուկ ձևով արտահայտվող «սպեցակերության» առանձին դեպքերը՝ անկուսակցական պետկազմի վերաբերյալ:

16. Միջազգային պարագայի բարդացումը, սոցիալիստական շինարարության հսկա-



յական խնդիրները յերկրում, քաղաքականապես ու կուլտուրապես աճող Կարմիր բանակային մասսայի ղեկավարության ու դաստիարակության աճած պահանջները,—այդ բոլորը ստիպողական կերպով անհրաժեշտություն են թելադրում՝ հետագայում ուժեղացնել պետկազմի, նրա դաստիարակման, քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացման աշխատանքների ընդգրկումը կուսակցական ազդեցությամբ: Պետկազմի հետ աշխատանք տանելու հարցի մասին մինչև այժմ դ. եռ. շատ թույլ իրացված 6-րդ բանակային կուսկոնֆերանսի և բջիջների քարտուղարների 2-րդ համաբանակային խորհրդակցության վորոշումների լիակատար կենսագործումը—մեկն է՝ քաղմարմինների և բանակի զորամասերի կուսկազմակերպությունների հերթական գլխավոր խնդիրներից:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի անկուսակցական պետկազմի հետագա ներգրավմանը զորամասի քաղաշխատանքի մեջ, իրազեկ դարձնելու նրան բանակի քաղաքական աշխատանքի հերթական հիմնական խնդիրներին:

Պետկազմի հետ տարվող աշխատանքը պետք է կառուցվի նրա հարցումների և որ-

րամարտությունների ամենամանրագնին հաշվառման, դեպի նրա քաղաքական աճումն ունեցած մեծ վստահության, պետկազմի մեջ հասարակայնության զարգացման վրա: Այդ աշխատանքը պետք է դրվի քաղմարմինների ու զորամասերի համեմատաբար ավելի վորակյալ աշխատողների վրա, դրա կիրառմանը պետք է ներգրավվեն տեղական քաղաքացիական կազմակերպությունների ամենալավ ուժերը:

Կոնֆերանսը հատկապես ընդգծում է հրամանատարական ու քաղաքական կազմի, կուսակցական ու անկուսակցական պետկազմի աշխատանքում լիակատար միասնության հետագա ապահովման անհրաժեշտությունը, վորպես մեկը՝ բանակի մարտական պատրաստության և քաղաքական կացության ամրացման գլխավորագույն խնդիրներից:

17. Յերկրում դասակարգային պայքարի սրման պայմաններում, կուսակցության իդեոլոգիական ճակատի աշխատանքների և ավելի աճող նշանակության պայմաններում, Կովկասյան Կարմրադրոշ Բանակի բոլոր կուսակցական կազմակերպությունները պետք է առավելագույն յեռանդով ու կայունությամբ ինչպես իրենց ներքին աշխատանքում, նույնպես և անկուսակցական մարտիկների ու



պետկազմի մեջ տարած մասսայական աշխատանքում կիրառեն ազգային հարցի վերաբերյալ կուսակցության բոլշևիկյան քաղաքականությունը և պրոպագանդ անեն այդ քաղաքականության համար:

Կուսակցական կազմակերպություններն ամբողջապես և զորամասերի ղեկավար աշխատող կոմունիստները պետք է ամեն կերպ նպաստեն բազմազգ ԿԿԲ հետագա մարտական, յեղբայրական համախմբվածությանը և նրա զորամասերի միջև ամենօրյա անքակտելի կապի ամրացմանը:

18. ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի և բջիջների քարտուղարների 2-րդ Համաբանակային խորհրդակցության վորոշումների կենսագործման հետևանքով, սկսեցին ավելի ևս իր ժամանակին հայտաբերվել բանակի զորամասերի կյանքում ու քաղբարոյական դրության մեջ յեղած բացասական յերևույթները: Սակայն, այդ ուղղությամբ ունեցած նվաճումները դեռ միանգամայն բավականաչափ չեն:

Կոնֆերանսը հատուկ հաստատակամությամբ պահանջում է կուսակցական կազմակերպություններից՝ յեղած բացասական յերևույթների դեմ հետագա ավելի վճռական պայքար մղելու գործում առանց թուլացնե-

լու և գործնականորեն կիրառել կյանքում ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի հունիսյան վորոշումները և ընդգծում է, վոր առաջիկա շրջանի խնդիրն է—հասնել աշխատանքի այնպիսի դրման, վորպեսզի ապահովվի վոչ միայն իր ժամանակին ու լրիվ հականերգործումը բոլոր բացասական կարգի յերևույթներին, այլ և նրանց առաջացման հնարավորությունների կանխումը:

Կարմիր բանակայինների բարքի և քաղբարոյական դրության մեջ յեղած բացասական յերևույթները կանխելու համար անհրաժեշտ է ձգտել ու հասնել նաև, շարունակաբար կարմիր բանակային մասսայի մեջ գտնվող շարքային կուսակցականների ու կոմյերիտականների պատասխանատվության բարձրացման:

19. Կոնֆերանսը նշում է ԿԿԲ զորամասերի կարգապահության բավարար վիճակը, կարգապահական պրակտիկայի բարելավվումը և անհրաժեշտ է գտնում կարգապահական պրակտիկայի ամեն տեսակի խեղաթյուրումների վերացման համար հետագա աշխատանքը*):

*) Կարգապահության բնագավառի ավելի լրիվ խնդիրները նշված են ԿԿԲ զորքերի հր-



20. Կոնֆերանսը նշում է բանակի Ռազմական Տրիբունալի և դատախազության մեծ աշխատանքը և գտնում է, վոր կարգապահության հետագա ամրացման, բանակի քաղբարոյական դրության ամրացման և ռազմական ապարատում յեղած բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ պայքարելու գործում հեղափոխական որինականության ավելի ու ավելի աճող դերի հետ կապված, զգալի չափով ավելի լայն պիտի զորահավաքի յենթարկվի հասարակական ուշադրությունը՝ իրավական պրոպագանդի, հեղափոխական որինականության և նրա խախտողների դեմ մղվող պայքարի ուժեղացման հարցերի շուրջը: Կոնֆերանսն ուշադրություն է հրավիրում դատավճիռների և այլ պատժիչ միջոցառումների շուրջ տարվող հասարակական քաղաքական աշխատանքի անբավականաչափ լինելու վրա:

21. Կոնֆերանսը նշում է՝ հաշվետու շրջանում կուսքաղապարատի և կուսակցական կազմակերպությունների՝ պատերազմական ժամանակվան պատրաստվելու գործնական աշխատանքների լայն ծավալումը, վորը նշանակալից չափով նպաստում է քաղկազ-

րամատարի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում:

մի կադրերի վորակավորման բարձրացմանը։ Սակայն, այդ աշխատանքի հաշվառումն ու բոլոր գծերով ոգտագործումը բավականաչափ չէ, և հետագայում պահանջվում է վճռականապես բարելավել այն։

Կոնֆերանսն ընդգծում է ԲԳԿԲ ռազմական ու քաղաքական կորովի ուժեղացման գործում ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի դեկտեմբեր 3-ի հրամանի հատուկ կարևոր նշանակությունը։

Քաղկազմի ռազմական պատրաստության բնագավառում կոնֆերանսը նպատակահարմար է գտնում պարապմունքների կրուժոկային ձևերից անցնել հատուկ կարճատև կուրսերի կամ հավաքների կազմակերպման և քաղկազմին ավելի վճռականորեն քաշելու հրամկազմի հետ միատեղ պարապմունքներին և զորամասերին ու ստորաբաժանումներին հրամատարելու պրակտիկային։

22. Կուսկոնֆերանսն արձանագրում է, վոր յերկրային զորամասերը նախընթաց շրջանում ինչպես կադրի, նույնպես և փոփոխիկ կազմի մարտական պատրաստության և դաստիարակության գործում հասել են նըկատելի արդյունքների։ Բայց դրա հետ միասին նշվում են խոշորագույն թերություններ աշխատանքի մեջ.—



ա) ընդհանուր հավաքներին փոփոխիկ կազմի ներկայանալու տոկոսի վորոշ իջեցում, բ) հավաքներում աշխատանքի դեռ անբավականաչափ թափ ու վորակ, գ) փոփոխիկ կազմի հետ միջհավաքային աշխատանքի եպիզոդիկ բնույթ և թույլ ծավալում, դ) ազգային փոքրամասնություններից յեղած կարմիր բանակայիններին մայրենի լեզվով անբավականաչափ սպասարկումը։

Կուսկոնֆերանսն անհրաժեշտ է համարում.

ա) տեղական քաղաքացիական կազմակերպությունների հետ միասին, լայն հասարակական կարծիք ստեղծելու ճանապարհով, յերկրային զորամասերը պետք է առաջիկա հավաքներին նորակոչիկների և փոփոխիկ կազմի իր ժամանակին և լրիվ ներկայանալն ապահովող աշխատանք տանեն.

բ) Նկատի ունենալով հավաքների կարճատևությունն ու նրանց առաջ կանգնած խընդիրների մեծ ծավալը, յերրկային զորամասերը պետք է ամեն կերպ ձգտեն ու հասնեն, ինչպես նախապատրաստական շրջանում, նույնպես հավաքների շրջանում, բոլոր գծերով տարվող աշխատանքի թափի և վորակի ուժեղացման.

գ) հաշվի առնելով մեր առանձնահատկու-

թյուններն ու ռեալ հնարավորությունները, յերկրային զորամասերը պետք է քաղաքացիական կազմակերպությունների հետ միասին ձգտեն ու հասնեն փոփոխիկ կազմի (նախազինակոչիկների) հետ տարվող միջհավաքային աշխատանքների վորակական բարձրացման և անընդհատության ապահովման, առաջին հերթին փոփոխիկ կազմի ամենից ավելի կենտրոնացման (հիմնական) շրջաններում.

դ) Հավաքներում և միջհավաքային շրջանում ամեն կերպ բարելավել ազգային փոքրամասնությունների (կադրի և փոփոխիկ կազմի) սպասարկումը: Ուժեղացնել ազգային փոքրամասնություններից կրտսեր պետկազմ պատրաստելը յերկրային զորամասերի դպրոցներում:

23. Կոնֆերանսը նշում է՝ հաշվետու շրջանում բանակի բոլոր քաղմարմինների ղեկավար գործունեյության մեջ հսկողության վորոշ բարելավում՝ զորամասերում վերադաս մարմինների դիրեկտիվների կատարման համար, ստորին աշխատողների հրահանգավորման ուժեղացում և ոգնություն նրանց տեղերի աշխատանքներում:

Դրանց հետ միասին քաղմարմինների ղեկավար աշխատանքում պետք է նշվեն եյա-



կան թերություններ (մի շարք կարևորագույն դիրեկտիվներ և վորոշումներ ծայրահեղորեն դանդաղ են անցկացվում, կամ էլ բոլորովին չեն հասնում մինչև ստորին կազմակերպությունները. քաղմարմինների հրահանգչական աշխատանքում ցուցադրական աշխատանքը դեռ հեռու յե բավարար չափով գործադրվելուց. դեռ վոչ բոլոր քաղմարմիններն են հասել ամեն տեսակի դրությունների խիստ կրճատման և կենդանի ղեկավարության ռեալ ուժեղացմանը. քաղմարմինների աշխատողների մեջ դեռ պետք յեղած պատասխանատվությունը չկա՝ հանձնարարությունների կատարման վորակի և արագության համար:

Պետք է ընդգծել մշակվող պլանների դիրեկտիվների և այլ ղեկավար նյութերի վորակի բարձրացման անհրաժեշտությունը—հիմք ունենալով ստորին աշխատողների աճման նկատմամբ մեծ վստահությունը և նրանց ավելի լայն նախաձեռնություն տալը:

Զորամասերի համար հանձնարարություններ մշակելիս պետք է ամենամանրազննին կերպով հաշվի առնել նրանց կատարման ռեալ հնարավորությունները տեղերում:

24. Կոնֆերանսը նշում է կ. բանակայինների հետ տարվող քաղպարապմունքների

բովանդակության և մեթոդիկայի որոշ բարելավումը: Միևնույն ժամանակ պարապմունքների նկատմամբ բարձրացած պահանջները սովորում են այդ բնագավառում ունեցած մեր նվաճումները բավականաչափ չհամարել: Այդ մասին վկայում են.—ա) ծրագրերը չյուրացնողների դեռ բարձր տոկոսը, բ) վոչ բավականաչափ գիտակցական, երբեմն զուտ ձևական յուրացումը ծրագրերի կարևորագույն հարցերի (պրոլետարիատի դիկտատուրան, կուսակցության դերը, գյուղատնտեսության կոլեկտիվացման անհրաժեշտությունը), գ) դասակարգային գծի կոծկման դեռ ևս տեղի ունեցող դեպքերը քաղպարապմունքներում: Այդ թերությունների վերացումը պետք է ընթանա խմբակավարների հրահանգավորումը բարելավման, մշակվող կոնսպեկտների վորակի լավացման, քաղմարմինների և զորամասերի բոլոր ղեկավար քաղաշխատողների կողմից խմբակային ցուցումներ տալու սիստեմի իսկական և լայն զարգացման գծով: Կուսկազմակերպությունների կողմից պետք է ուժեղացվի ուշադրությունը քաղպարապմունքների բովանդակության և քաղպարապմունքներում կուսակցականների ու կոմյերիտականների ունեցած դերի նկատմամբ, վորպես լսարանը



կուսակցական ազդեցությամբ ընդգրկելու գործում խմբակավարի ակտիվ ոգնականներ:

25. Կոնֆերանսը նշում է՝ նախակոչիկների և փոփոխիկների մեջ անգրագիտության վերացման անբավարար վիճակը միջհավաքային շրջանում և բանակի զորամասերի թույլ մասնակցությունն այդ աշխատանքում: Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում մոտակա իսկ ժամանակում այդ ուղղությամբ ստեղծել վճռական բեկում, նպատակ ունենալով համապատասխան կոնտինգենտներին 100 տոկոսով ընդգրկել անգրագիտության վերացմամբ և հանձնարարում է ԿԿԲԲՎ, քաղմարմիններին և յերկրային զորամասերի քաղապարատներին ձգտել ու հասնել այդ հարցի առթիվ յեղած դիրեկտիվների ավելի յեռանդագին կիրառման:

26. Բարդացող աշխատանքի պայմաններում, բանակի պետկազմի կուսակցական և անկուսակցական կադրերի քաղաքական և ընդհանուր կրթական մակարդակի բարձրացումը մեծ կարևորություն ունեցող խնդիր է հանդիսանում: Կոնֆերանսն առաջարկում է բոլոր ղեկավար կուսակցական քաղաքական մարմիններին գործադրել բոլոր ուժերը ընդհանուր կրթական աշխատանքի իրապես լայն ծավալման համար: Կոնֆերանսն ա-

ռանձնահատուկ ուշադրություն է դարձնում կուսակցական ակտիվի տեսական պատրաստության վրա։

27. Կոնֆերանսն ընդգծում է արտադպրոցական պրոպագանդի հետագա բարելավման անհրաժեշտությունը՝ կարմիր բանակային ինքնագործունեության օրգանների (լենինկյունների խորհուրդների, ակումբների վարչությունների) ամեն կերպ ամրացման ճանապարհով և անկյուններում ու ակումբներում տարվող մասսայական գեղարվեստական աշխատանքների բովանդակության մեջ յեղած քաղաքական կայունության և այժմեյականության նվաճումների ճանապարհով։ Նշելով գրադարանային աշխատանքի չափ թույլ վիճակը, կոնֆերանսն ընդգծում է՝ գրադարանային գործի բարելավման ուղղությամբ քաղապարատի բոլոր օղակների կողմից չթուլացվող ուշադրության անհրաժեշտությունը։

28. Հակակրոնական պրոպագանդի բնագավառում կոնֆերանսը դնում է ամբողջ աշխատանքի ակտիվացման և կրոնի վրա լայն հարձակման հետագա ծավալման խնդիրը։ Հակակրոնական պրոպագանդը պետք է կրի կրոնի դասակարգային էության, ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության գործում



նրա ռեակցիոն և արգելափակող դերի սիստեմատիկ, հաստատորեն մերկացման բը-
՝նույթ։ Կոնֆերանսը ԿԿԲ բոլոր կուսկազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում՝ դասակարգային պայքարի սրման ժամանակակից պայմաններում հակակրոնական
պրոպագանդի աճած քաղաքական նշանակու-
թյան վրա։ Անհրաժեշտ է մոտագա շրջանում
ձգտել ու հասնել.—ա) անաստվածների
միության բջիջների աշխատանքների ծավալման, բ) հակակրոնական պրոպագանդի ար-
մատավորումը քաղլուսաշխատանքների ամ-
բողջ սիստեմում, վորպես նրա անհրաժեշտ
տարրը, գ) հակակրոնականների ակտիվի
կազմակերպումը, դ) կուսակցության բոլոր անդամներին ու կոմյերիտականներին ակտիվ աշխատանքի քաշելը։

29. Նշելով «Կրասնիյ Վոյինի» լիովին բավարար աշխատանքը և դիվիզիական թերթերի աշխատանքների հաջողությունները մարտավարական պարապմունքների և մանյովրաների պայմաններում, ինքնաքննադատության զարգացման աներկբայելի նվաճումները թերթերում, կոնֆերանսը գտնում է, վոր թերթերն ավելի մեծ չափով պետք է ինքնաքննադատության հաղորդիչները դառնան, վոր պետք է ամբողջ սրությամբ դնել

ծառայական և կուսակցական պատասխանատվության հարցը՝ բանակային ապարատի առանձին օղակների թերությունները մերկացնող թղթակցություններն անտեսելու համար: Անհրաժեշտ է նույնպես գործադրել բոլոր միջոցները, բարձրացնելու համար թերթերի ընթերցումը պետկազմի կողմից:

30. Նշելով, որ ռազմա-ուսումնական հիմնարկների համալրումն ընթացիկ տարում ավելացրել է կուրսանտների բանվորական շերտը, կոնֆերանսը գտնում է, որ հերթական հավաքագրման կամպանիայի ընթացքում համալրման բանվորական կորիզը պետք է կազմի ոչ պակաս 70 տոկոսից, որի հետ կապված պետք է սկսվի անմիջապես հավաքագրման կամպանիայի նախապատրաստական աշխատանքը, առանձնապես ԱԽՍՖՀ արդյունաբերական կենտրոններում:

Նշելով, որ ազգային դիվիզիաների քաղբաժինների կապը ռազմա-ուսումնական հիմնարկների հետ բավականաչափ չէ, կոնֆերանսն ընդգծում է այդ կապի ուժեղացման անհրաժեշտությունը:

31. Կոնֆերանսն ընդգծում է կարմիր զորանոցների ստուգատեսի կամպանիայի խոշորագույն նշանակությունը: Այդ կամպանիան պետք է ավելի հարմար ու դրա-



միջ դարձնի մարտիկների ու պետկազմի բնակարանները, սկիզբ դնի կարմիր զորանոցներում առողջ կուլտուր-կենցաղային պայմաններ ստեղծելու համար համառ ու սիստեմատիկ պայքարի: Կարմիր զորանոցների ստուգատեսը պետք է հասցնի բոլոր մարտիկների և պետկազմի աջակցության տնտեսական հանձնաժողովների նախաձեռնության բարձրացման, նրանց մըշտական պատրաստականությունն իրենց նախաձեռնությամբ օգնելու պետկազմին՝ զորամասերի տնտեսական սպասարկման բազմակողմանիորեն բարելավման գործում:

# ԲԱՆԱՁԵՎ

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով և քննելով ԿԿԲ հրամանատար ընկ. Ավկսենտյևսկու զեկուցումը, ԿԿԲ կուսակցական կազմակերպությունների VII կոնֆերանսը նշում է.—

1. Քաղաքի և գյուղի արտադրական ուժերի անընդհատ ու փոթորկալի աճումը, ծանր արդյունաբերության ավելի ու ավելի ծավալումը, վորպես յերկրի ինդուստրացման և մեր յերկրում սոցիալիզմի ամրացման հիմք, ԲԳԿԲ բոլշևիկյան ղեկավարություն—ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի կողմից կուսակցության քաղաքական գծի հաստատորեն կիրառումը բանակում և նրա ճիշտ բեկումն ու անդրադարձումը ԿԿԲ Հեղ. Ռազմ. Խորհրդի աշխատանքներում, պետկազմի, կուսկազմակերպությունների և քաղմարմինների հսկայական, լարված և համերաշխ աշխատանքի պայմաններում,— ապահովել են պրոլետարական դիկտատուրայի բանակի ջոկատներից մեկի, ԿԿԲ մար-



տական հզորության և պատրաստականության աճումը:

2. Կոնֆերանսն արձանագրում է ԿԿԲ լիովին կայուն քաղբարոյական դրությունը, կարմիր բանակային մասսայի քաղաքական գիտակցության և ակտիվության աճումը, կարգապահության, հրամանատարական ու քաղաքական կազմի կադրերի (ռազմաքաղաքական պատրաստության, կուսակցական և բանվորական շերտի) ամրացումը, մարտավարական պատրաստության բոլոր տարրերի աճումը, նյութական տեխնիկական բազայի ամրացումը՝ բանակի կյանքի բոլոր կողմերի նկատմամբ կուսակցության ազդեցության անընդհատ աճումով:

3. Դրանց հետ միասին ԿԿԲ—ում տեղ ունեն մեր աճման հակասությունները ու դըժվարություններն արտացոլող մի շարք հիվանդագին յերևույթներ ու թերություններ:

Այդ յերևույթները, վորոնք ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի հունիսյան վորոշումներում ստացել են բավականաչափ գնահատական ու բնույթագիր, ԿԿ բանակում կայանում են հետևյալում.— բյուրոկրատական խեղաթյուրումների առանձին դեպքերի գոյությունը բանակային ապարատում և պետ-

կազմի աշխատանքներում, կումովշչինայի, աչքակապություն, պետակազմի մասի կարմիր բանակային մասսայի կտրվածություն, կարգապահական քաղաքականության ծռվածքների, կոպտության և անախրս վերաբերվելու երևույթների, հարբեցողության, պետակազմի առանձին անձանց մեջ բարոյական քայքայվածության և վհատության տարրերի կոլեկտիվ ելույթների փաստերը, կարգապահական առանձին դեպքերը, հանցանքների դեռ մեծ քանակը, հարբեցողության դեպքերի ավելացման, սիմուլյացիայի, անհատների կողմից հրամանների չկատարման և կարմիր բանակայինների մեջ դասալքության դեպքերը:

4. Կոնֆերանսը հաստատապես հավանություն է տալիս աչքակապության դեմ պայքարելու համար ԿԿԲ Հեղ. Ռազմ. Խորհրդի քաղաքական և կազմակերպչական միջոցառումներին և կոչ է անում ԿԿԲ կուսկազմակերպություններին ու պետակազմին հետագա վճռական պայքար մղելու աչքակապության, թերությունները ծածկելու և կոծկելու և աշխատանքում կեղծ բարեհաջողության ամեն տեսակի տարրերի դեմ:

Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում վերա-



նայել հրաձգային, հրետանային մրցությունների և այլ նվաճումների ստուգման մինչև այժմ գործադրվող սխեման ու մեթոդները, ստեղծելու համար աչքակապության ամեն տեսակների վերացման պայմաններ:

5. Նշելով ինքնաքննադատության ծավալման հիման վրա խեղաթյուրումների և թերությունների դեմ պայքարելում արդեն իսկ ունեցած ռեյալ, թեպետ վոչ լիովին բավականաչափ նվաճումները, կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ուշադրություն դարձնել կարմիր բանակային մասսայի և պետակազմից եկող նկատողությունների և առաջարկների դեռ վոչ բավականաչափ օգտագործման վրա: Մասնավորապես, միանգամայն բավականաչափ չեն իրացվում կարմիր բանակայինների ընդհանուր ժողովների և կոնֆերանսների վորոշումները: Կոնֆերանսը հատուկ ուշադրություն է դարձնում ամբողջ կարմիր բանակային մամուլի հետ պետակազմի կապի ուժեղացման անհրաժեշտության վրա, («Կրասնիյ Վոյին», դիվիզիական թերթերը և գնդային մամուլը), շարունակաբար իր աշխատանքում հաշվի առնելով մամուլի թղթակցությունները

նված ցանկությունների ու առաջարկները, ոչ մի թղթակցություն և առաջարկություն չթողնելով անպատասխան և անուշադիր:

6. Կոնֆերանսը նշում է կարգապահության բավարար դրությունը բանակի զորամասերում:

Միևնույն ժամանակ կարգապահական պրակտիկայում շարունակում են տեղի ունենալ մի շարք լուրջ թերություններ.—միանգամայն բավականաչափ չեն գործադրվել նախազգուշական-դաստիարակչական միջոցները, և բավականաչափ չեն խրախուսանքի միջոցները. դեռ ևս շարունակում են տեղի ունենալ կարգապահական պրակտիկայի խեղաթյուրման դեպքեր:

Առաջիկա շրջանի խնդիրներն են—ամենավճռական կերպով բեկել կարգապահական քաղաքականությունը բանակի զորամասերում՝ դեպի նրա բարելավման և բոլոր դեպքերում այն պահանջներին խիստ համապատասխանելու կողմը, ինչպիսին առաջադրում է կարգապահական կանոնադիրքը—ԲԳԿԲ կարգապահական քաղաքականությունը վորոշող հիմնական դոկումենտը:

Անհրաժեշտ է հասնել այնպիսի դրության, վոր թույլ չտալ և վոչ մի թուլացում զոր-



մասերի մարտունակության վրա անմիջականորեն ազդող բոլոր հանցանքների դեմ պայքարելու գործում, հասնել կուլտուր կենցաղային հանցանքների վերաբերմամբ տուժերի խիստ միջոցների տոկոսի ամենավճռական իջեցման:

Դրա հետ միասին կոնֆերանսը նշում է, վոր ծառայությունը տանելու (պահակներ, ներքին վերակարգ և այլն) ընդհանուր բարելավման հետ միասին, դեռ բոլորովին բավականաչափ չէ կանոնադրքային պահանջների կատարման ճշտությունը:

Կոնֆերանսը քաղմարմինների, կուսկազմակերպությունների և պետկազմի հատուկ ուշադրությունն է հրավիրում հետմանյովրային շրջանում ծառայությունը տանելու խիստ վատացման վրա, վորը զուգադիպում է հերթական տարիքի արձակման հետ:

7. Կոնֆերանսն արձանագրելով հեղափոխական օրինականության հարաճուն դերը կարգապահության հետագա ամրացման, բանակի քաղբարոյական դրության կայունության և բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ պայքարելու գործում, անհրաժեշտ է համարում ուժեղացնել հասարակական կարծիքի կազմակերպումը դատական օրգանների (Զինվորական Դատախազու-

թյուն և Զինվորական Տրիբունալ) աշխատանքների շուրջ, ոգնություն ցույց տալով նրանց իրենց աշխատանքում, մասսայականացնելով այն և ամեն կերպ ապահովելով դատական պրոցեսների և դատավճիռների դաստիարակչական մեծ էֆֆեկտի նվաճումները:

Կարմիր բանակայինների դաստիարակության և բարոյապես-քայքայված տարրերի ազդեցությունից Կարմիր Բանակը պահպանելու խնդիրները, հաստատակամորեն հարց են առաջադրում արմատապես բարելավելու գործի պակաս բավարար դրումը տուգանային վաշտում, վճռականապես բարելավելով և ուժեղացնելով տուգանայինների ռազմական և քաղաքական դաստիարակությունը:

Դրա հետ միասին կոնֆերանսը նշելով չափազանց բարձր տոկոսն այն անձանց, վորոնց գործը հանձնվում են դատա-քննական մարմիններին, ատխորդական անհրաժեշտություն է համարում զորամասերի հրամանատարության ավելի ուշադիր ու զգույշ վերաբերմունքը քրեական հետաքննության հարուցելու հարցի հետագա մոտեցման և զորամասերում հետաքննություններ կատարելու վճռական բարելավման վրա: Վերջինս ձեռք կբերվի, մասնավորապես, զորամաս-



րում հետաքննության կատարողների հաստատուն կազմ ստեղծելու ճանապարհով, վորը պետք է ապահովի վերջիններիս աշխատանքի նկատմամբ կուսակցական ավելի լիակատար ղեկավարության հնարավորությունները:

8. Կոնֆերանսն արձանագրում է զորքերի ուսուցման և մարտական պատրաստության գործում ունեցած նշանակալից հաջողությունները, վորոնք կայանում են համազորական մարտ վարելու և կազմակերպելու, կարմիր բանակային մասսայի կողմից խմբակային մարտավարության եյության յուրացման գործում յեղած հաջողությունների զգալի զարգացման, հետևակի և հրետանու ճիշտ համագործակցության հիմնական պահանջների ամբողջական յուրացման, պետկազմի վերապատրաստության արդյունքների և մեթոդների բարելավման, մարտական հրաձգության կազմակերպման և անցկացման, նույնպես և լեռնային պայմաններում յերթեր կատարելու համար զորքերի ունեցած ձգտման և բնակչության ու զորքերի ոդային հարձակումների դեմ պաշտպանության (Բազու) ներգրավելու և ուսուցանելու գործում ունեցած վորոշ նվաճումների մեջ:

Դրանց հետ միասին կոնֆերանսը նշում է

մի շարք էական թերություններ.— զորքերի ոպերատիվ և տակտիկական ուսուցումների անբավարականաչափ պատրաստություն. ոպերատիվ վճիռների դանդաղ ընդունումն, որը հետևանք է զորքերի օգտագործման վարժությունների վոչ լրիվին բավարար լինելուն. զորքերի անբավականաչափ կայունությունը պաշտպանությունում, նրանց վոչ լրիվ համապատասխանությունը հետախուզությունում և պահպանությունում, որը հետևանք է տեղանքի նշանակության թերագընահատման նույնպես և հակառակորդի կըրակի և նրա պաշտպանության տեխնիկական միջոցների վոչ լրիվ հաշվառումը՝ մեր զորքերի հարձակման դեպքում, զորամասերի մարտական գործունեության քիչ վարժ ձմեռային շրջանում, շտաբների աշխատանքների թույլ կազմակերպումը դաշտային պայմաններում, վորի հետևանքով զորքերի ղեկավարումը կրում է յերկարաբանության, դանդաղկոտության և անկտրականության բնույթ: Քաղաշխատանքների ռազմական պատրաստությունում զգացվում է մարտում զորքերին ղեկավարելու անբավականաչափ մարտական մարզվածություն, շնորհիվ քաղմարմինների աշխատողների վըրակավորման և գործնական մարզությունների անբավականաչափ լինելուն:

1927 թվի արդյունքների հետ համեմատած բանակի մի քանի զորամասերում նկատելի են հրաձգային նվաճումները: Լեռնային մարտ մղելու փորձը բավականաչափ չէ:

9. Կոնֆերանսը գոհունակությամբ նըշում է յերկրի պաշտպանության և բնակչության ռազմականացման գործնական հարցերի նկատմամբ կուսակցական, խորհըրդային և Անդրկովկասի աշխատավորության մասսայական կազմակերպությունների ուշադրության վորոշ բարձրացումը:

Կոնֆերանսը գտնում է, վոր այդ դրական հիմքի վրա նշանակալից չափով աճում են քաղմարմինների և բանակային բոլոր կազմակերպությունների պարտականությունները՝ յերկրի պաշտպանունակության ամրացման ընդհանուր աշխատանքների և նրան ակտիվորեն մասնակցելու խնդրում: Դա պետք է արտահայտվի տեղական մարմինների և Պաջավխաքիմի բջիջների հետ կապի հետագա ուժեղացման և նրանց առօրյա աշխատանքներում ցույց արվող գործնական օգնության լայնացմամբ: Անհրաժեշտ է քաղաքացիական կազմակերպությունների ղեկավար ակտիվի և Անդրկովկասի գլխա-

կան հիմնարկությունների ուշադրությունը դրավել յերկրի՝ պաշտպանության պատրաստության հիմնական ու պրակտիկ հարցերի վրա, նկատի ունենալով նույնպես ռազմահետախուզական աշխատանքների ծավալման անհրաժեշտությունը, հաշվի առնելով իրեն՝ պետակազմի կատարելագործման անհրաժեշտությունը:

Կոնֆերանսը գտնում է, վոր հատուկ ուշադրություն պետք է դարձնել ողաքիմիական պաշտպանության կազմակերպման հարցերի վրա:

10. Անցած տարում նշվում են ԱԽՍՑՀ-ում յերկրային զորամասերի մարտական հզորության ամրացման բնագավառում հետագա նվաճումներ, վորոնք բնութագրվում են նախակոչային պատրաստության բարելավումով, հաջող անցած նորակոչային պատրաստությամբ և ընդհանուր հավաքներում մարտական պատրաստության բոլոր բնագավառների բավարար հաջողություններով:

Դրանց հետ միասին կոնֆերանսն արձանագրում է միջհավաքային աշխատանքների տակավին պակաս բավարար դրությունը և քաղաքացիական կազմակերպությունների այդ աշխատանքի գործնական ծա-



վալման բնագավառը ներգրավելու համար անբավականաչափ տեղաշարժությունը:

11. Յերկրային շինարարության դժվարին և թույլ տեղերը շարունակում են մնալ.—

ա) մի քանի զորամասերի և թիկունքային հիմնարկների վոչ այնքան բավարար շըրջայնացումը, վորը սոցիալական և կուլտուրական տեսակետից անդրադառնում է այդ զորամասերի համալրման վրա.

բ) Նյութական անբավականաչափ ապահովությունը (սեփական ճամբարներ չունենալը, գրանցված ձիակազմի և անկողինների բացակայությունը, վարժակայանների վոչ բավականաչափ ամուր ցանցը և նրանց կահավորության պակասավորությունները).

գ) մի քանի յերկրային զորամասերի հաստիքային կազմակերպության անկատար լինելը.

դ) ազգային փոքրամասնություններից յեկած կ. բանակայինների ուսուցման դըժվարությունները, վոր արդյունք են այդ ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվին տիրապետող պետակազմի կադրերի բացակայության:

Առաջիկա տարվա խնդիրներն են, ԱԽՍՑՀ յերկրային շինարարության հետագա զարգացումն ու կատարելագործումն արդեն

հանդիսացող դժվարությունների վերացման համար անհրաժեշտ միջոցառումների կիրառման հետ միասին, պետք է քաղաքացիական կազմակերպություններն ավելի ներգրավվեն, առանձնապես միջհավաքային աշխատանքների կազմակերպման և վորակային բարելավման գործի մեջ, դրա հետ միասին հասնելով յերկրային շինարարության բոլոր բնագավառների ամեն կերպ ուժեղացման:

12. Կոնֆերանսը նշում է, վոր ռազմաուսումնական հիմնարկների (Անդր. հեռակային դպրոց) աշխատանքների փորձը, կապված նրանց միացման հետ, լիովին արդարացրեց այդ միջոցառումը, նպաստեց արձակվող հրամանատարների վորակի ընդհանուր բարձրացմանը:

Կոնֆերանսն ընդգծում է շարային զորամասերի լավագույն հրամանատարների թվից ՌՈՒՀ-երի (ռազմա-ուսումնական հիմնարկների) համար դասավանդողների և հրամանատարական կազմի ավելի մանրազնին ընտրության անհրաժեշտության վրա:

Կուրսանտների ծառայողական հեռանկարների լայնացման և կատարելագործման նպատակով, ՌՈՒՀ-ներում ուժեղացնել ու բարելավել ռուսերեն լեզվի ուսումնասիրությունը:



Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ուժեղացնել ուշադրությունը կուրսանտների իդեոլոգիական և ինտերնացիոնալ դաստիարակության հարցերի վրա:

13. Կոնֆերանսն արձանագրում է զորամասերի տնտեսության բոլոր բնագավառների նյութական ապահովության անընդհատ աճումը, շարային հրամանատարների կողմից տնտեսության նկատմամբ ուշադրության և ղեկավարության ուժեղացումը, քաղմարմինների և կազմակերպությունների մեծ ուշադրությունն ու օգնությունը:

Դրանց հետ միասին կոնֆերանսը նշում է շարային պետկազմի կողմից դեռ տակավին անբավականաչափ ուշադրությունն ու ղեկավարությունը՝ զորամասի տնտեսության նկատմամբ, և քաղմարմինների ու կուսակազմակերպությունների անբավականաչափ օգնությունը տնտեսությանը: Դեռ վոչ բավականաչափ ծրագրային ու ռացիոնալ օգտագործումը, մասնավորապես, տնտեսական ֆոնդը ծախսելում:

14. 1928–1929 տարվա ուսուցման խընդիրները վորոշող հիմնական նպատակադրումն է հանդիսանում ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի դեկտեմբերյան վորոշումը:

Այդ նպատակադրումները կյանքում կիրառելու համար անհրաժեշտ է.—

ա) իր ժամանակին հաշվի առնել, ոչ միայն բոլոր զորամասերի համար ընդհանուր, այլ և տվյալ զորական միավորության համար կոնկրետ, նախընթաց նվաճումներն ու թերությունները, սկսած մանր ստորաբաժանումներից և վերջացրած խոշոր միավորություններով:

բ) Շտաբների անմիջական ղեկավարությամբ սահմանել զորական միավորությունների վարժական գործունեության կենդանի ղեկավարություն և վերահսկողություն, նկատի առնելով սխալների ժամանակին վերացումը, տրված ցուցումների կատարման ստուգումը և զորամասերի միջև նվաճումների փորձի փոխանակություն: Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել բոլոր հրահանգավորող և ստուգող անձնավորությունների կողմից պահանջների և գնահատականների միասնության վրա: Միաժամանակ պետք է ուշադրություն դարձնել մասնագետների ավելի լրիվ և ռացիոնալ օգտագործման անհրաժեշտության վրա:

գ) Զորքերի դաշտ դուրս գալն ու բոլոր վարժական պարապմունքները պատրաստել



նախորոք ու մանրամասնին, նպատակ ունենալով անտեսել ժամանակը զորքի մարզության համար:

դ) Մարտավարական հրաձգային պատրաստության բնագավառում հասնել հրացանային, գնդացրային ու հրետանային (կամ վերջինիս տեղի նշանակման) կրակի, տեխնիկական միջոցների, կրակի և կենդանի ուժերի մանյովրների սիստեմում, կազմակերպված մարտական հրաձգությունների հաջող արդյունքների:

Հանկարծակիություն, քողարկման տարրերը, յեղանակը և զորամասի ֆիզիքական դրության պանդանակերպությունը պետք է մարտական հրաձգություններում իրենց արտացոլումը գտնեն:

յե) Զորքերի մեջ մարտավարական արվեստի բարձրացմանը հասնել կենդանի, հետաքրքիր քաղաքական ու մարտավարական պարագա ստեղծելով, խաղացնելով հարձակման ու պաշտպանության, հատկապես տեխնիկայի միջոցները, նույնպես և փորոշանիկայի միջոցները, նույնպես և փորոշակլիրեն խմանալով զորքի տեսակների յուրահատկությունը:

Ինքնագործունեությունը, նախաձեռնությունը և վճիռների համարձակությունը պետք է մշակվեն կողմերի ուժերի և մի-

ջոցների փոխհարաբերության խիստ հաշվառումով և քաղաքական պարագայի սրությամբ։

գ) Արագ վճիռներ ընդունելու և զորքերի օգտագործման ունակություն դաստիարակել նոր տվյալներով բարդացրած վարժության կրկնողության ճանապարհով։

Շտաբների դաշտային դյուրաշարժությունն ու մարզությունը կատարելագործել նրանց մեծ չափով զորքերի մարտական դրության և մարտական գործունեության մոտեցնելու ճանապարհով։

Շտաբային հատուկ պարապմունքները անել դաշտում, կապի միջոցներով, և հատկապես մարզել տեխնիկայի ու նախնական կարգադրությունները անելու հարցերում։

է) Զորքերի ակտիվությունը դաստիարակել յուրաքանչյուր մարտական խնդրի քաղաքական ապահովության պարտադիր կազմակերպման ճանապարհով, պետակազմի անձնական օրինակով և կրակի, մանյովրման ու տեղանքի հնարագիտորեն օգտագործմամբ։

ը) Զորքերի կենդանի ղեկավարմանը հարկավոր է հասնել նրան օպերատիվ օգտագործման մեջ մարզվելու ճանապարհով



և հաստատակամորեն պահանջելով պետակազմից յուրացնելու ռազմաքաղաքական տերմինալոգիան։

թ) Բաղկազմի հետագա ռազմական վարժեցումն ուղղել հրամանատարելու և զորքերին կառավարելու մեջ նրա մարզվելու կողմը։

ժ) Զորքերի մարտական պատրաստության հաջող ղեկավարությունը պահանջում է կրտսեր և միջին պետակազմի պատրաստության հետագա կատարելագործում, որի համար անհրաժեշտ է ուժեղացնել ուշադրությունը կրտսեր հրամկազմի մեթոդական վարժության վրա նրա գործնական աշխատանքներում, մարտավարական և մեթոդական հարցերի հետագա հղկումը նորմալ ռազմական դպրոցներում և նրանց մեծ չափով մոտեցումը կյանքին ու դաշտային զորքերի պնահատությունը։ Մասնավորապես, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այդ տարրերի բարելավման վրա Անդրկովկասյան Հետևակային Դպրոցում և հրամանատարությունների դիվիզիաների ընդհանրապես ու ազգային դիվիզիաների մասնավորապես, ավելի ամուր ու կենդանի կապ սահմանեն դպրոցի հետ։

ծառայության պետակազմի

Գերակեաիկ

կատարելագործումը պետք է գնա նրա համար հատուկ դասընթացներ սահմանելու ճանապարհով:

ի) Կրտսեր հրամանատարների ամուր կադրեր ստեղծելու նպատակով շարունակել բարելավել գնդային դպրոցների համար կարմիր բանակայինների փորձական ընտրությունը:

15. Մատնանշված խնդիրների կատարման համար կոնֆերանսը հիմնական ու կարևորագույն նախադրյալ է համարում հետևյալները.—

«ԲԳԿԲ վարժա-մարտավարական պատրաստությունը 1928–1929 ուսումնական տարում պետք է ընթանա ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի հունիսյան պլենումի և բջիջների քարտուղարների յերկրորդ խորհրդակցության որոշումների կատարման նշանաբանի տակ:

Պետկազմի պատասխանատվության, նախաձեռնության և ակտիվության հայտաբերման համար բարենպաստ պարագայի ստեղծումը, կտրականապես վերացումն ու անողոք պայքարը՝ աչքակապության և վարժա-մարտական աշխատանքի նկատմամբ յեղած ձևական-բյուրոկրատական վերաբերմունքի դեմ, կարմիր բանակայինների



մեջ մարտական պատրաստության խնդիրների նկատմամբ ակտիվ վերաբերմունքի դաստիարակումը, հրամանատարական և քաղաքական կազմի սերտագույն կապն այդ աշխատանքում, կուսկազմակերպությունների և քաղապարատների ամենօրյա մասնակցությունն ու օգնությունը դրանում—այդ բոլորը միասին վերցրած պետք է հյուսեն ու ցեմենտեն ընթացիկ տարվա վարժա-մարտական ամբողջ աշխատանքը»:

16. Քաղմարմիններին և կուսկազմակերպություններին անհրաժեշտ է ուժեղացնել անմիջական մասնակցությունը՝ զորքերի մարտական ուսուցման և կազմակերպման մեջ, շարունակաբար կազմակերպելով պետկազմի և կարմիր բանակայինների հասարակական կարծիքը՝ հերթական, կարևորագույն վարժա-մարտական խնդիրների, նվաճումների ու թերությունների շուրջ, իր աշխատանքի ամբողջ սիստեմով աջակցելով դաստիարակելու պետկազմի մեջ ակտիվություն, նախաձեռնություն, համարձակություն և վճռականություն:

Պետկազմի ակտիվության բարձրացման համար վճռական բեկման պայմաններ ստեղծելը պահանջում է անհրաժեշտորեն կատարել հետևյալը.—«Նախաձեռնողական գոր-

ծողությունները պետք է ամեն կերպ խրախուսվեն։ Պետք է ներողամիտ մոտեցում լինի նախաձեռնության հայտաբերելու պայմաններում արված սխալների նկատմամբ։ Քաղմարմինները պետք է ակտիվ մասնակցություն ունենան այդ հարցի նկատմամբ հասարակական կարծիք ստեղծելում»։ (ԽՍ ՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի 1928 թվի դեկտեմբերի 3-ի 393-79 հրամանից)։

17. Նշելով վորոշ բարելավում բանակի համալրման, զորակոչայինների ընտրության և այդ աշխատանքում տեղական մարմինների մասնակցության հարցերում, կոնֆերանսը այնուամենայնիվ ընտրությունը համարում է դեռ վոչ բավականաչափ բավարար (առցխալապես անհարազատ տարրերի կողմից բանակի շարքերը թափանցելու յեզակի դեպքերը, բժշկական անբավականաչափ ընտրությունը)։

Կոնֆերանսն անբավականաչափ է համարում կուսակցական և բանվորական շեֆատարների աշխատողների կողմում, և հաստատորեն անհրաժեշտ է համարում այդ շեֆտի ավելացման համար ձեռք առնել անհրաժեշտ միջոցները։

18. Կոնֆերանսն արձանագրում է բանակի սանիտարական դրության և բժշկական կազ-



մի աշխատանքների բավարար լինելը։ Դրա հետ միասին, կոնֆերանսը նշում է վերջին ժամանակներս հայտաբերված վոջլոտության փաստերը բանակի մի քանի զորամասերում՝, բաղնիք-լվացքային գործի անբավարարությունը, և պետակազմի, քաղմարմինների ու կուսկազմակերպությունների անբավականաչափ ուշադրությունը Կարմիր Բանակի անձնական առողջապահության հարցերի նկատմամբ։ Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում վճռական միջոցներ ձեռք առնել վերացնելու համար նշված յերևույթը։

Բանակի պետակազմի մի մասի հյուծվածությունը, Ռազմական Վարչության նորմաներում կուրորտային բժշկության և հանգստի տների անբավականաչափ լինելը խորապես անդրադառնում է պետակազմի աշխատունակության վրա։ Կոնֆերանսը խնդրում է ԿԿԲ Հեղ. Ռազմ. Խորհրդին՝ համապատասխան մարմինների առաջ հարց դնել— կուրորտային տեղերի ավելացման, Բորժոմի հանգստյան տան լայնացման ու բարելավման և ԿԿԲ-ում հանգստյան տների հետագա ծավալման համար միջոցներ ձեռք առնելու մասին։

19. Զորանոցային շենքերի անբավարար, իսկ տեղ-տեղ էլ ծանր դրությունը պահանջում է շատ ավելի մեծ հատկացումներ՝ զորանոցների շինարարության, հիմնական և ընթացիկ վերանորոգումների համար, կոնֆերանսը խնդրում է ԿԿԲ Հեղ. Ռազմ. Խորհրդին՝ դնել այդ հարցը համապատասխան մարմինների առաջ:

Պետկազմի բնակարանային ճգնաժամը պահանջում է՝ նոր շինարարությանը հատկացված միջոցների ավելացումից բացի, ուժեղացնել կուսակցական ու կառավարական մարմինների ուշադրությունը: Անհրաժեշտ է ձգտել ու հասնել այդ հարցի մասին գոյություն ունեցող դեկրետների ու վորոշումների ճշգրիտ ու անվերապահ կիրառմանը (զինվորական ֆոնդի տարածության ազատումը քաղաքացիական անձնավորություններից, նոր շինարարությունից 10 տոկոսային հատկացումները և այլն):

Դրա հետ միասին կոնֆերանսը Հեղ. Ռազմ. Խորհրդի ուշադրությունն է հրավիրում անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու՝ բարելավելու համար Ռազմածովային ժողկոմատիաների ղեկավարման գրասենյակային աշխատանքը, մասնակի ապակենտրո-



նացման և ապարատի հետագա պարզեցման ու աժանացման իմաստով:

20. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում տնտեսմարմինների ու տնտեսապարատների աշխատանքի արմատական բարելավումը, մեծ ծրագրայնություն նրանց աշխատանքում, մեծ ուշադրություն ու անմիջական ղեկավարություն շարային պետկազմի կողմից, խնկական ու ամեն կերպ օգնություն և վերահսկողություն քաղմարմինների ու կուսկազմակերպությունների կողմից:

Անհրաժեշտ է ուժեղացնել տնտեսական աջակցության հանձնաժողովների աշխատանքը, հիմք ունենալով նոր դրությունը, ցույց տալով նրանց մեծ օգնություն ու ղեկավարություն կուսկազմակերպությունների կողմից:

Շինարարության ու վերանորոգումների վիճակը զորամասերում վորակապես լիովին բավարար չէ, միջոցների հաճախակի անտա-ցխնալ ծախսումը, չարաշահություն ու վարանումների դեպքերը պահանջում են Հեղ. Ռազմ. Խորհրդի և զորամասերի հրամանատարության մեծ ուշադրությունը՝ շինարարության ու վերանորոգումների հարցերի նկատմամբ և քաղմարմինների ու կուսկազմակերպությունների մեծ չափով ներգրավու-

մը շինարարության բոլոր թերությունների վերացման և ստուգման գործում:

21. Հաշվի առնելով Կովկասյան ռելյեֆի առանձնահատկությունները, կոնֆերանսը ԿԿԲ անհետաձգելի խնդիր է համարում՝ խորացնել լեռնային պատերազմ մղելու հարցերի մշակումը:

---



# ԲԱՆԱՁԵՎ

## ԿԿԲ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

1. Լսելով և քննելով բանակային կուսհանձնաժողովի հաշվետվությունը, ԿԿԲ կուսկազմակերպությունների VII կոնֆերանսը կուսհանձնաժողովի քաղաքական գիծը գտնում է ճիշտ և հավանություն է տալիս նրա աշխատանքներին:

2. Կոնֆերանսը նշում է, որ յերկրում դասակարգային պայքարի սրման և մանր բուրժուական տարրերի ճնշման ուժեղացման պայմաններում, որոնք անխուսափելիորեն անդրադառնում են և բանակում,—ԿԿԲ կուսկազմակերպությունը ցույց տվեց իրեն ամբողջապես առողջ և գաղափարապես կայուն: Նա խիստ հակահարված տվեց լենինյան գծից շեղված իդեոլոգիական բոլոր թեքումներին. բոլշևիկորեն յետ մղելով՝ բանակում բազա գտնելու համար տրոցկիստական տարրերի բոլոր փորձերը. կուսկազմակերպությունն այժմ իդեապես զինված է,

պայքարելու համար տվյալ շրջանում կուսակցության մեջ յեղած գլխավոր վտանգի—աջ թեքման և նրա նկատմամբ յեղած հաշտվողական վերաբերմունքի դեմ:

Դրան նպաստել են ԿԿԲ կուսկազմակերպությունների սոցիալական կազմի բարելավման նվաճումները—պրոլետարական կորիզի աճումն ընդունվողների մեջ (1926 թվին 19.2% բանվորներ, 1927 թվին 30% և 1928 թվին 44.4%), ծառայողների և այլքի թվի նվազումը, կուսակցության մեջ ընդունված գյուղացիներից չքավորների ճնշող գերակշռությունը:

3. Դրա հետ միասին, անցած տարվա ընթացքում կուսկազմակերպությունների կյանքում հայտաբերվել են մի ամբողջ շարք բացասական յերևույթներ.—

ա) աջ թեքման հարցում առանձին ընկերների մեջ վորոշ տատանումների ու յերերումների գոյությունը. աջ թեքման ռեալ վտանգի անբավականաչափ գնահատումը կարմիր բանակայինների (գյուղացիական) մասսայի մեջ տարվող աշխատանքների և իրեն՝ կուսկազմակերպության մեջ գյուղա-



ցիների նշանակալից քանակի պայմաններում:

բ) հիվանդագին յերևույթների զգալի աճումը, կապված զանազան կենցաղային ու ծառայական եթիկայի հակառակ հանցագործությունների և կուսդիսցիպլինայի խախտումների հետ (1928 թվին կուսհանձնաժողովները կուսակցական պատասխանատվության են յենթարկել ԿԿԲ ամբողջ կազմակերպության 4%-ին, ի դիմաց 1927 թվի 2.2%-ի. իսկ տեղերում, բջիջներում վերջնական լուծում ստացած հանցանքների տոկոսը հավասար է 12-ի).

գ) թերություններ կուսկազմակերպության աճման կանոնավորման հարցերում. բանվոր-բատրակներին պահեստի վոչ բավականաչափ լրիվ ոգտագործումը. իրենց շարքերի համալրման համար. ընդունվողների անբավականաչափ ստուգման դեպքերը և վորպես հետևանք դրա—գաղափարապես ու սոցիալապես անհարազատ ու անկայուն տարրերի թափանցումը:

4. Կոնֆերանսը հանձնարարում է բանակային կուսհանձնաժողովին, ՀամԿԿ (բ) Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշումների հիման վրա, իր ամբողջ աշխատանքի

հիմքում դնել կուսակցական կազմակերպու-
թյան ամբողջ խնդիրները, հետևյալ ճանա-
պարհով.—

ա) ապահովելով ԿԿԲ կուսկազմակերպու-
թյան լենինյան միասնականությունն ու գա-
ղափարական կայունությունը, պայքարն աջ
վտանգի, նրա նկատմամբ հաշտվողական վե-
րաբերմունքի և տրոցկիզմի ռեցիդիվի վոր-
ձերի դեմ.

բ) կուսկազմակերպության սոցիալական
կազմի հետագա բարելավումով.

գ) ուժեղացնելով վճռական պայքարը
կուսկազմակերպությունների մեջ եղած հի-
վանդությունների և թերությունների դեմ:

5. Կոնֆերանսն ընդգծում է, որ կու-
կազմակերպությունների ամրացումը ան-
հրաժեշտ նախադրյալն է՝ կենսագործելու
համար ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի հու-
նիսյան և ՀամԿԿ (բ) Կենտկոմի հունվարյան
վորոշումները: Կուսհանձնաժողովները պետք
է լիովին աջակցեն քաղմարմիններին, հետա-
գայում համախմբելու բանակի բոլոր կո-
մունիստներին, առանց ծառայական դրու-
թյան տարբերության, նրանց միջև լիակա-
տար միասնության հասնելու համերաշխա-
րեն իրացնելու համար այն հիմնա-
կան փաստաթղթերը, վորոնք ուղղված են



ամրացնելու բանակի վորպես պրոլետարա-
կան դիկտատուրայի զենքի հզորությունը:

Կոնֆերանսը հանձնարարում է բանակա-
յին կուսհանձնաժողովներին ապահովել այդ
փաստաթղթերի կիրառումը, պայքարել այդ
հարցերում եղած ամեն տեսակի տատա-
նումների դեմ:

6. «Կենցաղային փտածության փաստե-
րի», սանձարձակության ու հարբեցողու-
թյան, «վերևերի» հանդեպ հաճոյակատարու-
թյան ու քծնելու և բացահայտ այլանդա-
կությունները կոծկելու դեմ ամեն վճռական
ու հաստատորեն պայքար մղելու խնդիրները»
(ՀամԿԿ(բ) Կենտկոմի նոյեմբերյան պլե-
նումի վորոշումներից) պահանջում են.—

ա) տարին բջիջների հաշվետվական կար-
ծիքի գործահավաքը, իրեն սեփական շարքե-
րում եղած հիվանդությունների ու բոլոր
թերությունները վճռականապես արմատա-
խիլ անելու հարցերի շուրջը:

բ) Տարին բջիջների նախաձեռնության
ուժեղացումը՝ մերկացնելու և վերացնելու
համար հիվանդությունները. անթույլա-
տրելի փաստերի վերացումը, յերբ առան-
ձին կոմունիստներ իմանալով հիվանդու-
թյունների մասին, լռում են, կազմակեր-
պություն չեն հանում դրանց դեմ պայքարի և

հիվանդությունները բուժվում են վերից: Վերջնականապես հանել նրան, որ ամեն մի հանցանք, ում կողմից էլ որ նա կատարված լինի, անպայման քննվի բջիջում, այլ ոչ թե հանձնվի («հեղինակությունը կորցնելուց» վախենալով) միանգամից բարձր ինստանցիաներին:

գ) Ինքնաքննադատության հետագա վճռական ծավալումը կուսկազմակերպություններում, ԿԿԲԲՎ նամակի հիման վրա: Կուսհանձնաժողովները քաղմարմինների հետ միասին պետք է ապահովեն բոլոր կուսակցականների կողմից պակասությունների և հիվանդագին յերևույթների անկեղծ հայտաբերումը:

Ինքնաքննադատության նշանակությունը նվազեցնելու, նրա դեմ խոչընդոտներ ստեղծելու բոլոր փորձերին, նրա նկատմամբ յեղած ամեն մի անհամբերատար վերաբերմունքին—ում կողմից էլ որ դա բխելիս լինի—կուսհանձնաժողովները պետք է ամենավճռական ու խիստ հակահարված տան:

Կոնֆերանսը, մասնավորապես, կուսհանձնաժողովների ուշադրությունն է հրավիրում կուսակցականների կողմից գյուղթղթակիցներին հետապնդելու դեպքերի վրա. Այդպիսի ընկերները պետք է յենթարկվեն



կուսակցական ամենախիստ պատասխանատվության: Կուսհանձնաժողովները պետք է նույնպես ազդեն այն կուսակցական-պետերի վրա, որոնք անտեսում են գյուղթղթակիցների թղթակցություններն ու «Կրասնըյ Վոյին»-ի, ազգային դիվիզիաների թերթերի, նույնպես և պատի թերթերի հարցումները:

7. Կոնֆերանսը հատուկ ուշադրություն է հրավիրում պայքարելու հետևյալ յերևույթների դեմ.—

ա) Հարբեցողության դեմ, որը չնայած ՊՈԽՈ-ի, ԿԿԲԲՎ և բանակային կուսհանձնաժողովի բոլոր դիրեկտիվներին, չի նվազել, այլ ընդհակառակը, նշանակալից չափով ավելացել է: Հարբեցողության, հատկապես կոլեկտիվ հարբեցողության (զանազան բանկետներ, ընթրիքներ խմիչքներով), կուսկազմակերպությունները պետք է խփեն այժմ ամբողջ ուժով և հասնեն ինչ կերպ ուզում է լինի, նրա բոլոր արտահայտությունների վերացմանը: Կուսհանձնաժողովներին անհրաժեշտ է ավելի խստորեն մոտենալ կուսակցականների կողմից յեղած հարբեցողության դեպքերին.

բ) սկլոկաների, ամեն տեսակի բամբասանքների և ոչ ընկերական փոխհարաբե-

ուԹյունների դեմ: Կուսկազմակերպու-Թյուններում լիակատար մաքրության հասնելու նպատակով—աշխատանքի վրա մնայուն կերպով անդրադարձող այդ յե-րևույԹներին պետք է վերջ տալ.

գ) կուսակցական դիսցիպլինայի խախ-տումների, կուսակցական անկայունու-Թյան դեմ.

դ) կոմունիստների կողմից իրենց կու-սակցական դեմքը կորցնելու փաստերի դեմ, յերբ նրանք, փոխանակ պայքարելու զանա-զան ծռվածքների և խեղաԹյուրումների դեմ, իրենք մասնակցուԹյուն են ունենում նրանցում (աչքակապուԹյուն, կարգապա-հական պրակտիկայի ծռումներ, կոպիտ և անուշադիր վերաբերմունք կարմիր բանակա-յինների նկատմամբ, Ֆորմալիզմի և կազ-յոնշչինայի արտահայտուԹյուններ, կոլլեկ-տիվ յելույԹների մասնակցուԹյուն, զորա-ցրման տրամադրուԹյուններ, վորոնք անդ-րադառնում են աշխատանքի վրա): Այն ըն-կերներին, վորոնք խառնված են լինում այդպիսի հանցանքներում, անհրաժեշտ է յենԹարկել կուսակցական ամենախիստ պա-տասխանատվուԹյան:

8. ԿուսակցուԹյան այժմյան կազմի խիստ ստուգման և վճռական զտման մասին



ՀամԿԿ(բ) Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշման հետ կապված, կուսկազմակեր-պուԹյուններին ու կուսհանձնաժողովներին անհրաժեշտ է արդեն այժմ ձեռնամուխ լի-նել նախապատրաստական աշխատանքի, վորը պետք է արտահայտվի կուսկազմա-կերպուԹյունների կազմի հետ լավ ծանո-Թանալում: Այդ նպատակով անհրաժեշտ է նշանակալից չափով բարելավել կոմունիստ-ների անհատական աշխատանքի ստուգման սիստեմը, անցկացնել կուսակցականների հաշվետվուԹյուններ բջիջներում, ընդ վո-րում պետք է լինի ավելի խիստ մոտեցում, մեծ պահանջկոտուԹյուն՝ բջիջների քար-տուղարների համաբանակային 2-րդ խոր-հրդակցուԹյան կողմից (ընկ. ընկ. Վորո-շիլովի և Ստալինի զեկուցումների առԹիվ ընդունված բանաձևերը) բանակի կոմու-նիստների վրա դրված պարտականուԹյուն-ները կատարելում: Ընդ սմին հաշվի առնել և կոմունիստների կյանքի կենցաղային կողմերը:

9. Նշելով դեռ տակավին անբավականա-չափ ուշադրուԹյունը կոմսամոլում յեղած հիվանդագին յերևույԹների հարցի նկատ-մամբ, կոնֆերանսը, բանակի կոմսամոլի մասին յեղած նոր կանոնադրուԹյան հիման

վրա, պարտավորեցնում է կուսկազմակերպություններին ու կուսհանձնաժողովներին բարելավել իրենց աշխատանքն այդ բնագավառում հետևյալ ճանապարհով.—

ա) դնելով կոմյերիտականների մեջ յեղած հիվանդագին յերևույթների հաշվառում.

բ) ուսումնասիրելով աշակերտության խմբակների և կուսկազմակերպությունների մասնակցումը` կոմսոմոլում յեղած հիվանդությունների դեմ պայքարելու և նրանց վերացման գործում.

գ) լայնորեն ծանուցելով կոմյերիտականներին` կուսհանձնաժողովներում բողոքելու նրանց իրավունքի մասին.

դ) ուսումնասիրելով կոմսոմոլում յեղած հիվանդագին յերևույթների մասին հարցերը, սերտորեն կապելով այդ աշխատանքը ԿՅԵՄ կոմիտեներին կից յեղած վերահսկիչ հանձնաժողովների հետ:

10. Կուսկազմակերպությունների աճումը կանոնավորելու բնագավառում կուսհանձնաժողովները պետք է լինեն—կուսակցության մեջ ընդունվողների թվում 80%-ից վոչ պակաս արտադրական բանվորների ապահովման, վոչ բանվորական տարրերի ընդունելության առավելագույն սահմանափակման և գյուղատնտեսական բանվորների



ու բատրակների, նույնպես և չքավորներից ու կոլխոզնիկներից լավագույն ակտիվիստների կուսակցության մեջ ընդունելու գործում հառաջադիմության մասին—ՀամԿԿ(բ) Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշումներից:

Կոնֆերանսն ընդգծում է, վոր աճման կանոնավորման հիմնական խնդիրն է—ԿԿԲ կուսկազմակերպությունների պրոլետարական կորիզի սիստեմատիկ ավելացումը, առավելագույն չափով ոգտագործելով բանակում ունեցած բոլոր հնարավորությունները:

Դրա հետ միասին, ՊՈԽՕ-ի զեկուցման առթիվ ՀամԿԿ(բ) Կենտկոմի վորոշման հիման վրա անհրաժեշտ է «ուժեղացնել բանվորներից, բատրակներից և գյուղացիության չքավոր տարրերից յեղած շարքային կարմիր բանակայինների ներգրավումը կուսակցության մեջ»:

11. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում.—

ա) կուսակցության մեջ ներգրավելու համար ավելի լրիվ չափով ոգտագործել կարմիր բանակայինների բանվոր և բատրակ մասին: Դա, առաջին հերթին յենթադրում է յուրաքանչյուր բջիջի կողմից իր առոր—

բաժանման սոցիալական դեմքի ուսումնասի-րությունը և բջիջի աճման բնագավառում իր կոնկրետ խնդիրների նշումը.

բ) կուսակցության մեջ ընդունվող գյու-ղացիների ունեցվածքային մանրազնին ու-սումնասիրությունը (անհրաժեշտ դեպքում հարցումներ տեղերին).

գ) կուսակցության մեջ ներգրավել բան-վորների, բատրակների և չքավորների իրոք առաջավոր տարրերին:

12. Կոնֆերանս ուշադրություն է հրա-վիրում կուսհանձնաժողովների աշխատանք-ների մեթոդների բարելավման անհրաժեշ-տության վրա, համաձայն կուսակցության ամրացման լրջագույն խնդիրներին, վորոնք դրված են ՀամԿԿ(բ) Կենտկոմի նոյեմբեր-յան պլենումի կողմից:

Անհրաժեշտ է կուսկազմակերպություն-ների և կուսհանձնաժողովների աշխատանքը դարձնել ավելի բաց, անկուսակցական կար-միր բանակային լայն մասսաների ուշա-դրությունը գրավել կուսակցության աճման հարցերի և նրա մեջ յեղած հիվանդագին յերևույթների դեմ պայքարելու վրա: Վե-րացնել դռնփակ կուսժողովներում կուսակ-ցության մեջ ընդունելու դեպքերը. դռնբաց կուսժողովներում, նախապես պատրաստ-



ված, կազմակերպել կոնֆլիկտային գործերի քննություն. բարելավել կուսհանձնաժողով-ների աշխատանքների լուսաբանումը կար-միր բանակային մամուլում:

Կուսհանձնաժողովներն իրենց աշխատան-քում պետք է «ցած» իջնեն, անմիջականորեն մինչև նախնական բջիջն ու ԿՅԵՄ խմբակը, վորտեղ տեղում ստուգեն կուսակցության դիրեկտիվները՝ աճման կանոնավորման, հիվանդագին յերևույթների դեմ պայքարե-լու մասին, նույնպես և հաճախակի զեկու-ցումներ կազմակերպեն իրենց աշխատանք-ների մասին կուսակցական ու կոմյերիտա-կան ժողովներում:

## ԿՈՒՄ ԼԿՑԱԿԱՆ VII ԿՈՆՖԵՐԱՆՑՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԿԿԲ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

| №№ ըստ կարգի | Ազգանուն, անուն և հայրանուն | սոցիալ. դրութ. | կուսակց. ստաժը |
|---|---|---|---|
| | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ | | թ. |
| | Նիկոլսկի Իվան Նիկոլայեվիչ | բանվոր | 1917 |
| | ԱՆԴԱՄՆԵՐ | | |
| 1 | Վարդանով Իվան Աբգարովիչ | բանվոր | 1906 |
| 2 | Վացեկ Իվան Պրոկոֆյեվիչ | » | 1903 |
| 3 | Ժելուդև Գրիգորի Իգնատյեվիչ | » | 1918 |
| 4 | Զիմին Իվան Իվանովիչ | » | 1919 |
| 5 | Իմնայշվիլի Սամսոն Եվստաֆյեվիչ | » | 1919 |
| 6 | Կուլիև Ահմեդ Խալիլովիչ | » | 1920 |
| 7 | Լոկոտկով Վասիլի Վասիլյեվիչ | » | 1920 |
| 8 | Սապոգով Սերգեյ Պետրովիչ | » | 1920 |
| 9 | Տիգիշվիլի Ալեքսանդր Ալեքսանդր. | » | 1913 |



| №№ ըստ կ. | Ազգանուն, անուն և հայրանուն | սոցիալակ. դրութ. | կուսակ. ստաժ |
|---|---|---|---|
| 10 | Ֆաբրիցիուս Յան Ֆրիցևիչ | պրոֆ. հեղափոխ. | 1903 |
| 11 | Ֆեդորով Իվան Իվանովիչ | բանվոր | 1918 |
| 12 | Ցինման Իսակ Աբրամովիչ | ծառայող | 1920 |
| | ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ | | |
| 1 | Բուչենկով Նիկոլայ Միխայլովիչ | բանվոր | 1919 |
| 2 | Մագերամով Մանաֆ Մուրադ օղլի | » | 1920 |
| 3 | Պանտաս Կարլ Լուկիչ | » | 1917 |
| 4 | Ուգուլավա Ոնիֆան Լևոնովիչ | » | 1918 |
| 5 | Ուս Ալեքսանդր Իգնատյեվիչ | » | 1924 |
| 6 | Խաչիկօղլյան Թադևոս Զախարովիչ | » | 1920 |

# Հ. ՀՐ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 7 ՐԴ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

## *ԸՆԿ. Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ*

*Լսելով ընկ. Կոստանյանի զեկուցումը կուսակցության հերթական խնդիրների մասին, Հայկական Հրաձիգ Դիվիզիայի կուսակցական 7-րդ կոնֆերանսն արձանագրում է, որ յերկարատև ներկուսակցական պայքարի հետևանքով, Հայաստանի կոմունիստական բոլոր կազմակերպությունների միահամուռ պահանջով, վերանորոգված Կենտրոնական Կոմիտեյի նոր ղեկավարությունը, շնորհիվ իր վարած ընթացքին, բոլշևիկյան ուղիղ գծի, կարճ ժամանակամիջոցում հաջողվեց լիկվիդացիայի յենթարկել հին ղեկավարության քաղաքական սխալներն ու սկզբունքային սայթաքումը՝ կուսակցական քաղաքականության հիմնական հարցերում և այդպիսով իսկ ամբողջ կազմակերպությունը հանել ներկուսակցական աննորմալ դրություններից: Հին ղեկավարության այդ սխալները արտահայտվում էյին մեր պայքարի ու շինարարության բոլոր բնագավառներում. —*

դասակարգային սուր գծի բացակայու-
թյան մեջ, գյուղում մղած դասակարգային
պայքարի վերասվերացման (затушевание)
մեջ, իդեոլոգիական ու քաղաքական պայքա-
րի հարցերում, համբերատար վերաբեր-
մունքի մեջ դեպի ակտիվացող դասակար-
գային հակառակորդը, վոչ բավականաչափ
ուժեղ և սուր պայքարի մեջ ընդդեմ նա-
ցիոնալիզմի, դաշնակիզմի, սպեցիֆիզմի և
ամեն տեսակ հակապրոլետարական իդեոլո-
գիաների դեմ:

Հայաստանի պայմաններում այս բոլորի
արդյունքն յեղավ Հայաստանի Կոմկուսակ-
ցության Կենտկոմի նախկին ղեկավարու-
թյան յուրահատուկ աջ ազգայնական թե-
քումը:

Լիկվիդացիայի յենթարկելով աջ ազգայ-
նական, ոպորտունիստական թեքումը,
կենտրոնական վերանորոգված Կոմիտեն,
ակտիվորեն տոկուն քաղաքական գծի հի-
ման վրա սերտորեն իր շուրջը համախմ-
բեց Հայաստանի կուսակցության կազմակեր-
պությունները, վորպեսզի շարունակի իր
շարքերի վճռական բոլշևիկացումը:

Նոր ղեկավարությունն ապահովեց այն
հարցերի պարզ ու վորոշակի դրվածքը, վոր
ապահովում են ընթացիկ ու գալիք աշխա-



տանքների հաջողությունը, դարձյալ պրո-
լետարական, դասակարգայնորեն-սուր,
լենինյան, բոլշևիկյան գծի հիման վրա:

Նշելով մեր կուսակցության Հայաստա-
նում ունեցած մեծ նվաճումներն ու հաջո-
ղությունները, կոնֆերանսը շեշտում է այն
դժվարին խնդիրները, վոր դրված են յեղել
Հայաստանի Կոմկուսակցության առաջ:

Սերտ և անխզելի կերպով կապված լի-
նելով Անդրկովկասի ու Միության տնտե-
սական շինարարության հետ, յելնելով սո-
ցիալիզմի շինարարությունն ավարտելու
ընդհանուր խնդիրներից, մեր կուսակցու-
թյունը Հայաստանում, հավատարիմ մնա-
լով 15-րդ համագումարի և Կենտկոմի հե-
տագա պլենումների վորոշումներին, ել ա-
վելի մեծ յեռանդով պետք է շարունակի ար-
դյունաբերության և գյուղատնտեսության
զարգացման աշխատանքը, ապահովելով սո-
ցիալիստական սեկտորի հաղթանակը քաղա-
քում և գյուղում:

Կոնֆերանսը նշում է, վոր չնայած Հա-
յաստանի ամբողջ կոմկուսակցության հա-
ջող պայքարին՝ ընդդեմ Կենտկոմի նախկին
ղեկավարության աջ-ազգայնական տատա-
նումների և յերերումների, անհրաժեշտ է
առաջիկայում էլ նույն թափով շարունա-

կել պայքարն աջ վտանգի դեմ, այնքան, վորքան մեր աճման անխուսափելի դժվարությունները, հակառակորդի կատաղի դիմադրությունը, դասակարգային պայքարի սրում և այլն, մանր բուրժուական շրջապատում իրենց արտահայտությունն են գտնում մեր կուսակցության շարքերում՝ աջ թեքման և անձնատուրության ձևով, վորոնք մեր պայմաններում անխուսափելիորեն ազգայնական գունավորում են ստանում:

Շարունակելով անհաշտ բոլշևիկյան պայքարն ընդդեմ աջ թեքման և դեպի այն ցույց տված հաշտվողականության դեմ, վոչ մի կերպ չի կարելի մոռացության տալ պայքարը հակահեղափոխական, տրոցկիստական խմբավորման, ինչպես նաև դեպի այդ ցույց տված հաշտվողական տրամադրությունների դեմ:

Կոնֆերանսը Հայկական Դիլիջանի ամբողջ կուսկազմակերպության անունից վողջույն հղելով իր բոլշևիկյան Կենտկոմին, հայտարարում է, վոր ինչպես հին ղեկավարության սկզբունքային սխալների դեմ մղած պայքարում նա ընթանում էր առաջին շարքերում, այնպես էլ այժմ ամբողջովին և լիովին հավանության տալով նրա քաղա-



քական գծին, Դիլիջանի ամբողջ կուսկազմակերպությունը, ամրակուռ շարքերով համախմբելով Կենտկոմի շուրջը, նրա հաստատուն լենինյան ղեկավարությամբ կընթանա դեպի նորանոր հաղթանակներ ու նվաճումներ:

# ԲԱՆԱՁԵՎ

## ԿԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԸՆԿ. ՎԱՍԻԼՅԵՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1. Լսելով ԿԿԲ Քաղվարչության պետ ընկ. Վասիլյեվի զեկուցումը, Հայկական Դիվիզիայի կուսակցական 7-րդ կոնֆերանսն ամբողջովին ու լիովին հավանություն է տալիս Քաղվարչության քաղաքական գծին և արձանագրում է, վոր նրա ճիշտ ղեկավարությունն ու գործնական աշխատանքն ապահովեցին ԿԿԲ առաջ ծառացած բարդ խնդիրների հաջող կատարումը:

Քաղվարչության աշխատանքը նախընթաց շրջանում անցել է ամենակարևոր մոմենտների հաշվառումով, մոմենտներ, վոր վորոշում են ԽՍՀՄ միջազգային դրությունը և մատնանշված են Կոմինտերնի 6-րդ կոնգրեսի վորոշումներում և պրոլետարական պետության սոցիալիստական շինարարության խոշորագույն խնդիրները, վոր առաջադրված են կուսակցության 15-րդ համագումարի ու Կենտկոմի պլենումների կողմից:

2. Կոնֆերանսը նշում է խոշորագույն հա-



ջողություններ, վոր ձեռք է բերել կուսակցությունը սոցիալիստական ինդուստրիայի ասպարեզում և հաջողություններ գյուղատնտեսության համայնացման գործում վերջին տարվա ընթացքում, և գտնում է, վոր ՀամԿԿ(բ) Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշումը,—ծանր ինդուստրիայի հետագա աճման, գյուղատնտեսության զարգացման ու գյուղում սոցիալիստական սեկտորի ծավալման թափի ուժեղացման մասին,—ապահովում են հետագա հաջողությունները՝ «կապիտալիստական յերկրներին հասնելու ու նրանց անցնելու» լոզունգի իրականացման ճանապարհին:

3. Սակայն, մեր հսկայական աշխատանքները ուղեկցվել են խոշոր դժվարություններով, վոր բխում են գյուղատնտեսության հետամնացությունից, յերբ միաժամանակ աճում է դասակարգային պայքարի սրումը և քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերի դիմադրությունը: Այդ դժվարությունները իրենց արտահայտությունն են գտել կուսակցության մեջ առանձին սակավակայուն տարրերի կողմից դեպի աջ թեքման կողմը կուսակցության գլխավոր գծից գործած տատանումներում:

Աճման դժվարությունների հետ կապված,

մանր-բուրժուական շրջապատման պայման-ներում, վոր առաջացնում են կուսակցության շարքերում տատանումներ ու յերերումներ, կոնֆերանսը միանգամայն ժամանակին և անհրաժեշտ է համարում Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշումները՝ կուսակցության աճման ու սոցիալական կազմի կարգավորման և կուսակցությունը քայքայված տարրերից զտելու մասին:

4. Կուսկազմակերպությունների բանակային պայմաններում, յերբ գոյություն ունի վոչ պրոլետարական տարրերի ու «գյուղացիական տրամադրությունների» զգալի մաս, պայքարն աջ թեքման ու հաշտվողականության դեմ հատուկ կարևոր նշանակություն է ստանում: Հայաստանի պայմաններում աջ թեքումն անխուսափելիորեն ներհյուսվում է նացիոնալիզմի հետ: Զնայած բացահայտ ոպորտունիստական աջ թեքմանը ցույց տված միահամուռ ընդդիմադրության, անհրաժեշտ է հետագայում ծավալել աշխատանքն արմատացնելու համար կուսակցական մասսաների մեջ, վոր անհրաժեշտ է շարունակել ու խորացնել անհաշտ պայքարն ընդդեմ աջ թեքման և դեպի այն ցույց տված հաշտվողականության: Դրա հետ միասին անհրաժեշտ է



չթուլացնել պայքարը տրոցկիզմի մնացորդների դեմ, վորոնք տեղ-տեղ փորձում են աշխուժացնել իրենց աշխատանքը:

5. Աճման դժվարությունները, կուլակի դիմադրությունը գյուղում, դասակարգային պայքարի սրումը յերկրում, իրենց արտահայտությունն են գտնում մեր զորանոցներում «գյուղացիական տրամադրությունների» ուժեղացման ձևով: Զնայած նրան, վոր կուսակցության ու Խորհրդային իշխանության ձեռնարկած միջոցների հետևանքով, ինչպես նաև բանակում կուսկազմակերպության տարած աշխատանքով «գյուղացիական տրամադրությունները» զգալիորեն թուլացել են, բայց և այնպես մեր գյուղի հիմնական վերակառուցումը կոլլեկտիվացման և ինդուստրացման վոգով և ուժեղ հարձակումը կուլակի դեմ անխուսափելիորեն կառաջացնեն ավելի խոր «գյուղացիական տրամադրություններ», վորը կուսկազմակերպությունների առաջ դնում է կարևորագույն խնդիր, չթուլացնել իր ուշադրությունը դեպի այդ հարցը և ամեն կերպ բարելավել զորանոցում քաղաքական տրամադրությունները լիովին ընդգրկելու աշխատանքը:

6. Կոնֆերանսն արձանագրում է Կով-

կասյան Կարմրադրոշ բանակի զորամասերի միանգամայն կայուն քաղ-բարոյական վիճակը, շնորհիվ հրամքաղկազմի, կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների համերաշխ աշխատանքի՝ ստույգ և սկզբունքորեն տարվող այն գծի հիման վրա, վոր տվել եր ԽՍՀՄ ՀՌԽ հունիսյան պլենումը և ՀՌԽ ու ՊՈՒՌ-ի ճիշտ կուսաքաղաքական ղեկավարության:

7. Կոնֆերանսը միաձայն դատապարտում է ԽՍՀՄ ՀՌԽ վորոշումներին և ՀամԿԿ(բ) Կենտկոմի հոկտեմբերյան վորոշումներին մի այլ տեսակետ հակադրելու բոլոր փորձերը՝ ռազմական շինարարության հարցերի նկատմամբ (կուղեկավարության հարցեր, պետկազմի շարքերում կատարյալ միանձնության հաստատում), վոր իրենց արտահայտությունը գտան Բելոռուսական Ռազմական Շրջանի քաղկազմի մի մասի ու Ռազմաքաղաքական Տոլմաչևի անվան Ակադեմիայի բանաձևերում, համարելով այդ բանաձևերը սխալ և քաղաքականապես վնասակար:

8. Ռազմական շինարարության ասպարեզում ԽՍՀՄ ՀՌԽ հունիսյան պլենումի նշած թերությունները ամբողջովին ու լիովին վերաբերում են նաև մեր բանակին:



Քաղվարչության ղեկավարությամբ մենք ունեցանք ՀՌԽ պլենումի վորոշման ճիշտ յուրացում և քամանդիրների ու կուսկազմակերպությունների կողմից իրենց գործունեության մեջ այդ վորոշման արտացոլում: Վորոշման կենսագործման արդյունքները տակավին մեծ չեն: Բացասական յերևույթների դեմ մղած պայքարի ասպարեզում հաջողվածության հետ միասին մենք դեռ ես ունենք մի շարք եյական բացեր· բյուրոկրատիկ խեղաթյուրումներ պետկազմի ու կարմիր բանակային մասսայի փոխհարաբերությունների մեջ, անուշադիր վերաբերմունք դեպի կարմիր բանակային մասսայի նյութական կենցաղային պահանջները, ծովածքներ կարգապահական պրակտիկայի ասպարեզում, պետկազմի հետամնացություն օրինակելիության գործում, աննորմալ փոխհարաբերությունների դեպքեր պետկազմի կուսակցական և անկուսակցական մասի միջև, ծովածքներ դատի յենթարկելու ասպարեզում, աչքակապության դեպքեր, պետկազմի կուլտուր-քաղաքական սպասարկման անբավարար դրություն. այս բոլորի վրա հետագայում հարկավոր ե կենտրոնացնել ավելի մեծ ուշադրություն և ուժեղացնել պայքարը քաղ-

մարմինների, կուսկազմակերպությունների ու պետերի կազմի կողմից:

9. Թիֆլիսի կուսկազմակերպությունը Հայաստանի կոմկուսակցության վողջ կուսկազմակերպության հետ ակտիվ մասնակցություն ցույց տվեց ՀԿԿ(բ) Կենտկոմի ու Թիֆլիսի ղեկավարության աջ ազգայնական թեքման դեմ: Թիֆլիսի Քաղբաժնի սխալներն արտացոլում էյին իրենց մեջ Կենտկոմի հին ղեկավարության նույն իդեոլոգիական սխալները, վոր կրկնապատկվում էյին Թիֆլիսում կուսքաղղեկավարության սխալներով, վորի հետևանքով ղեկավարության կտրվածք էր ստացվում կուսկազմակերպությունից:

Կոնֆերանսը նշում է, վոր Քաղվարչությունը ավելի ճիշտ քաղաքական գնահատական Թիֆլիսում անցյալ ունեցող ներկուսակցական պայքարին և ժամանակին ճիշտ կազմակերպչական յեզրակացություն արավ, վորը նպաստեց ամենաարագ կերպով վերացնելու հին սխալների վնասակար հետևանքները և ամրացնելու Թիֆլիսի կուսակցական կազմակերպությունը: Կուսկազմակերպությունը աջ-ազգայնական թեքման դեմ պայքարից դուրս յեկավ քաղաքականապես և իդեոլոգիապես ավելի ամրացած,



համախմբված, իր ակտիվությունը բարձրացրած:

10. Արձանագրելով ներկայումս ստույգ փաստաթղթերի առկայություն Կարմիր բանակի շինարարության բոլոր հարցերի վերաբերմամբ,—ԽՍՀՄ ՀՌԽ հունիսյան վորոշում, բջիջների քարտուղարների համբանակային 2-րդ խորհրդակցության վորոշում, կոմիսարների ու քաղկազմի ոգնականների մասին կանոնադրություն, հրահանգ ՀամԿԿ(բ) բջիջներին,—փաստաթղթեր, վորոնք ապահովում են Կարմիր բանակի զորամասերի շինարարությունը, կոնֆերանսը շեշտում է, վոր անհրաժեշտ է կուսկազմակերպության ու պետերի կազմի ամբողջ գործնական աշխատանքն ուղղել յեռանդուն, հաստատուն և անդուլ կերպով այդ փաստաթղթերի կիրառմանը:

11. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում խնդրել ԿԿԲ Քաղվարչությանը հետագայում ձեռնարկել գործնական միջոցներ հետևյալ բնագավառներում.

ա) Ռազմական վարչությանը վերապահել պետկազմի համար բնակելի տները և բանակից զորացրված պետկազմին բնակարաններից արտաքսելու իրավունքը.

բ) ուժեղացնել յերկրային աշխատանքի

արտացոլումը ԿԿԲ ՔՎ ղեկավարող նյու-թերում.

գ) արագացնել համարանակային խորհրդակցության գումարումը յերկրային շինարարության հարցերի վերաբերյալ.

դ) միջոցներ ձեռք առնել յերկրային գնդի շտաբի մեջ մտցնելու ԼԿՅԵՄ պատասխանատու կազմակերպչի պաշտոն.

ե) ուժեղացնել կենդանի ղեկավարությունը Հայկական Դիվիզիայի աշխատանքի առանձին ճյուղերի նկատմամբ.

զ) արագացնել ԿԿԲ պատմության հրատարակությունը ԿԿԲ ՔՎ կողմից.

է) ավելացնել միջոցները ազգային լեզուներով գրականության հրատարակման համար:

Դրա հետ միասին կոնֆերանսը հրավիրում է ԿԿԲ ուշադրությունն այն բանի վրա, վոր ներկա տարում նախակոչյան հասակը բավականաչափ ընդգրկված չէ նախակոչյան պատրաստությամբ, և խնդրում է ԿԿԲ ՔՎ հարց հարուցել Անդրկովկասյան համապատասխան մարմինների առաջ այն մասին, վոր տեղական խորհրդային մարմինները տակավին պատրաստված չեն ստանձնելու ռազմա-վարժական ֆունկցիաներ և



անհրաժեշտ է հետաձգել այդ միջոցառումը մի տարով և այդպիսով հնարավորություն տալ տեղական մարմիններին պատրաստվելու հիշյալ ֆունկցիաները ստանձնելու համար:

# ԲԱՆԱՁԵՎ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով զեկուցում Դիվիզիայի Քաղաքական բաժնի աշխատանքի մասին, Դիվիզիայի կուսակցական 7-րդ կոնֆերանսը լիովին հավանություն է տալիս կատարած աշխատանքին և գտնում է քաղաքական գիծը ճիշտ:

Կոնֆերանսը գոհունակությամբ արձանագրում է, որ քաղբաժնի ճիշտ և հաստատուն ղեկավարությամբ Դիվիզիայի կուսկազմակերպությունը Հայաստանի ամբողջ Կոմկուսակցության հետ միասին դուրս յեկավ Հայաստանի Կոմկուսակցության Կենտկոմի հին ղեկավարության աջ-ազգայնական տատանումների, յերերումների ու թեքումների դեմ տեղի ունեցած պայքարից մեծ քաղաքական բոյանով, իդեոլոգիապես ամրացած և բարձրացրած իր ակտիվությունը:

Կոնֆերանսն արձանագրում է, որ աջ թեքման ու դեպի այն ցույց տված հաշտվողական վերաբերմունքի սխալների սկզբ-



ունքային սխալները, ընդհանուր առմամբ, գիտակցված է կուսակցական լայն մասսաների կողմից: Դիվիզիայի կուսկազմակերպությունը միահամուռ կերպով դատապարտեց մեր կուսակցության ներսում աջ թեքման ու նրա վերաբերմամբ հաշտվողականության յերևան գալը, միևնույն ժամանակ անդուլ կերպով պայքար մղելով տրոցկիզմի առանձին արտահայտությունների դեմ:

Կոնֆերանսն ուշադրություն է դարձնում նրա վրա, որ վերջին շրջանում աշխուժացել է տրոցկիստների հակահեղափոխական աշխատանքը Դիվիզիայի զորամասերում, որոնք փորձում են ոչ միայն քայքայիչ աշխատանք տանելու, այլև կազմակերպչորեն ձևավորվելու, աշխատելով այդ նպատակով արմատներ գցել զորամասերի կոմյերիտական կազմակերպություններում:

Ինքնաքննադատության լայն ծավալման գործում, ինքնաքննադատությունը թերությունների դեմ մղած պայքարի վերաբերյալ կուսկազմակերպության առօրյա աշխատանքում իսկական մեթոդի վերածման գործում, դեռ ևս չնչին հաջողություններ են ձեռք բերված: Առանձնապես ուշագրավ է ինքնաքննադատության թուլությունը կուսկազ-

մակերպության ներսում:

Կուսակցական կազմակերպության ներքին ամրացման հետ միասին կոնֆերանսն արձանագրում է մի շարք էական նվաճումներ Դիվիզիայի կուսակցական կազմակերպության աշխատանքում, Դիվիզիայի մարտական պատրաստության և մանավանդ՝ զորամասերի քաղաքական-բարոյական դրության ամրացման գործում՝ բջիջների քարտուղարների 2-րդ համաբանակային խորհրդակցության, Միության ՀՌԽ հունիսյան պլենումի և ՀամԿԿ(բ) Կենտկոմի Հոկտեմբերյան վորոշումների հետևողական կիրառման հիման վրա:

Ընդհանուր առմամբ նվաճումներն արտահայտվել են հետևյալ ձևով.

ա) զգալիորեն հաջողվել է վերացնել ճեղքվածքը Դիվիզիայի պետկազմի կուսակցական և անկուսակցական մասերի միջև.

բ) ուժեղացել է կուսակցական-քաղաքական ապարատի ուշադրությունը և աշխատանքի թափը դեպի Դիվիզիայի զորամասերի մարտական պատրաստության հարցերը.

գ) ուժեղացել է աշխատանքը ազգայնական տրամադրությունների հայտաբերման և նրանց դեմ մղած պայքարի նկատմամբ,



դրա հետ միասին բարելավվել է մարտիկների ընդհանուր քաղաքական տրամադրությունների ուսումնասիրության ու կանոնավորման նկատմամբ.

դ) վերջերս փոքր ուժեղացում է նկատվում զորամասերի կյանքի ու գործունեության բոլոր կողմերը կուսակցական ազդեցությամբ ընդգրկելու տեսակետից:

Դրա հետ միասին, կոնֆերանսն արձանագրում է Քաղբաժնի ակնհայտ նվաճումը զորամասերին ցույց տված կենդանի ղեկավարության, Դիվիզիայի առջև ծառացած հիմնական խնդիրների իրացման գործում պրակտիկ օգնության տեսակետից:

Կոնֆերանսը գոհունակությամբ նշում է, վոր Քաղբաժինը ձեռք է բերել վորոշակի արդյունքներ՝ ռազմական շինարարության հիմնական հարցերի նկատմամբ կուսկազմակերպությունների ու պետկազմի համախմբման գործում՝ Միության ՀՌԽ հունիսյան և ՀամԿԿ(բ) Կենտկոմի Հոկտեմբերյան վորոշումների հիման վրա:

Կոնֆերանսը գոհունակությամբ նշում է Դիվիզիայի պետկազմի անկուսակցական մասի թե՛ մարտավարական պատրաստության և թե՛ քաղաքական դրական ակտիվության աճումը:

Կուսակցական կոնֆերանսը կոչ է անում Դիվիզիայի բոլոր կուսակցական կազմակերպություններին վճռական պայքար մղելու պետկազմի անկուսակցական մասի ամեն տեսակ սխալ ըմբռնումների դեմ, ձեռնարկելով բոլոր միջոցները համախմբելու համար նրան կուսակցական կազմակերպությունների շուրջը:

Դիվիզիայի զորամասերի ամռան ուսուցման նախընթաց շրջանը ցույց տվեց մի շարք թերություններ զորամասերի ու պետկազմի մարտական վարժության մեջ, որոնցից հիմնականը հետևյալն են.

ա) կարմիր բանակային կազմը չունի բավարար ակտիվություն ու նախաձեռնություն, թույլ է դաշտային ու քողարկման կարգապահությունը.

բ) թույլ է կրտսեր հրամկազմի մարտավարական պատրաստությունը, նա բավականաչափ սովորքներ չունի իր ստորաբաժանումը ղեկավարելու գործում.

գ) միջին և ավագ հրամկազմը չունի բավական նախաձեռնություն, վճռականություն և որոշումներն ընդունելու համար արագություն, չունի նաև բավականաչափ ոխաեմ, ծրագրայնություն, ստույգություն և ընդունված որոշումները կազմակերպելու ու կիրառելու հմտություն:



դ) թույլ է զորամասերի դյուրաշարժությունը մարտավարական պատվերների կատարման ժամանակ:

Կոնֆերանսը գտնում է, որ Դիվիզիայի զորամասերը յեկած նորեկ կարմիր բանակայինների քաղաքական դրությունն ընդհանուր առմամբ և ամբողջովին առողջ է, կա ակնհայտ հետաքրքրություն դեպի ռազմական ուսուցումը: Անկասկած, նորեկն իր հետ զորամաս է բերել այն բոլոր տրամադրությունները, որ բնորոշ են մեր դիվիզիայի համար, և որոշվում են գյուղում դասակարգային պայքարի աճումով, ապրանքային սովով, գյուղատնտեսական մթերքների գներով և այլն:: Կոնֆերանսը գտնում է, որ բացասական տրամադրությունների թվից, որ պետք է կանգնած լինեն կուսակցական կազմակերպություններին ուշադրության կենտրոնում, անհրաժեշտ է ընդգծել հետևյալը.

ա) ազգայնական տրամադրությունների աճումը.

բ) դժգոհությունը հացահատիկային մթերքների, անասունների, բրդի, մեղրի և այլի ցածր գների դեմ.

գ) մեր անտեսության զարգացման ու բարձրացման ուղիների վոչ բավարար գիտակցումը, վորից և առաջանում են հակակոլտնտեսությունների, հակախորհտնտեսությունների տրամադրությունների տարրեր.

դ) արդյունաբերական ապրանքների սովի պատճառների չհասկանալը, այն ժամանակ յերբ գոյություն ունի մեր արդյունաբերության ընդհանուր աճումը և այլն:

Կոնֆերանսը նշում է, վոր չկա կարմիր բանակային, կրտսեր ու միջին պետկազմի առանձին սոցիալական խավերի քաղաքական տրամադրությունների մանրակրկիտ անալիզ: Ժամանակին և լրիվ չեն լուսաբանվում դիվիզիայի զորամասերում տեղի ունեցող բոլոր քաղաքական պրոցեսները:

Դրա հետ միասին, կոնֆերանսը նշում է մի շարք եյական թերություններ կուսակցական կազմակերպությունների գործնական աշխատանքում, վորոնցից հիմնականն հանդիսանում են հետևյալները.

ա) տակավին բավարար չէ զոդումը պետկազմի կուսակցական ու անկուսակցական մասերի միջև, վոր հանդիսանում է պետկազմի այդ յերկու խմբակների միջև անցյալներում յեղած ուղղակի անբարյացակամ վերաբերմունքի մնացորդ.



բ) տակավին բավարար չէ պետկազմի հոգատարությունը կարմիր բանակայինների մասին, բացակայում է ուշադիր վերաբերմունքը դեպի նրանց առօրյա, կենցաղային ու անտեսական կարիքները.

գ) Դիվիզիայի զորամասերում կան աչքակապության դեպքեր, կուսակցական կազմակերպություններն ու քաղաքական ապարատը պատշաճ կերպով և ժամանակին չեն արձագանքում այդ յերևույթին.

դ) կուսակցական կազմակերպությունների ներում չեն մշակվում և լրիվ չեն յու–բացված Բելոռուսական ռազմական շրջանի բարձր քաղկազմի մի մասի ու Տոլմաչևկայի կուսկոլլեկտիվի բանաձևերի սկզբունքային սխալների այն մասը, վոր վերաբերում են բանակի դրության գնահատականին, ընդհանրապես, և կուս–քաղապարատի դերի ու տեղի մասին մանավորապես, յերբ միևնույն ժամանակ կուսակցական կազմակերպության կողմից գոյություն ունի ընդհանուր բացասական վերաբերմունք դեպի տվյալ բանաձևերը:

Կոնֆերանսը, արտահայտելով դիվիզիայի կուսկազմակերպության կամքը, միահամուռ կերպով դատապարտում է ԲՌՇ բարձր քաղկազմի մի մասի և Տոլմաչևի անվան

Ռազմաքաղաքական ակադեմիայի բանաձևերը, վորպես ըստ էության միանգամայն սխալ, քաղաքականապես վնասակար և վորպես՝ չհամապատասխանող Կարմիր բանակի պետակազմի կադրերի համախմբման կարևորագույն խնդրին.

ե) բավարար չափով չի ծավալվում ինքնաքննադատությունը, մանավանդ կուսակցական կազմակերպության ներսում. վորի հետ միասին լինում են դեպքեր, յերբ չեն կասեցնում ղեկավարության ընդդեմ ծավալվող ինքնաքննադատությունը. իսկ այդ օբյեկտիվորեն թուլացնում է ներկուսակցական դրությունը և իջեցնում է դիվիզիայի մարտունակության կոեֆիցիենտը.

զ) թույլ է և բավարար չէ կուսակցական կազմակերպության կողմից մասնակցությունը զորամասի շինարարության հարցերին, վորի հետ միասին համարյա իսպառ բացակայում է ուշադրությունը դեպի տնտեսական-կենցաղային ու սանիտարական կարգի հարցերը.

է) բավարար չէ կոմունիստների մի մասի մեջ կուսակցական պատասխանատվության զգացմունքն իր կատարած աշխատանքի համար, թույլ է նաև կուսակցական կազմակերպությունների վերահսկողությունը դեպի



այդպիսիների պաշտոնեական գործունեությունը.

ը) թույլ է կուսակցական կազմակերպությունների աշխատանքն անկուսակցական պետակազմի հետ, թույլ է վերջինիս ներգրավումն ու առաջքաշումը հասարակական աշխատանքում.

թ) պակասում է կարմիր բանակայինների թե՛ քաղաքական և թե՛ կենցաղային տրամադրությունների ժամանակին ու լիակատար հաշվառումը և ժամանակին նրանց արձագանքումը.

ժ) ընդհանուր թուլություն և անկոնկրետություն է նկատվում քաղպարապմունքների ղեկավարության մեջ, վորոնք հանդիսանում են կարմիր բանակայինների քաղաքական դաստիարակության գործում հիմնական գործոններ: Բավարար չէ քաղպարապմունքներում համառ պրոպագանդը յերկրի սոցիալիստական վերակերտման մեջ կուսակցության ունեցած դերի, կուսակցության հերթական միջոցառումների դասակարգային իմաստի մասին թե՛ ինդուստրացման թափի և թե՛ գյուղի կոոպերացման գործում: Թույլ է քաղպարապմունքներում առանձին կարմիր բանակայինների դասակարգայնորեն խորթ քաղաքական տրամադրությունների հաշվառումն ու ոգտագործումը.

ժա) Թույլ է արտադպրոցական աշխատանքի և կարմիր բանակային հասարակական ինքնագործ կազմակերպությունների ղեկավարությունը.

ժբ) Կոմերիտմիությանը ցույց տված կուսղեկավարությունը մեծ մասամբ կոնկրետ չէ, ուղղված չէ կոմերիտական աջակցության խմբակներին օգնություն ցույց տալուն՝ բարձրացնելու համար իրենց աշխատանքը, ամրացնելու համար կազմակերպության ներսում դաստիարակչական աշխատանքը: Առանձնապես թույլ է կուսկորգին ցույց տված ղեկավարությունը: Կոմերիտմիության մեջ մի շարք հիվանդագին երևույթների գոյությունը (կոմերիտականների քաղաքական ու կենցաղային պաշխըմը, տրոցկիստների ագիտացիայի ազդեցության տակ ընկնելը), մի կողմից՝ և գյուղային կազմում կոմերիտականների տեսակարար մեծ կշիռը, մյուս կողմից՝ գյուղային կուսկազմակերպության առաջ դնում են՝ ԼԿՑԵՄ կազմակերպությունների նկատմամբ առավել լրիվ ու լուրջ ղեկավարության խնդրի ամբողջ կարևորությունն ու լրջությունը:

Ելնելով վերոհիշյալ նվաճումներից ու թերություններից, ինչպես նաև հետագա խնդիրներից, ինչպիսիք են՝ անդուլ պայքարը մեր կուսակցության լենինյան գլխավոր գծից գործած ամեն տեսակ տատանումների և մանավանդ, աջ թեքման և դեպի այն ցույց տված անսկզբունք հաշտվողականության դեմ, նացիոնալիզմի դեմ. միաժամանակ անդադար պայքարը տրոցկիստների հակահեղափոխական իդեոլոգիայի և աշխատանքի դեմ, կուսկազմակերպությունների իդեոլոգիական գրության անընդհատ աճման խնդիրները, բջիջների քարտուղարների համառնակային 2-րդ խորհրդակցության, Միության ՀԲԽ հունիսյան պլենումի, ՀամԿԿ(բ) Կենտկոմի հոկտեմբերյան վորոշումների, ԿԿԲ բարձր քաղկոմի դեկտեմբերյան խորհրդակցության վորոշումների, ինչպես նաև ռայկոմների ու պատասխանատու քարտուղարների գյուղական խորհրդակցության վորոշումների ավելի վճռական կիրառումը,—ելնելով այդ խնդիրներից կուսակցական VII կոնֆերանսը Քաղբաժնի ու գյուղային կուսկազմակերպության աշխատանքում անհրաժեշտ է համարում կենտրոնացնել աշխատանքը հետևյալ հիմնական հարցերի վրա, վորոնք պետք է լուծում ստանան ընթացիկ ձմրան շրջանում:

ա) Ուժեղացնել կուսկազմակերպության-

ների ուշադրությունը դեպի զորամասերի ընթացիկ մարտական պատրաստության ու վարժության հարցերը, ձգտելով հասնելու ամենավճռական բեկման կուսկազմակերպությունների ուշադրության գործում դեպի զորամասերի կյանքի նյութական-կենցաղային պայմանները (վոջլոտություն հեծ ու հրետ գնդերում և այլն).

բ) ուժեղացնել ուշադրությունը դեպի պետկազմի մարտավարական պատրաստությունը համաձայն Միության ՀՌԽ № 393/79 հրամանի պահանջների.

գ) ներկուսակցական աշխատանքի բնագավառում կենտրոնական տեղը պետք է հատկացվի ստորին բջիջի ամրացման խնդրին, վերածելով այդ բջիջը իրոք «վաշտի հասարակական-քաղաքական ամբողջ կյանքի կենտրոնի», վորն իր ազդեցությամբ ընդգրկում է նրա կյանքի ու կենցաղի բոլոր կողմերը.

դ) անհրաժեշտ է ուժեղացնել բջիջի վերհսկողությունը կոմունիստների պաշտոնեական գործունեության նկատմամբ, ընդ վորին հիմնական խնդիր ունենալով՝ ժամանակին օգնել ու կանխել հնարավոր սխալները.

ե) ուժեղացնել անկուսակցական պետ-



կազմի քաղաքական տրամադրությունների ընդգրկումը, աշխատանքը նրա հետ, նրա լայն ներգրավումն ու առաջքաշումը հասարակական աշխատանքներում, շարունակելով նյութական օգնություն ցույց տալ պետկազմին՝ նրա ինքնապատրաստման գործում.

զ) կարմիր բանակային կազմի հետ տարվող աշխատանքներում անհրաժեշտ է ավելի խնամքով հաշվի առնել առանձին քաղաքական տրամադրությունները, մանավանդ բացասական տրամադրությունները, վորոնք հանդիսանում են գյուղի թշնամական-դասակարգային տրամադրությունների արտացոլումը, ինչպես օրինակ՝ ազգայնական, հակակոլտնտեսական և այլ տրամադրություններ: Կարմիր բանակայինների հետ տարվող ամբողջ աշխատանքում անհրաժեշտ է համառ պրոպագանդ մղել կուսակցության դերի ու նրա ձեռնարկած միջոցառումների դասակարգային նշանակության մասին: Խորհուրդների վերընտրության կամպանիային պետք է նվիրել հատուկ ուշադրություն.

է) քաղպարապմունքներին և արտադպրոցական աշխատանքներին ցույց տված ղեկավարության մեջ կուսկազմակերպու-

թյունները պետք ե ձգտեն ավելի կոնկրետացնել տվյալ ղեկավարությունը, վորը պետք ե ուղղված լինի այն թերությունների վերացմանը, ինչպիսիք են՝ քաղպարապմունքները քաղաքական բովանդակությունից զրկելը, կուսակցության հերթական միջոցառումների դասակարգային եյության աղճատումը և այլն. անհրաժեշտ ե նաև ամենավճռական պայքար մղել խմբակավարների կողմից դեպի քաղպարապմունքները ցույց տված անպատասխանատվության ու անփութության դեմ.

բ) բջիջի աշխատանքում անհրաժեշտ ե ավելացնել դռնբաց կուսակցական ժողովների թիվը, և դրա հետ միասին, անհրաժեշտ ե նրա ուշադրությունը կենտրոնացնել վաշտի ուսուցումից, տնտեսությունից ու կենցաղից վերցրած առանձին հարցերի քննարկման վրա.

թ) ԼԿՅԵՄ ղեկավարության մեջ ամենագլխավոր խնդիրը հանդիսանում ե կոմսոմոլում հիվանդագին յերևույթների վերացումը, նրան մարտիկների մարտական ու քաղաքական դաստիարակության միջոցառումներում բջիջի իսկական գործնական, առորյա օգնականը դարձնելը: Կոնֆերանսն առանձնապես շեշտում ե, վոր անհրաժեշտ



և ուժեղացնել կուսկոլեգիին ցույց տված ղեկավարությունը և բջիջի կողմից կուսակցության աջակցող խմբակներին ցույց տված օգնությունը խմբակների աշխատանքի առանձին հարցերի լուծման մեջ:

Քաղբաժնի ղեկավարող աշխատանքի ասպարեզում կոնֆերանսն անհրաժեշտ ե համարում հետագայում ամեն կերպ ամրացնել և ընդարձակել կենդանի ղեկավարությունը, վորն ուղղված ե կուսակցական-քաղաքական ապարատի ստորին օղակների աշխատանքներում ցույց տված գործնական օգնությունը:

Կոնֆերանսը նշում ե, վոր թույլ ե Քաղբաժնի ղեկավարությունը յերկրային գնդի և մանավանդ 3-րդ գումարտակի նկատմամբ և անհրաժեշտ ե համարում ուժեղացնել յերկրային գնդին ցույց տրվող ղեկավարությունն ու նյութական օգնությունը տեղական խորհրդային կուսակցական մարմինների միջոցով:

Արձանագրելով միջհավաքային աշխատանքին ցույց տված ղեկավարության թուլությունը և այդ աշխատանքի խնդիրների ու նշանակության չհասկանալը տեղական խորհրդային, կուսակցական կազմակերպությունների կողմից, պետք ե ձգտել,

վոր ճիշտ դրվի այդ աշխատանքը և ուժեղացվի նյութական ոգնությունը:

Նշվում է, վոր անհրաժեշտ է իդեոլոգիական ճակատում տարվող աշխատանքի սիստեմի մեջ մտցնել ավելի մեծ ծրագրայնություն, վորոշակիություն և նպատակաձգտում. անհրաժեշտ է ամբողջ աշխատանքը տանել ՀԿԿ(բ) Կենտկոմի պլենումների՝ իդեոլոգիական հարցերի վերաբերյալ վորոշումների հիման վրա և մասսայականացնել ու կիրառել Հայաստանի Կոմկուսակցության առաջիկա 6-րդ համագումարի վորոշումները:

Արձանագրելով դիվիզիայի զորամասերում կարգապահության ակնհայտ աճումն ու կարգապահության գործնության բարելավումը, կոնֆերանսն ուշադրություն է հրավիրում այդ բնագավառում հետևյալ թերությունների վրա. չեն կարողանում դիֆերենցիայի ենթարկել այն զանցանքները, վորոնք անմիջորեն ազդում են զորամասի մարտունակության վրա, ինչպես նաև կուլտուր-կենցաղային զանցանքները, բավականաչափ որինակելի չէ ինքը պետկազմը, գերակշռում են կարգապահական տույժերի խիստ միջոցները և խեղաթյուրումներն այդ բնագավառում: Հանցագոր-



ծության աճումը հաշվետու ժամանակաշրջանում խնդիր է առաջադրում քաղաքական ու ռազմա-դատարանական մարմիններին ավելի ուշադրությամբ ու խորքով ուսումնասիրել այդ երևույթները: Կարգապահական գործնության ճիշտ ուղղությունը, հանցագործության հասցնող պատճառների ու պայմանների հաշվառումն ու վերացումը, հրամանատարության, քաղապարատի ու կուսկազմակերպությունների ուշադրությունը դեպի յուրաքանչյուր հանցագործություն, անհրաժեշտ պայմաններ կստեղծեն զորամասերում հանցագործությունը նվազեցնելու համար: Կոնֆերանսն ուշադրություն է հրավիրում դեպի զորամասերի կողմից դատի ենթարկելու հարցի ճիշտ կարգավորումը:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ուժեղացնել Քաղաքական բաժնի ղեկավարությունը տեղական ռազմական վարչության նկատմամբ և խնդրում է Քաղբաժնին միջոցներ ձեռք առնել քաղաքացիական կուսակցական կազմակերպությունների միջոցով հերթական զորակոչների ժամանակ զտելու ԲԳԿԲ շարքերը խորթ տարրերից:

Կատարելով ամբողջ աշխատանքում անհրաժեշտ է ձգտել հասնելու աշխատանքի

ռացիոնալիզացիայի, առավելագույն չափով կրճատելով ժողովները, խորհրդակցությունները, նիստերը և այլն և ռացիոնալ կերպով բաշխելով պարտականությունները, չընկնելով կատարվող աշխատանքի քանակի յետևից, այլ բարելավելով նրա վորակը:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում «Կարմիր Զինվոր» թերթի հրատարակությունը հասցնել շաբաթական 3 անգամի, ուժեղացնել թարգմանական գրականության հրատարակման աշխատանքը, մանավանդ մասնագիտական մասերի համար: Դրա հետ միասին, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն նվիրել կոմյերիտական կյանքի ու աշխատանքների լուսաբանմանը: Անհրաժեշտ է նույնպես շաբաթը մեկ անգամ լույս ընծայել կրտսեր հրամկազմի համար թերթիկ նրանց աշխատանքի հարցերի վերաբերյալ:

**ՀԿԿ**(բ) Նախկին Կենտկոմի սխալ ղեկավարության հետևանքով դիվիզիական 6-րդ կուսկոնֆերանսն ընդունեց մի բանաձև, վորը Դաշնակցություն կուսակցության սոցիալական եյությունը վորոշում էր, վորպես մանր-բուրժուական, մի վորոշում, վորը հիմնովին սխալ է: Դիվիզիայի 7-րդ



կուսակցական կոնֆերանսը գտնում է, վոր Դաշնակցությունը յեղել է ամբողջ ժամանակներում և այժմ էլ մնում է հայկական բուրժուազիայի ռազմատենչ կուսակցությունը, հակահեղափոխական կուսակցություն, գեն գցելով ներկայումս այդ կուսակցության սոցիալական եյության մասին բոլոր այլ վորոշումներն ու մեկնաբանումները: Կոնֆերանսը գտնում է, վոր հետագայում հիմնական աշխատանքներից մեկը պետք է լինի Դաշնակցության հակահեղափոխական եյության ու դերի մերկացման աշխատանքը:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ձեռնարկել հետևյալ գործնական միջոցները·

ա) պետկազմի, մանավանդ 3-րդ գնդի պետկազմի, բնակարանային հարցի բարելավման առթիվ·

բ) վարժականների կահավորման արագացման առթիվ·

գ) տեղական մարմինների միջոցով բոլոր թիկունքային աշխարհազորականներին (тыл. ополченцы) տուրքազրկման առթիվ·

դ) քաղաքացիական կազմակերպությունների հետ կապի ուժեղացման և մասսայական կապի կենսագործման առթիվ·

ե) թուրքերեն լեզվով անհրաժեշտ քանա-

կով գրականության ձեռք բերելու ուժով․

դ) ապամակինացման գծով քաղկոմի ինքնապատրաստման սխեմատիզացիայի առթիվ․

զ) կուսակցական լուսավորության և հրամկազմի պատրաստության ասպարեզում լայն ծավալել ինքնապարապման պատրաստությունը, ապահովելով կուսակցական կազմակերպությունների վերահսկողությունն ու ղեկավարությունը․

է) կարմիր բանակայինների կողմից դեպի «Անաստվածների» միությունը ցույց տված մեծ ձգտման հետևանքով անհրաժեշտ է բարձրացնել հակակրոնական աշխատանքի վորակը և խնդրել Քաղբաժնին մշակել «Անաստվածների» միության վաշտային բջիջներին անցնելու հարցը․

թ) ուժեղացնել անգրագիտության և մանավանդ ծառայության յերկրորդ տարում կիսագրագիտության վերացման թափը, վորպեսզի անգրագետ կարմիր բանակայինները բանակից արձակվեն գրագետ:

---



# ԲԱՆԱՁԵՎ

## ԴԻՎԿՈՒՍՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

1․ Լսելով Դիվկուսհանձնաժողովի զեկուցումը, 7-րդ կոնֆերանսը հավանություն է տալիս դիվիզիայի կուսհանձնաժողովի վերանորոգված կազմի աշխատանքին և քաղաքական գիծը համարում է ճիշտ:

2․ Ելնելով համակուսակցական խնդիրներից, կոնֆերանսը գտնում է, վոր ներկայումս մեղանում, հիմնականում, ամենից վտանգավորն է աջ, բացահայտ-ոպորտունիստական թեքումն ու հաշտվողականությունը:

Կոնֆերանսը միաժամանակ գտնում է, վոր բանակի կուսակցական կազմակերպությունները ազատ չեն այդ վտանգից․ ընդհակառակը, մեր կազմակերպությունները շնորհիվ գերազանցապես գյուղացիական համալրման, ավելի յեն յենթակա մանրբուրժուական տարրերի ճնշման, վորն, անկասկած, կարող է ազդել կուսակցական

կազմակերպությունների ակտիվակայուն և վոչ ակտիվ տարրերի վրա։

Կոնֆերանսը գոհունակությամբ արձանագրում է, վոր դիվիզիայի բոլոր կուսկազմակերպությունները միահամուռ կերպով, ամբողջովին ու լիովին միացան ՀամԿԿ (բ) Կենտկոմի հոկտեմբերյան պլենումին ու նոյեմբերյան պլենումի վորոշումներին։ Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում, վորպեսզի նորընտիր կուսհանձնաժողովը Քաղբաժնի հետ միասին յեռանդուն պայքար ծավալի աջ թեքման ու հաշտվողականության դեմ, վոտքի հանի ամբողջ կուսակցական մասսային ընդդեմ այդ վտանգի, չմոռանալով դաժան պայքարը թե՛ աշխուժացման նշաններ ցույց տվող տրոցկիստական կազմակերպության հակահեղափոխական գործունեության դեմ, և թե՛ ամեն տեսակ ազգայնական, դաշնակցական, հակահեղափոխական, մենշևիկական, սպեցիֆիկական տրամադրությունների դեմ։

Կոնֆերանսը նշում է, վոր ներկուսակցական պայքարի ժամանակ դիվիզիայի կուսհանձնաժողովը մնալով լենինյան դիրքերում, դիվիզիայի ամբողջ կուսկազմակերպության ու քաղմարմինների հետ միասին, վճռական դիմադրություն ցույց տվեց



տրոցկիստական ոպոզիցիային, նրա դեմ մղելով ճիշտ, հետևողական, բոլշևիկական պայքար։ Սակայն նշելով այն հազվադյուտ դեպքերը, յերբ մեր կազմակերպության անդամները դիվիզիայի ներսում ու դրսում տանում եյին ֆրակցիոն աշխատանք, վոր մեր կազմակերպության մեջ տրոցկիստական ոպոզիցիայի դեմ մղած պայքարի ընթացքում յեղել են զգալի քանակությամբ տատանվող ընկերներ, ինչպես նաև նկատի ունենալով այն դրությունը, վոր տվյալ ժամանակում տրոցկիստական ոպոզիցիայի մնացորդները հայտաբերում են աշխուժացման ակնհայտ նշաններ, Դիվիզիայի 7-րդ կուսկոնֆերանսն անհրաժեշտ է գտնում շարունակել հետագա անխնա, վճռական պայքարը տրոցկիզմի իդեոլոգիայի դեմ, ինչպես նաև ջախջախված նախկին ոպոզիցիայի մնացորդների աշխուժացման յուրաքանչյուր փորձի դեմ, մերկացնելով կուսակցական ու կոմյերիտական լայն մասսաների առաջ նախկին տրոցկիստական ոպոզիցիայի ամբողջ մենշևիկական հակահեղափոխական եյությունը։

Միաժամանակ կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում լուրջ ուշադրություն դարձնել կուսակցության յերիտասարդ անդամների

լենինյան դաստիարակության խնդիրների վրա և մանավանդ այն ընկերների դաստիարակության վրա, վորոնք ներկուսակցական պայքարում ցուցահանել են տատանումներ ու լքերումներ. անհրաժեշտ է հոգել նրանց վրա, ստեղծել նրանց համար բարենպաստ և առողջ պարագա, վորպեսզի նրանք կարողանան կուսակցական գործնական աշխատանքում զգալ ու շտկել իրենց անցյալ սխալները:

3. Կոնֆերանսը նշում է, վոր Տիֆլիսյան կուսկազմակերպությունը Հայաստանի ամբողջ կոմկուսակցության հետ միասին առողջ, վճռական պայքար մղեց ՀԿԿ (բ) Կենտկոմի նախկին ղեկավարության քաղաքական սկզբունքային կոպիտ սխալների դեմ, վորոնց արդյունքները մեր պայմաններում ընդունեցին յուրահատուկ աջ-ազգայնական թեքում: Այդ սխալները չեյին կարող չանդրադառնալ և անդրադարձան Տիֆլիսյան կուսակցական-քաղաքական ղեկավարության վրա: Այդ ներկուսակցական պայքարից, վորն իր հիմքում ուներ ամբողջովին սկզբունքային-քաղաքական հող, ինչպես Հայաստանի ամբողջ Կոմկուսակցությունը այնպես էլ Տիֆլիսյան կուսկազմակերպությունը դուրս յեկան հաղթանակով,



քաղաքականապես ավելի զոդված, իդեյապես ավելի միաձույլ:

Կոնֆերանսը նշում է, վոր ՀԿԿ(բ) Կենտկոմի հին ղեկավարության դեմ մղած պայքարի ընթացքում Տիֆկուսհանձնաժողովի կազմի մեջ չի յեղել միահամություն, նրա անդամներից վոմանք ակտիվ ու բացահայտ պաշտպանել են հին ղեկավարությանը, և այդպիսով իսկ կուսհանձնաժողովն իր ամբողջ կազմով, վորպես միասնական ղեկավար մարմին, չկարողացավ հավանություն տալ ու ղեկավարել կուսակցական մասսաների պայքարը:

Կոնֆերանսը հավանություն է տալիս և գտնում է միանգամայն ճիշտ ԿԿԲ Կուսհանձնաժողովի ու Տիֆլիսյան կուսհանձնաժողովի կազմակերպչական յեզրակացությունները:

4. Նշելով ներկուսակցական դեմոկրատիայի խախտման մի քանի կոպիտ դեպք անցյալում և կուսակցական աշխատանքը ղեկավարող ընկերների կողմից վարչականացման տենդենցներ, կոնֆերանսը շեշտում է, վոր կուսհանձնաժողովն անցյալում վոչ մի միջոց ձեռք չի առել այն անձանց դեմ, վորոնք խախտել են ներկուսակցական դեմոկրատիան: Դրա հետ միասին կոնֆերանսը

նշում է, որ կուսակցական լայն մասսաները և մանավանդ շարքային յերիտասարդ ընկերները տակավին բավական չափով չեն յուրացրել ներկուսակցական դեմոկրատիայի սկզբունքների կիրառման սահմաններն ու աստիճանը Կարմիր Բանակի պայմաններում: Դրանով էլ բացատրվում է այն դրությունը, յերբ կուսակցական ընկերները, իսկ յերբեմն մինչև իսկ բջիջներն անցյալում պահանջել են առաջ քաշման ու նշանակման խնդիրները քննարկել կուսակցական ժողովներում:

Յելնելով դրանից, կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում.

ա) ամենավճռական պայքար մղել ներկուսակցական դեմոկրատիայի ու կուսաշխատանքների վարչականացման յուրաքանչյուր փորձի դեմ, մի կողմից՝ նկատված կոնկրետ օրինակների վրա, և մյուս կողմից՝ ապահովել լայն հնարավորություն քննադատության, կուսակցական մտքի, ինքնագործունեության և կոմունիստների լիակատար ընտրականության համար.

բ) կուսակցական լայն մասսաներին անհրաժեշտ է ծանոթացնել գործնական աշխատանքների ընթացքում ներկուսակցական դեմոկրատիայի սկզբունքներին, նրա կի-



րառման ձևերին ու միջոցներին թե ընդհանուր առմամբ և թե՛ մասնավորապես՝ Կարմիր բանակի պայմաններում.

գ) առանձին կոմունիստների ու բջիջների կողմից քաղապարատների գործունեությանը միջամտելու տենդենցները, նշանակումների, առաջքաշումների և այլ հարցերի նկատմամբ, անհրաժեշտ է ժխտել նույնպիսի վճռականությամբ, ինչպիսի վճռականությամբ պետք է կռվել ներկուսակցական դեմոկրատիայի պահանջների խախտման դեմ.

դ) Կոնֆերանսը հանձնարարում է կուսհանձնաժողովին Քաղբաժնի հետ միասին ավելի խնամքով ուսումնասիրել ներկուսակցական դեմոկրատիայի կիրառման հարցերը, որպեսզի հետագայում հնարավոր լինի նրանց կողմից ապահովել լայն ներկուսակցական դեմոկրատիան:

5. Կոնֆերանսը նշում է, որ դեռևս բավականաչափ զարգացած չէ ինքնաքննադատության լոզունգը թե՛ կոմյերիտական և անկուսակցական կարմիր բանակային մասսաների և թե՛ պետակազմի մեջ: Կոնֆերանսը գտնում է նույնպես, որ թույլ է ուշադրությունը դեպի կուսակցական մասսայի հայտաբերված թերություններն ու նրանց վերացման թափը:

6. Կոնֆերանսը նշում է, որ նկատված են ինքնաքննադատության լոզունգը նեղ շրջանակներում դնելու տենդենցներ, ինչպես նաև այն հանգամանքը, յերբ ինքնաքննադատության կարգով, քննադատելով միմյանց, յերբեմն կուսակցական ընկերները խռովում են իրարից, փչանում է նրանց փոխհարաբերությունները և այլն։ Յելնելով այդ դրությունից, անհրաժեշտ է հետագայում կռվել նման յերևույթների դեմ, և մյուս կողմից՝ ավելի խորացնելով ու ծավալելով ինքնաքննադատությունը, միաժամանակ, թույլ չտալ հրամանների, կանոնագրքերի, նշանակումների և առաջքաշումների քննադատություն։

7. Դիվիզիայի 7-րդ կուսկոնֆերանսը հանձնարարում է կուսակցական հանձնաժողովին հետագայում, ավելի մեծ չափով քան մինչև այժմ, Քաղբաժնի հետ միասին շարունակել աշխատանքի կոնտակտ, համաձայնեցված գիծը։

Կուսակցական-քաղաքական աշխատանքի բոլոր այն հիմնական խնդիրները, որ ծառացած են դիվիզիայի Քաղբաժնի առջև, վերաբերում են նաև կուսհանձնաժողովին։ Վերջինիս ամբողջ գործունեության մեջ այդ խնդիրները պետք է գտնեն իրենց լիա-



կատար ու կոնկրետ արտահայտությունը։ Դիվիզիայի կուսհանձնաժողովի աշխատանքը պետք է կառուցված լինի այնպես, որ նախ նա համապատասխանի Քաղբաժնի՝ դիվիզիայի ռազմական ու կուսակցական շինարարության նկատմամբ ընդունած կուրսին և յերկրորդ՝ լայն չափով աջակցի Քաղբաժնի գծին և նրա առաջ ծառացած խնդիրների հաջող իրացմանը։

## ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ ՈՒ ՍՈՑԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

### I

Դիվիզիայի կուսկոնֆերանսը քննարկելով կուսակցական կազմակերպության աճման ու սոցիալական կազմի կանոնավորման արդյունքները, շեշտում է մի շարք զգալի նվաճումներ, որ ունի կուսակցական կազմակերպությունն այդ բնագավառում և ձեռք են բերված գլխավորապես ու մեծ մասամբ ընթացիկ տարվա վերջին 8–9 ամիսների ընթացքում։

Կուսակցական կազմակերպության աճման ու սոցիալական կազմի կանոնավորման ասպարիզում մեզանում յեղած հիմնական նվաճումները հետևյալներն են.

ա) ուժեղացել է ձգտումը դեպի կուսակցությունը (տրված է 1463 դիմում ընդդեմ անցյալ տարվա 624-ի), ավելացել է կուսակազմակերպության աճման թափը համեմատած անցյալ տարվա հետ: Այս տարվա 9 ամսվա ընթացքում կուսակցության մեջ ընդունված է 318 հոգի, ընդդեմ ամբողջ 1927 թվի 162-ի:

բ) Շնորհիվ աճման նկատմամբ լուրջ և մեծ ուշադրության, մենք ունենք զգալի նվաճումներ նաև կուսկազմակերպության սոցիալական կազմի բարելավման գործում. առ 1-ն հոկտեմբեր 1928 թիվ բանվորները կուսկազմակերպություններում հաշվվում էին 188 հոգի, ընդդեմ 1927 թվի հունվարի 1-ին եղած 43-ի:

գ) Նոր ընդունվածների մեծամասնությունը կազմում են բանվորներն ու բատրակները: 1928 թվին կուսակցության մեջ ընդունված բանվորների ու բատրակների թիվը կազմել է 166 հոգի, ընդդեմ 1927 թվի 72-ի:

դ) Կուսակցության մեջ ընդունվածների կազմում աճել է առաջին տարվա ծառայության կարմիր բանակայինների թիվը, և 1905 թվին ծնված կարմիր բանակայիններից ընդունվել են կուսակցության մեջ 113 հոգի



ընդդեմ 27 թվին 1904 թվի ծնված 34-ի և 26 թվին 1903 թվի ծնվածների 13 հոգու:

ե) Աճել է կոմբջիջների թիվը և ավելացել է կուսկազմակերպության շարքային խավի քանակը:

զ) Համեմատած անցյալ տարվա հետ ուժեղացել է թեկնածուներից անդամ փոխադրելու թափը. վերջին 9 ամսում փոխադրված է 183 հոգի, ընդդեմ 1927 ամբողջ տարվա 153 հոգու:

## II

Այս նվաճումների հետ միասին կոնֆերանսն անհրաժեշտ է համարում շեշտել հետևյալ էական թերությունները.

ա) Վաշտային կոմբջիջները մեծ մասամբ չեն կարողացել բավականաչափ բարելավել իրենց աճման կանոնավորումը: Կոմբջիջների աճումը շատ հաճախ ընթանում է տարերային, անծրագրային կերպով:

բ) Բավարար կերպով չեն դրված կուսկազմակերպության աճման օժանդակների քանակական-որակական հաշվառումը, ուսումնասիրությունն ու մշակումը:

գ) Տակավին թույլ է դրված անհատական քաղդաստիարակչական աշխատանքն ու կուսակցության մոտեցումը մոտ կանգնածնե-

րից, բանվորներից, բատրակներից ու չքավորներից, կարմիր բանակայինների միջև:

դ) Թույլ է կուսակցության ու կոմյերիտմիության մեջ մտնելու ձգտումը գիվլիգլխայի ազգային փոքրամասնությունների աշխատավորների կողմից (թուրքեր, յեզդիներ, ռուսներ):

ե) Բավարար չէ կոմբջիջներում կուսակկանոնավորման մասին դիրեկտիվների քննարկումը:

զ) Բավարար չեն, յերբեմն բացակայում են, կուսհանձնաժողովների ու կուսբյուրոյի կողմից կոնկրետ դիրեկտիվներ առանձին կոմբջիջների աճման ու սոցիալական կազմի կանոնավորման մասին:

է) Կոմբջիջների, իսկ հաճախ նույնիսկ կուսբյուրոյի ու կուսկոլեկտիվների կողմից նկատվում է վոչ բավարար լուրջ ուշադրություն դեպի կուսակցության աճման խնդիրները, վորն արտահայտվում է ընդունվողների, և մանավանդ գյուղացիներից ընդունվողների գույքային դրության, վոչ բավարար ուսումնասիրության մեջ, վորի հետևանքով կուսակցության շարքերն են սողոսկում մեզ համար խորթ տարրեր, ինչպես այդ ցույց տվեցին անցյալի փաստերը:



ը) Կուսակցության մեջ գտնվում ավագներից չընդունվածները տակավին կազմում են մեծ տոկոս:

III

Յելնելով գիվլիգլխայի կուսակցական կազմակերպության աճման ու սոցիալական կազմի կանոնավորման վերոհիշյալ նվաճումներից ու թերություններից, գիվլիգլխայի կուսակցական 7-րդ կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում հետագայում ավելի ևս սրել գործարանների կուսկազմակերպությունների և առաջին հերթին նախնական կոմբջիջների, ուշադրությունը դեպի այդ խնդիրները, վորպես կուսակցական շինարարության կարևորագույն հարց: Կոնֆերանսը նշում է, վոր սոցիալիստական շինարարության ծավալման առթիվ դժվարությունների, յերկրում դասակարգային պայքարի սրման ու պատերազմի աճման վտանգի պայմաններում մեր հիմնական խնդիրներն են հանդիսանում՝ էլ ավելի բարձրացնել գիվլիգլխայի մարտունակությունն ու կարգապահությունը, ավելի ևս ուժեղացնել կուսկազմակերպության ղեկավար դերն ու ազդեցությունը գործարանների կյանքի ու շինարարության բոլոր կողմերի վրա և գիվլիգլխայում պարզ,

վորոշակի դաստիարակչային—քաղաքական գծի ապահովման վրա։ Դրա համար անհրաժեշտ է հետագայում ավելի ևս ուժեղացնել բանվորներին ու բատրակներին կուսակցության մեջ քաշելը։

Դրա հետ միասին, անհրաժեշտ է ավելի ևս վճռականորեն կանոնավորել կուսակցական կազմակերպության սոցիալական կազմը, նախապատրաստական աշխատանք տանելով կուսակցության շարքերից անխնա զտելու բոլոր սոցիալապես խորթ, բյուրոկրատացած, բարոյալքված մասսաներին և կուսակցությունից կտրված տարրերին, վորը ներկայումս ավելի քան յերբևէ ունի խոշոր քաղաքական նշանակություն մեր ամբողջ կուսակցության համար։

## IV

Այդ բնագավառում կոնֆերանսն առաջարկում է, վորպես հերթական և կոնկրետ խնդիրներ մոտագա շրջանի համար հետևյալը․

1․ Նորընտիր կուսհանձնաժողովը պետք է իր ամբողջ գործունեյության ընթացքում կենտրոնացնի կուսակցական կազմակերպության ուշադրությունը նրա սոցիալական կազմի սիստեմատիկ բարելավման խնդիր—



ների վրա՝ Համ ԿԿ (բ) 15-րդ համագումարի, Համ ԿԿ (բ) Կենտկոմի նոյեմբերյան պլենումի և կոմբջիջների քարտուղարների համարանակային 2-րդ խորհրդակցության վորոշումների անշեղ կիրառման հիման վրա։

2․ Անհրաժեշտ է հետագայում ավելի համարձակ ու վճռականորեն ներգրավել կուսակցության շարքերը բանվորներից ու բատրակներից կարմիր բանակայիններին, նախապես ուժեղացնելով նրանց մեջ քաղդաստիարակչական աշխատանքը, նրանց համախմբելով յերկրի սոցիալիստական շինարարության խնդիրների շուրջը։ Միաժամանակ անհրաժեշտ է շարունակել կուսակցության շարքերը ներգրավել մեզ ամենից
մոտ կանգնած ակտիվ ու քաղաքականապես
պատրաստված կարմիր բանակայիններին
կոլտնտեսականներից,
չքավորներից ու
աշխատանքի ընթացքում
ինչպես նաև մեր
միջակ տարրերից,
ստուգված լավագույն
դրությունը խնամքով
նրանց գույքային
ստուգելուց հետո։
ուսումնասիրելուց ու
ծառայողների և այլքի նկատմամբ անշեղորեն ղեկավարվել Համ ԿԿ (բ) Կենտկոմի
նոյեմբերյան պլենումի վորոշումով։
կոնֆերենսն անհրաժեշտ է համարում ըն—

դունելության ժամանակ դիֆերենցիալ վերաբերմունք ցույց տալ դեպի սոցիալական տարբեր խմբակների պատկանող կարմիր բանակայինները, վորպեսզի մեր շարքերը չսողոսկեն պատահական, անկայուն ու խորթ տարրեր, վորի համար անհրաժեշտ է հարկ յեղած չափով կապ պահպանել տեղական կուսակցական, խորհրդային ու կոմյերիտական կազմակերպությունների հետ՝ ըստ դիմում տվողների բնակավայրի:

3. Կոնֆերանսը կուսակցական կազմակերպություններին առաջադրում է, վորպես անհետաձգելի խնդիր ու նպատակադրում, վորպեսզի մոտ ապագայում կոմբջիջները լիովին ընդգրկեն աճման ու սոցիալական կազմի կանոնավորման խնդիրները և իրենց գործունեության այդ ասպարեզի մեջ մտցնեն ավելի ծրագրայնություն և ուսումնասիրեն կուսակցության շարքերն անցնելու ձգտման սոցիալական ու քաղաքական պատճառները:

Այդ նպատակով կուսբյուրոն ու դիվիզիայի կուսհանձնաժողովները պետք է իրենց առօրյա աշխատանքի պրոցեսում կոմբջիջներին ցույց տան իրական, գործնական օգնություն, նախնական հետազոտական աշխատանքներից հետո, սիստեմատիկ կերպով իրենց նիստերում լսելով կոմբջիջների զեկուցումները և յելնելով տվյալ բջիջի աշխատանքների պայմանների առանձնահատկություններից, տալ նրան կուսկազմակերպության մեջ բանվորների ու բատրակների տեսակարար կշռի անընդհատ բարձրացման խնդիրը:

4. Ուժեղացնել առաջին տարվա ծառայության կարմիր բանակայինների ընդունելության թափը, առաջին հերթին բանվորներից ու բատրակներից՝ շարքային խավի ավելի մեծ հագեցման համար և զորացրման շրջանում կանխելու համար բջիջներում շարքային կուսակցականների բացակայությունը:

5. «Առանձին դեպքերում ցուցահանվում է վոչ բավարար պահանջկոտություն դեպի կուսակցության մեջ ընդունվողները: Բջիջները ընդունում են չստուգված ու անպատրաստ ընկերներին, վորի հետևանքով կուսակցության մեջ է ընկնում պատահական, անկայուն տարր: Դրա հետ միասին, անհրաժեշտ է վերացնել զուտ քննական-ստուգիչ մոտեցման մեթոդները կարմիր բանակայինների կուսակցության մեջ ընդունելու ժամանակ» (Բջիջների քարտուղարների համաբանակային 2-րդ խորհրդակցության վորոշումներից):

## ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՑ ԱՆԴԱՄ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Կոնֆերանսը նշում է, վոր ընթացիկ տարում մենք ունենք զգալի նվաճումներ կուսակցության թեկնածուներից անդամ փոխադրելու և ընդհանրապես անդամների ու թեկնածուների քանակական փոխհարաբերությունների կանոնավորման ասպարեզում: Ներկա տարում կուսակցության անդամները կազմում են 62,8%, թեկնածուները—37,2%, ընդդեմ անցյալ շրջանի 50,8% անդամների ու 49,2% թեկնածուների:

2. Արձանագրելով թեկնածուներից կուսակցության անդամ փոխադրելու թափի զգալի ուժեղացման փաստը, այնուամենայնիվ կուսկազմակերպություններում տակավին շարունակում են մնալ զգալի թվով ընկերներ, վորոնք անցել են թեկնածվական ստաժը: Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում արագացնել ստաժն անցած հին թեկնածուների կուսակցության անդամ փոխադրելու գործերի քննարկումը: Ստաժն անցած այն թեկնածուները, վորոնք պասիվ են դարձել ու չեն հայտաբերել իրենց վոչընչով ու վոչ մի բանում. պետք է հեռացվեն



ՀամԿԿ (բ) անդամության թեկնածուների շարքերից:

3. Անհրաժեշտ է ձգտել, վորպեսզի առավելագույն չափով ապահոված լինի բջիջների լարված ուշադրությունը դեպի յուրաքանչյուր առանձին թեկնածվի մշակումը, դեպի նրա աշխատանքը, կուսպարտականություններով ծանրաբեռնումը և միևնույն ժամանակ պարզելու համար, թե վորքան այդ աշխատանքը նպաստել է տվյալ թեկնածվի լենինյան դաստիարակությանը՝ նրան կուսակցության անդամ փոխադրելու համար:

Բանվորներից, բատրակներից ու չքավորներից թեկնածուների նկատմամբ անհրաժեշտ է ավելի մեծ չափով գործադրել անհատական կցման սիստեմը, վորը մեզանում շատ թույլ է դրված:

## ԿՈՒՍՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԿՈՄՍՈՄՈԼՈՒՄ ՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Նկատի ունենալով, վոր կոմյերիտականների ընդունելության վերջնական հաստատումը հանձնված է բանակի կուսմարմիններին, ինչպես նաև այն հանգամանքը, վոր կոմյերիտականների բողոքարկման դիմումների քննությունը վերապահված է

կուսհանձնաժողովին, կոնֆերանսն անհրաժեշտ ե գտնում, վորպեսզի կուսհանձնաժողովն իր գործունեության ընթացքում տարածի իր ղեկավարությունը նաև կոմսոմոլի վրա, ավելի մոտից ծանոթանա և ուսումնասիրի կոմսոմոլում յեղած հիվանդագին յերևույթները և ավելի մեծ հետաքրքրություն ցույց տա դեպի նրա աշխատանքի խնդիրներն ու դեպի սոցիալական կազմի կանոնավորումը:

2. Կոմսոմոլի աճման կանոնավորման ու դեպի նրանում յեղած հիվանդագին յերևույթների հարցերն ուշադրության ուժեղացման հետ միասին, կուսհանձնաժողովը պետք ե Քաղբաժնի հետ համաձայնեցրած իր նիստերում պարբերաբար քննարկի կոմյերիտական կազմակերպության դրության հարցերը և տա համապատասխան ցուցումներ պայքարելու համար կոմյերիտմիության մեջ յեղած հիվանդագին յերևույթների դեմ, բարելավելու համար նրա աճման ու սոցկազմի կանոնավորման հարցերը:

3. Ուսումնասիրելու համար կոմյերիտմիության մեջ յեղած հիվանդագին յերևույթները և պայքարը նրանց դեմ, աշխատանքների ընթացքում անհրաժեշտ ե ստեղծել սերտ կապ կոմյերիտական կոմխմբե-



րին կից կոնֆլիկտային հանձնաժողովների հետ, վորպիսի կապը չափազանց թույլ ե յեղել մինչև այժմ:

4. Անհրաժեշտ ե շարունակել կոմյերիտականների լավագույն մասին, մանավանդ բանվորներից, բատրակներից ու գերահասակներից, ուժեղ թափով ներգրավել կուսակցության շարքերը, վերացնելով կուսկազմակերպության պրակտիկայից կուսակցության մեջ միայն կոմյերիտմիության միջոցով ընդունելու կարգը:

## ՀԻՎԱՆԴԱԳԻՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1. Հիշատակելով ընդհանուր առմամբ դիվիզիայի կուսակցական կազմակերպության առողջ կացությունը, կոնֆերանսը միևնույն ժամանակ շեշտում ե կուսկազմակերպության մեջ մի շարք հիվանդագին յերևույթների գոյությունը, ինչպիսիք են՝ հարբեցողություն, կուսակցական եթիկայի խախտում, անփույթ, անպատասխանատու վերաբերմունք դեպի ռազմական ու կուսակցական պարտականությունները, կարմիր բանակայիններից փող պարտ վերցնելը,

խառնակչության (սկլոկա) տարրեր: Այդ հիվանդագին յերևույթների հետևանքով ընթացիկ տարում մենք ունենք կոնֆլիկտային գործերի զգալի աճում: 1928 թվի 9 ամսվա ընթացքում կուսհանձնաժողովում քննվել ե 52 գործ, ընդդեմ 1927 թվի 48 գործի:

Ընթացիկ տարում աճման տենդենցներ են ցույց տվել հետևյալ հիվանդագին յերևույթները.— հարբեցողություն ու կուսակցական եթիկայի խախտում (անցյալ տարում յեղել ե կուսակցական եթիկայի խախտման միայն մի դեպք, այս տարի՝ 5 դեպք): Միաժամանակ կոնֆերանսը նշում ե կուսակցությունից խորթ տարրերի հեռացվածների քանակի ավելացում (անցյալ տարի 1 դեպք, իսկ այս տարի՝ 9 դեպք): Նվազել ե կուսակցական կարգապահության խախտման համար պատասխանատվության կանչելու դեպքերի քանակը (ամբողջ 1927 թվի ընթացքում 9 դեպք, ընթացիկ տարվա 9 ամսում՝ 2 դեպք):

Կոնֆերանսը շեշտում ե, վոր մատնանշված հիվանդագին յերևույթների աճումը հետևանք ե մի կողմից՝ մեր յերկրի մանրբուրժուական միջավայրի ու տարրերի ճնշման դեպի մեր կուսկազմակերպության



ավելի թույլ և ավելի անկայուն անդամները և մյուս կողմից՝ ներկուսակցական պայքարի ու ինքնաքննադատության պատճառով մեր թերությունների ավելի անխնա հայտաբերման ու դեպի այդ թերությունները կուսակցական բջիջների ուշադրության սրման:

Կոնֆերանսն առաջարկում ե կուսհանձնաժողովին ուժեղացնել հիվանդագին յերևույթների պատճառների ու նրանց եության ավելի խոր ուսումնասիրությունը և միաժամանակ վճռական պայքար մղել բոլոր հիվանդագին յերևույթների և մանավանդ հարբեցողության դեմ, կիրառելով կուսակցական ազդեցության խիստ միջոցներ և կապելով այդ նախազգուշական դաստիարակչական միջոցների հետ:

2. Բացի վերոհիշյալ հիվանդագին յերևույթներից, մենք ունենք այդ յերևույթների մի «նոր» ձև ևս, այն ե՝ աչքակապություն և մասնակցությունը դրան՝ հաճախ կոմյերիտականների ու կուսակցականների կողմից:

Կոնֆերանսը նշում ե, վոր կուսակցական ու կոմյերիտական լայն մասսաները տակավին պատշաճ չափով չեն յուրացրել այդ յերևույթի ամբողջ վնասակարությունը

Կարմիր բանակի մարտունակության համար: Դրա համար անհրաժեշտ է ծավալել ամենալայն պայքար ընդդեմ աչքակապության, որպես մի յերևույթի դեմ, որն անմխանելի յե Կարմիր Բանակի նպատակներին և եյությանը և միևնույն ժամանակ կուսակցական կարգով պատասխանատվության կանչել այն կուսակցականներին, որոնք նկատված են, թեկուզ և փոքր չափով, աչքակապության մեջ:

3. Կոնֆերանսը նշում է, որ դիվիզիայի կուսակցական կազմակերպությունն իդեյական զոդման գործում ձեռք է բերել խոշոր նվաճումներ համակուսակցական ու քաղաքական, ինչպես նաև դիվիզիայի կուսակցական շինարարության ընդհանուր խնդիրների շուրջն ունեցած միասնական տեսակետի և այդ խնդիրների լուծման համար համերաշխ աշխատանքների հողի վրա: Դրա հետ զուգընթացաբար տակավին լինում են կուսակցականների մեջ զանազան պաշտոնեյական խավերից կտրվածության դեպքեր: Այդ հանգամանքի վրա անհրաժեշտ է կենտրոնացնել կուսակցական կազմակերպությունների ու ղեկավարող մարմինների ուշադրությունը:



## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՊԻ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ելնելով 3-րդ յերկրային գնդի կուսկազմակերպությունների աշխատանքի պայմանների առանձնահատկություններից, կոնֆերանսն առաջարկում է նորընտիր կուսհանձնաժողովին իր հետագա գործունեյության ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել գնդի կուսկազմակերպության աճման ու սոցիալական կազմի կանոնավորման վիճակի ու խնդիրների վրա, ավելի ևս ուժեղացնելով կենդանի կապը և պարբերաբար կուսհանձնաժողովում լսելով կուսբյուրոյի զեկուցումները:

2. Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում, որպեսզի կուսհանձնաժողովը Քաղբաժնի հետ միասին 3 ամիսը մեկ անգամ կատարի զորամասերի կուսկազմակերպությունների աճման, սոցիալական կազմի բարելավման ու փոխադրությունների ամփոփումները, և այդ առթիվ տա զորամասերին կոնկրետ դիրեկտիվներ, որպեսզի զորամասերը կարողանան այդ ամփոփումների, ինչպես նաև տվյալ շրջանի նվաճումների ու թերությունների հիման վրա կատարել կուսակցական կազմակերպությունների նորմալ ու առողջ աճում:

3. Կոնֆերանսը շեշտում է, որ կուսհանձնաժողովի կենդանի կապը կուսակցական մասսաների հետ ավելի ևս ուժեղացել է ընթացիկ տարվա վերջին ամիսներում, կազմակերպելով նիստեր գործարաններում, և պահպանելով անմիջական կապ ստորին բջիջների հետ. կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում ավելի ևս ուժեղացնել կապի այդ ձևը:

4. Կուսհանձնաժողովն իր լիազորությունների ժամանակաշրջանում պետք է պարբերաբար առնվազն յերկու անգամ հաշվի տա իրեն ընտրող կուսկազմակերպությունների առաջ՝ կատարած աշխատանքի համար:

5. Կոնֆերանսն անհրաժեշտ է գտնում, որպեսզի կուսհանձնաժողովն ավելի լայն չափով լուսաբանի ու մասսայականացնի իր գործունեությունը «Կարմիր Զինվոր»-ի եջերում և «Խորհրդային Հայաստան»-ի կուսկյանքի բաժնում:

6. Կոնֆերանսը նշելով կապի ու ղեկավարության թուլությունը կուսհանձնաժողովի կուստեղակալների հետ, անհրաժեշտ է գտնում ուժեղացնել այդ կապը:

---



## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ VII ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Խաչիկողլյան Թադեվոս Զախարի
2. Ստեփանյան Ստեփան Հովսեփի
3. Պարոնիկյան Մանվել Պետրոսի
4. Տ.-Դանիելյան Հովհաննես Անանի
5. Մամեդով Մամեդ Ալմաստի
6. Ղահրամանյան Սեդրակ Գրիգորի
7. Աբոյան Հակոբ Թադեվոսի
8. Գեվինյան Կարապետ Փիլիպոսի
9. Վարդանյան Իվան Աբգարի
10. Վասիլյեվ Վասիլիյ Ֆիլիպի
11. Հովսեփյան Շամիր Առաքելի

### ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

1. Ծատուրյան Տիգրան Բաղդասարի
2. Գյուլզադյան Գուրգեն Հակոբի
3. Պետրոսյան Աղաբեկ

---

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Շրջաբերական ԿԿԲ ԹՎ. . . . . . . . . . . . 3
2. Բանակի Համ. ԿԿ (բ) Անդրերկկոմի զեկուցման առթիվ . . . . . . . . . . . . . 4
3. Բանաձև ԲԳԿԲ Քաղվարչության զեկուցման առթիվ . . . . . . . . . . . . . . . . . 11
4. Բանաձև ԿԿԲ Քաղվարչության զեկուցման առթիվ . . . . . . . . . . . . . . . . . 26
5. Բանաձև ԿԿԲ հրամանատարի զեկուցման առթիվ . : . . . . . . . . . . . . . . . 64
6. Բանաձև ԿԿԲ Կուսհանձնաժողովի հաշվետվության առթիվ . . . . . . . . . . . . . 89
7. Կուսակցական VII կոնֆերանսում ընտրված ԿԿԲ կուսակցական հանձնաժողովի կազմը . 102

ՀԱՅԿ. ՀՐԱՁ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ VII ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

8. Ընկ. Հ. Կոստանյանի զեկուցման առթիվ . . 105
9. Բանաձև ԿԿԲ Քաղվարչության պետ ընկ. Վասիլյևի զեկուցման առթիվ . . . . . . 110
10. Բանաձև Հայկ. Հրաձ. Դիվիզիայի Քաղբաժնի աշխատանքի մասին զեկուցման առթիվ 120
11. Բանաձև Դիվկուսհանձնաժողովի զեկուցման առթիվ . . . . . . . . . . . . . . . . . 141
12. Դիվիզիայի Կուսակցական VII կոնֆերանսում ընտրված Դիվիզիայի Կուսհանձնաժողովի կազմը . . . . . . . . . . . . . 167

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Публичная Библиот...
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0048716

Резолюции VII конференций парторганизаций ККА и Арм. Стр. Дивизии

---

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՔԱՂԲԱԺՆԻ
ԽՄԲԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՍ